# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

36ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 3 (1753) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆՈՒԱՐ 30, 2016
VOLUME 36, NO. 3 (1753) SATURDAY, JANUARY 30, 2016

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Եւրոպայի Միութեան Դեսպանի Կարծիքով Խորհրդարանէն Եւ Կառավարութենէն Ներս Մեծ Թիւով Գործարարներու Ներկայութիւնը Շահերու Բախում Կը Յառաջացնէ

Յունուարի 25-ին, Երեւանի մէջ կայացած՝ «Ազգային Եւ Միջազգային Ջանքերը Կիրառական Էթիկայի Ոլորտում» թեմայով միջազգային խորհրդաժողովի ժամանակ, Հայաստանի մէջ Եւրոպայի Միութեան պատուիրակութեան ղեկավար, դեսպան Անտոնի Պեոտր Սւիտալսկին յայտարարեց որ, երկրի մը մէջ, որու խորհրդարանին մէջ կան մեծ թիւով յաջողակ գործարարներ, որու կառավարութեան մաս կը կազմեն մեծ թիւով գործարարներ ու հարուստ մարդիկ, շահերու բախման հարցը մեծ կարեւորութիւն կը պահանջէ:



Եւրոպայի Միութեան դեսպան Անտոնի Պեոտր Սւիտալսկի

Դեսպանի ըսաւ թէ, արժանաւորներու իշխանութիւնը չի կրնար կառուցուիլ, առանց պայքարելու մտերիմները իշխանութեան նշանակելու սովորոյթին դէմ:

«Որեւէ երկրի մէջ, ուր ընտանեկան կապերը ամուր են, այս մէկը լուրջ մարտահրաւէր է»,- ընդգծեց ԵՄ դեսպանը:

Ան կոչ ըրաւ աւելի լայն լիազօրութիւններ տալ բարձրաստիճան պաշտօնատար անձանց էթիկայի յանձնաժողովին, որ պէտք է ոչ միայն զեկոյցներով հանդէս գայ, այլ եւ քննութիւն կատարէ՝ չարաշահման դէպքերը բացայայտելու համար:

«Ազատութիւն» ռատիոկայանին տրուած հարցազրոյցի մը ընթացքին դեսպանը յայտնեց, որ Հայաստանի համար շատ կարեւոր է ունենալ լաւ ընտրական օրէնսգիրք, որ կ'արտացոլացնէ բոլոր առաջարկութիւնները, որոնք կատարուած են եւրոպական հաս-

Շար.ը էջ 4

## ԵԽԽՎ Մերժեց Մէկ «Ոչ Հայանպաստ» Բանացեւ, Վաւերացուց Երկրորդ Մը




Յունուար 26-ին, Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովը (ԵԽԽՎ) աւարտեց երկու «ոչ հայանպաստ» զեկոյցներու քննարկումը:

Անոնցմէ մէկը՝ Ռոբերտ Ուոլթըրի հեղինակած «Բռնութիւններու աճը Լեռնային Ղարաբաղի եւ Ատրպէյճանի այլ գրաւեալ տարածքներուն մէջ» վերտառութեամբ, մերժուեցաւ: Միւս փաստաթուղթը՝ Միլիցա Մարկովիչի կողմէ ներկայացուած՝ «Ատրպէյճանի սահմանային բնակչութիւնը միտումնաւոր զրկուած է ջուրէ» բանաձեւի նախագիծը՝ Սարսանգի ջրամբարի վերաբերեալ, ընդունուեցաւ, թէեւ ԵԽԽՎ-ի ձմեռնային նստաշրջանէն առաջ վեհաժողովին ուղղուած յայտարարութեամբ մը ԵԱՀԿ-ի Մինսկի Խումբի համանախագահները կոչ ըրած էին չձեռնարկել քայլեր, որոնք կը բարդացնեն ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման շուրջ բանակցային գործընթացը:

Բրիտանացի պատգամաւոր Ուոլթըրի նախագծի ընդունման ի նպաստ քուէարկեցին 66, դէմ՝ 70 խորհրդարանականներ, պոսնիացի Մարկովիչի նախագծին կողմ քուէարկեցին 98, դէմ՝ 71 պատգամաւորներ:

Ռոբերտ Ուոլթըրի պատրաստած զեկոյցին մէջ կոչ կը կատարուէր «դուրս բերել հայկական զինուած ուժը Լեռնային Ղարաբաղէն եւ Ատրպէյճանի միւս գրաւեալ տարածքներէն, հաստատել այդ տարածքներուն վրայ Ատրպէյճանի լիակատար ինքնիշխանութիւնը»: Հեղինակը կը յայտնէր, որ վերջին 20 տարիներու ընթացքին, ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման տեսանկիւնէն յառաջընթաց չէ արձանագրուած, եւ կոչ կը կատարուէր Մինսկի Խումբին՝ վերանայիլ կարգաւորման հետ կապուած սկզբունքներն ու մօտե-

Շար.ը էջ 5

## Ռուսաստանի ԱԳ Նախարար. «Ղարաբաղեան Կարգաւորմանն Մասին «Լաւրովի Փաստաթուղթ» Գոյութիւն Չունի»

«Ղարաբաղեան կարգաւորմանն մասին «Լաւրովի փաստաթուղթ» գոյութիւն չունի», Յունուար 26-ին Մոսկուայի մէջ կայացած մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարեց Ռուսաստանի արտաքին գործոց նախարարը՝ անդրադառնալով վերջին մի քանի ամիսներիուն շրջանառուող այն լուրերուն, որոնց համաձայն՝ բանակցութիւնները կ'ընթանան ռուսական կողմի ներկայացուցած կարգաւորման նոր սկզբունքներուն շուրջ:

«Լաւրովի կամ որեւէ այլ անձի անունը կրող փաստաթուղթ գոյութիւն չունի: Գոյութիւն ունին շարք մը փաստաթուղթեր, դրանք կը կարծեմ չորս հատ են, հինգը թէ վեցը՝ այժմ ես չեմ կարնար յստակ մտաբերել: Այդ փաստաթուղթերը համանախագահները նախապատրաստած էին Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգաւորման տարբեր փուլերու ընթացքին, երբ խօսք կար այն մասին, որ որպէս առաջին քայլ հարկաւոր է մշակել հակամարտութեան կարգաւորման հիմնարար սկզբունքներու փաթեթը, ապա նաեւ այդ սկզբունքներու հիման վրայ մշակել խաղաղ համաձայնագիրը, որն ալ արդէն իրաւաբանօրէն պարտաւորեցնող, այլ ոչ թէ զուտ քաղաքական բնոյթ կ'ունենար», - ըսաւ Սերկէյ Լաւրով՝ շարունակելով - «Ճիշդ այդ փաստաթուղթն է, որ 2007-էն 2010-11 թուականները ինկած ժամանակահատուածին որոշ ձեւափոխումներու ենթարկուեցաւ: Այդ փաստաթղթի տարբեր վարկածները փոխանցուած են ԵԱՀԿ-ի նախագահին եւ այժմ ալ կը գտնուին այդ կազմակերպութեան չհրկիզուող պահարաններու մէջ: Ասոնք են միակ թուղթերը, որոնք կարելի է փաստաթուղթ անուանել»:

Լաւրովի փաստաթուղթի կամ առաջարկի մասին խօսակցութիւնները սկսած էին անցեալ տարուայ աշնան, երբ Ատրպէյճանի արտաքին գործերու նախարար Էլմար Մամեդյարով յայտարարեց, թէ Ռուսաստանի արտաքին գործոց նախարարը Պաքու եւ Երեւան այցերու ընթացքին ղարաբաղեան կարգաւորման ուղղուած նոր առաջարկներ ներկայացուցած է:

Յունուար 26-ի ասուլիսի ընթացքին, Լաւրով շեշտեց որ, պաշտօնական Մոսկուան իր ջանքերը գլխաւորաբար կը կեդրոնացնէ այն հարցերու վրայ, որոնց շուրջ Ատրպէյճանն ու Հայաստանը դեռ չեն եկած վերջնական համաձայնութեան:

## ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԳԵՐՇ. ԱՐԱՄ ԱՐՔ. ԱԹԷՇԵԱՆ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՄԷՋ



Քանի մը օրէ ի վեր քաղաքս կը գտնուի Թուրքիոյ Հայոց Պատրիարքի փոխանորդ Գերշ. Արամ Արք. Աթէշեան Թեմիս բարեջան առաջնորդ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեանի հրաւէրով:

Պոլսոյ Հայոց պատրիարքի փոխանորդին գաղութիս տուած այցելութիւնը կը զուգադիպի նաեւ Թուրքիոյ Հայոց նախկին պատրիարք հանգուցեալ –

Արդարեւ, Կիրակի Յունուարի 24ին, 2016 հաւատացեալներու խուռներամ բազմութիւն մը ներկայ եղաւ Պըրպէնքի առաջնորդանիստ Ս. Ղեւոնդ Մայր տաճարի Ս. Պատարագին: Օրուան պատարագիչն էր Պոլսոյ Հայոց պատրիարքի փոխանորդ Գերշ. Արամ Արք. Աթէշեան: Սոյն հանդիսաւոր արարողութեան ներկայ էին Արեւմտեան Թեմի բարեջան առաջնորդ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեան, նախկին առաջնորդ Գերշ. Վաչէ Արք. Յով-

Շար.ը էջ 18

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Քաղաքական գործընթացների երկու սցենարները

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Դատելով Սերժ Սարգսեան-Հրանդ Մարգարեան բանակցութիւնների առաջին արձագանքներից, ՀՀԿ-ն առանձնապէս խանդավառուած չէ Դաշնակցութեան հետ կոալիցիա կազմելու (պարզ ասած՝ կերակրատաշտից բաժին տալու) գաղափարով:

Մի քանի բարձրաստիճան հանրապետականների արձագանքը ոչ միայն սառն էր, այլեւ բաւականին կոշտ՝ նրանք համարեա՛ բաց տեքստով յայտարարեցին, որ ՀՅԴ-ն «շատ փոքր է» իրենց հետ նախապայմաններով խօսելու համար: Ուշադրութիւն դարձրէք՝ սա առաջին դէպքն է, երբ Սերժ Սարգսեանի քայլը ՀՀԿ-ում հարիւր տոկոսանոց «աղաբրիամսի» չի արժանանում: Ի՞նչ է սա, լաւ բեմականացուած քաղաքական խա՞ղ, թէ՞ ՀՀԿ-ի ներսում իսկապէս Սերժ Սարգսեանի դէմ ապստամբութիւն է հասունանում: Երկու տարբերակներն էլ հաւանական են, ուստի քննարկենք առանձին-առանձին:

1. «Բեմականացում»: Այս հնարքը սովորաբար կիրառւում էր արտաքին քաղաքական խնդիրների դէպքում: Օրինակ՝ ամէն անգամ, երբ միջնորդները ղարաբաղեան կարգաւորման անընդունելի առաջարկներ էին ներկայացնում, Հայաստանում քաղաքական ուժերը բողոքի ալիք էին բարձրացնում, ինչն իշխանութիւններին թոյլ էր տալիս բանակցութիւնների սեղանի շուրջ ասել. «տեսնո՞ւմ էք, թէ երկրի ներսում ինչ է կատարւում, մենք պատրաստ ենք ընդունել ձեր առաջարկները, բայց ժողովուրդը չի ընդունի, մեզ հում-հում կ'ուտեն»: Կամ, ասենք, հայ-թուրքական բանակցութիւնների ժամանակ Դաշնակցութիւնը սիրուն միտինգներ էր անում՝ «Նախագահ, մի գիջիր» վանկարկումներով, եւ դա Սերժ Սարգսեանին հնարաւորութիւն էր տալիս բանակցութիւնների ժամանակ ասել. «տեսնո՞ւմ էք, ինչ մեծ զիջումների եմ գնում՝ չնայած բողոքներին»: Փաստօրէն՝ նոյն հնարքն էլ հիմա է կիրառւում: ՀՀԿ-ում իբր խիստ դժգոհ են ՀՅԴ-ի հետ կոալիցիա կազմելու ծրագրից, ինչն էլ Սերժ Սարգսեանին հնարաւորութիւն կը տայ բանակցութիւնների (սակարկութիւնների) ժամանակ դաշնակցականներին ասել. «մի քիչ զսպէք ձեր ախորժակը, ի՞նչ էք գլխներիցդ մեծ պահանջներ ներկայացնում, տեսնում էք՝ առանց այն էլ ՀՀԿ-ում մեծ դժգոհութիւն կայ, ինչ տալիս ենք՝ սուսուփուս վերցրէք»:

2. «Բունտ նաւի վրայ»: Սա նոյնպէս հաւանական տարբերակ է: Չի բացառւում, որ ոչ մի բեմականացում էլ չկայ՝ ՀՀԿ-ում իսկապէս դժգոհ են եւ չեն վախենում բարձրաձայն արտայայտել այդ դժգոհութիւնը: Շատերն, իհարկէ, կ'առարկեն, թէ «ՀՀԿ-ականները քանի՞ գլխանի են, որ Սերժ Սարգսեանի որոշմանը դէմ գնան», բայց այստեղ պէտք է հաշուի առնել, որ սահմանադրական փոփոխութիւններից յետոյ երկրում իրավիճակը լրջօրէն փոխուել է: Սերժ Սարգսեանի կախուածութիւնը կուսակցութիւնից եւ մասնաւորապէս՝ ՀՀԿ խմբակցութիւնից կտրուկ մեծացել է, որովհետեւ եթէ առաջ նա կարող էր «տոկոս խփելով» առաջնային մանդատ ձեռք բերել եւ դառնալ նախագահ՝ բացարձակապէս արհամարհելով երկրորդ էշելոնի ՀՀԿ-ականների կարծիքը, սրանից յետոյ այդպէս չի լինելու: Նրա իշխանութիւնը պահպանել-չպահպանելու հարցը կախուած է լինելու հենց այդ երկրորդ էշելոնից, այսինքն՝ մի 50-60 հոգուց: Ու բնականաբար՝ այդ 50-60 հոգին հասկացել են, որ իրենցից իւրաքանչիւրի քաղաքական կշիռը կտրուկ մեծացել է, եւ Սերժ Սարգսեանն արդէն ստիպուած է լինելու հաշուի նստել իրենց հետ: Դրա համար էլ որոշել են «ատամներ ցոյց տալ»: Եւ դա միանգամայն տրամաբանական է. «դէ՛հ, եթէ մենք ենք քեզ առաջին դէմք դարձնելու, բարի եղիր մեզ հետ քննարկել, թէ ում ես պատրաստւում բաժին հանել կերակրատաշտից»:

**Չի բացառւում, որ ոչ մի բեմականացում էլ չկայ՝ ՀՀԿ-ում իսկապէս դժգոհ են եւ չեն վախենում բարձրաձայն արտայայտել այդ դժգոհութիւնը**

Թէ իրականում այս երկու տարբերակներից որն է գործում՝ պարզ կը դառնայ արդէն առաջիկայում: Եթէ ՀՀԿ երկրորդ էշելոնի դժգոհութիւնը սովորական բեմականացում է, շատ արագ ամէն ինչ կը պարզուի, կոալիցիա կազմելու քաղաքական որոշման վերաբերեալ պաշտօնական յայտարարութիւն կ'արուի, եւ կողմերը կը սկսեն բանակցել «պատասխանատուութեան ոլորտների» (պարզ ասած՝ պորտֆելների քանակի) շուրջ: Իսկ եթէ ՀՀԿ-ի ներսում իսկապէս ապստամբութիւն է հասունանում, իրադարձութիւնները շատ աւելի դանդաղ կը զարգանան: Կոալիցիոն բանակցութիւնները կամ կը սառեցուեն, կամ «դինջ» ընթացք կ'ունենան: Թէ ինչու՝ հասկանալի է: Որովհետեւ Սերժ Սարգսեանին բաւականին ժամանակ պէտք կը լինի՝ հարազատ կուսակցութիւնում «ըմբոստութեան ծիլերը բացայայտելու եւ վնասազերծելու» համար (աւելի լաւ է դա անել հիմա՝ քանի դեռ ինքը նախագահ է, որովհետեւ 2017թ. ընտրութիւններից յետոյ բոլորովին այլ լիազօրութիւններով խորհրդարան կը լինի, եւ մէկ էլ տեսար՝ «խիարը թարս բուսնեց»):

Այնպէս որ՝ իրականում գործընթացները շատ աւելի լուրջ են: Եւ առանձնապէս կապ չունեն դաշնակցականներին տրուելիք կամ չտրուելիք մէկ-երկու պաշտօնների հետ:

«ՉՈՐՐՈԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

# Նոր սպառնալիք Նախիջեւանից

ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՅԵԱՆ

Ատրպէյճանի իշխանութիւնը որոշել է Նախիջեւանում ստեղծել արտաքին հետախուզութեան ծառայութիւն: Աւելի վաղ Նախիջեւանում ստեղծուել էր յատուկ համազօրային բանակ: Այս բանակին մասնագիտական աջակցութեան համար Թուրքիան գինուորականներ է ուղարկել Նախիջեւան:

Նախիջեւանն ինքնավար հանրապետութիւն է Ատրպէյճանի կազմում, որի կարգավիճակը երաշխաւորւում է 90 տարի առաջ կնքուած Ռուսաստան-Թուրքիա-Իրան եռակողմ համաձայնագրով: Նախիջեւանը իւրայատուկ անկլաւ է, իսկական տարածաշրջանային «խցան», եւ այս առումով նրա դերը ներկայիս զարգացումներում բաւական ուշագրաւ է դառնում:

Ըստ ամենայնի, Պաքուի որոշումները միտուած են Նախիջեւանն այդ դերին պատրաստելուն:

Խնդիրը կարելի է դիտարկել Ատրպէյճանի ներքին ու արտաքին որոշակի իրողութիւնների տեսանկիւնից:

Ատրպէյճանում ներկայում բարդ քաղաքական ու տնտեսական իրավիճակ է: Տեղի են ունենում բողոքի ցոյցեր, սկսուել է ներքաղաքական դաժան պայքար: Ալիեւը ամբողջովին փոխեց ազգային անվտանգութեան ծառայութեան ղեկավար կազմը, ունեզրկեց մի քանի խոշոր գործարարների, ձերբակալուեցին բարձրաստիճան զինուորականներ: Նա թերեւս փորձում է վերացնել այն հաւանական վտանգները, որոնք կարող են սպառնալ իր իշխանութեանը:

Նախիջեւանն Ալիեւների կլանի հայրենիքն է եւ «մեկնարկային կէտը»: Ալիեւի հայրը՝ Հէյդար Ալիեւը, ԽՍՀՄ փլուզումից յետոյ վերադարձաւ Նախիջեւան եւ այնտեղից երկրորդ անգամ վերցրեց իշխանութիւնն Ատրպէյճանում: Ի դէպ, այդ գործում զգալի դեր խաղացին նաեւ Հայաստանի այն ժամանակուայ իշխանութիւնները, եւ հայկական բանակի հարուածներից փլուզման եզրին հասած Ատրպէյճանում կրկին իշխանութեան եկաւ Ալիեւների կլանը:

Չի բացառւում, որ Իլհամ Ալիեւը նոյնպէս Նախիջեւանը պահում է որպէս «պահեստային» տարբերակ, եթէ Ատրպէյճանում իրավիճակը հասնի նրա իշխանազրկմանը:

Միւս կարեւոր հանգամանքը Իրանի պատժամիջոցների վերացումն է եւ նրա վերադարձը միջազգային ասպարէզ՝ լիարժէք խաղացողի կարգավիճակում: Իրանի բացումն ակնյայտօրէն հակասում է Թուրքիայի ու Ատրպէյճանի շահերին, որոնց արժէքը միջազգային ասպարէզում կարող է նշանակալի նուազել թէ աշխարհաքաղաքական, թէ տնտեսական առումով: Իրանի բացումը որոշակի առումով ձեռնտու չէ նաեւ Ռուսաստանին, քանի որ կապանքներից ազատուած Իրանն արդէն այլընտրանքի խնդիր չունի, այդ թւում ռազմական ու սպառազինութեան հարցերում:

Չի բացառւում, որ այս երեք երկրները կը փորձեն խոչընդոտել Իրանի ակտիւութիւնը մասնաւորապէս Հարաւային Կովկասի տարածաշրջանում, որն արդէն հարիւր տարի գտնւում է ռուս-թուրքական «ստատուս քուօյի» պայմաններում: Այս տեսակէտից Նախիջեւանը, որտեղով անցնում է մասնաւորապէս Հայաստանը Իրանին կապող երկաթուղին, կարող է զգալի դեր խաղալ այս գործընթացում:

Նախիջեւանում ստեղծուող առանձին բանակն ու արտաքին հետախուզութիւնը կարող են ուղղուած լինել այս խնդիրների իրականացմանը: Ակնյայտ է, որ այդ կառոյցներում զգալի է լինելու Թուրքիայի ներկայութիւնը, հաշուի առնելով, որ Նախիջեւանի սահմանին վերջին շրջանում ակտիւացել են քրդական կազմաւորումների ու թուրքական ուժերի բախումները:

Ըստ ամենայնի, Նախիջեւանի համար աշխարհաքաղաքական ազդեցութեան պայքարը կ'ուժեղանայ, նկատի առնելով նոր իրավիճակը տարածաշրջանում: Թուրքիայի ու Ատրպէյճանի համար Նախիջեւանը կարող է դառնալ պլացդարմ՝ Իրանի ու նաեւ Հայաստանի «զսպման» համար:

Հայաստանի ու Նախիջեւանի սահմանին Արցախեան պատերազմից ի վեր գրեթէ լարուածութիւն չի եղել: Սակայն նախորդ երկու տարիներին գրանցուեցին առանձին միջադէպեր, որից յետոյ հայկական կողմը գործողութիւն իրականացրեց այդ հատուածում՝ դուրս գալով նախընտրելի դիրքեր:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680
massis2@earthlink.net

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# «ՀՅԴ-ն Մեղսակից է Դառնում Ժողովրդի Դէմ Իշխանական Ահաբեկչութեանը».- Րաֆֆի Յովհաննիսեան




*Րաֆֆի Յովհաննիսեան Երեւանի մէջ շարունակուող ցոյցերէն մէկուն ընթացքին*

*ՀՀԿ-ի հետ կոալիցիա ձեւաւորելով՝ ՀՅԴ-ն մեղսակից է դառնում ժողովրդի դէմ իշխանական ահաբեկչութեանը: Այս մասին Ազատութեան հրապարակում «Ոտքի Հայաստանի» նախաձեռնութեան հրաւիրած հանրահաւաքին ասել է «Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանը՝ անդրադառնալով կոալիցիոն իշխանութիւն ձեւաւորելու շուրջ ՀՅԴ-ՀՀԿ բանակցութիւններին:*

*«Նրանք, ովքեր պիտի պաշտպանէին ժողովրդի իրաւունքը, օրէնքի կիրառումը երկրում, մեղսակից են դառնում հայ ժողովրդի դէմ ահաբեկչութեանը: Հնամեայ կուսակցութեան վերախաւը լուրջ դէմքով նայում է հայ ժողովրդին եւ սեփական անդամներին աշխարհով մէկ, եւ ասում՝ մենք ուզում ենք կոալիցիա կազմել յանցագործ, ահաբեկիչ, մաղրիդեան սկզբունքները հեղինակած եւ ընդունած իշխանական կուսակցական խմբի հետ»,- ասաց Րաֆֆի Յովհաննիսեանը:*

*Անդրադառնալով 2015թ. Նոյեմբերի 25-ին Նոր Մարաշում զինուած յանցաւոր խմբի վնասազերծմանը՝ Րաֆֆի Յովհաննիսեանը դա անուանեց բեմադրութիւն՝ նշելով, որ իրական ահաբեկիչները իշխանութեան անդամներն են, իսկ ձերբակալուածների մէջ արժանապատիւ մարդիկ կան:*

*Ըստ քաղաքական գործչի, եթէ այս տարուայ ընթացքում հայ ժողովուրդը չմիաւորուի ու չապահովի իշխանափոխութիւն, բռնութիւնն անխուսափելի է լինելու:*

# Իշխանութիւնը Հակուած է Էլեկտրոնային Քուէարկութիւնը Ամրագրել Նոր Օրէնսգրքով

*ԱԺ պետաիրաւական հարցերով յանձնաժողովի ղեկավար Յովհաննէս Սահակեանը պնդում է, որ էլեկտրոնային քուէարկութեան մոդելը ընդդիմադիր բոլոր ուժերի առաջարկն էր, որն այժմ իշխանութիւնը հակուած է ամրագրել նոր Ընտրական օրէնսգրքով, իսկ ընդդիմութիւնը սկսել է քննադատել այն, քանի որ 2017 թուականի ընտրութիւններին պատրաստւում է պարտուողի հոգեբանութեամբ: Այս մասին նա յայտնեց NEWS.am-ի հետ զրոյցում:*

*«Պարտուողի հոգեբանութեամբ գնալ 2017 թիւ ու ասել՝ էլեկտրոնային տարբերակը բաւարար չէ, եկէք ցուցակները հրապարակենք, ազնիւ չէ»,-ասաց Սահակեանը՝ պատասխանելով ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանի այն յայտարարութեանը, որ դա նոյնականացման քարտով քուէարկութիւնն է ընդամէնը:*

*Յովհաննէս Սահակեանը պնդում է, որ էլեկտրոնային քուէարկութեան առաջարկը, ընդդիմութեան պահանջն էր, որն այժմ իրենք փորձում են կեանքի կոչել:*

*«Էլեկտրոնային քուէարկութեան հետ կապուած խնդիր ինչ կա՞յ, երբ նոյնականցման քարտերի հետ կապուած ակտիւ քննարկում կար, եղաւ առաջարկ, որ լինի էլեկտրոնային քուէարկութիւն, ամբողջ ընդդիմադիր դաշտը բոլոր ընդդիմադիր խմբակցութիւնները պնդում էին, որ լինի էլեկտրոնային քուէարկութիւն: Հիմա, երբ որ էլէկտրոնային քուէարկութեան մասին են լսել, որը կրկնակիի քուէարկութեան դէմ պայքարի լաւագոյն միջոց էր համարւում, հիմա, այսպէս ասած, հոտը առել են, որ էլեկտրոնային քուէարկութիւնը կարող է կեանքի կոչուել, այդ ցանցը լինի, ասում են՝ չէ, դա բաւարար չի, կարծում եմ՝ ազնիւ չի»,-ասաց իշխանութեան ներկայացուցիչը:*

*Ընդդիմութեան գլխաւոր պահանջը քուէրակուած ցուցակների հրապարակայնացումն է, սակայն այս մտքի հետ կարծես չի հաշտւում իշխանութիւնը:*

*«Դուք վստա՞հ էք, որ քուէարկուած ցուցակների հետ կապուած որեւէ փոփոխութիւն չի լինի: Միայն լսել են, որ էլեկտրոնային քուէրակութեան որեւէ եղանակ է լինելու, կանխաւ սկսել են պայքարել դրա դէմ»,-ասաց պատգամաւորը:*

# «ՀՀԿ-ում Կայ Բացայայտ Դիմադրութիւն Սերժ Սարգսեանին»

*«Ժամանակ» թերթը գրում է որ, Հայաստանի Հանրապետական կուսակցութիւնը նախօրէին քննարկել է կոալիցիայի հարցերը եւ, դատելով ՀՀԿ խօսնակի դերը ստանձնած Գագիկ Մինասեանի յայտարարութիւնից, չի եկել որեւէ ընդհանուր յայտարարի: Մինասեանը յայտարարել է, որ քննարկումների շարունակութիւնը ցոյց կը տայ, թէ ինչ համագործակցութիւն կ'ունենան այլ կուսակցութիւնների հետ:*

*Այս պատկերը վկայում է, որ իշխանական նոր կոալիցիայի հարցում իրավիճակը իսկապէս բաւական բարդ է, եւ այստեղ Սերժ Սարգսեանի համար ընթացքը կարող է սահուն չլինել: Համենայն դէպս, ՀՀԿ-ն շարունակում է բաւական սառն ընդունել ՀՅԴ հետ կոալիցիոն համաձայնութեան մասին տեղեկատուութիւնը, եւ, ըստ ամենայնի, Սերժ Սարգսեանին չի յաջողուել ՀՀԿ գործկոմի նիստում համոզել կամ պարտադրել այդ պայմանաւորուածութիւնը ՀՀԿ-ին: Չի բացառւում, իհարկէ, որ Սերժ Սարգսեանը պարզապէս դա չի ուզում եւ ընդամէնը փորձում է սադրել նորանոր հակադրութիւններ՝ դրանց վրայ կառավարելու համար:*

# Զինուած Խմբի Գործով Մեղադրուող Անձանցից Հինգն Ազատուեցին Կալանքից

*Դատարանը, նախաքննական մարմնի միջնորդութեամբ, «Ռադիո Մարիամ» ռադիոկայանի լրագրող Լիլիթ Թորոսեանի, Հայկ եւ Հրանդ Վարդանեանների, 22-ամեայ Նելլի Մինասեանի եւ 30-ամեայ Սրբուհի Այվազեանի խափանման միջոց կալանքը փոխարինեց չհեռանալու մասին ստորագրութեամբ:*

*Նրանց փաստաբաններն «Ազատութեան»-ը փոխանցեցին, որ առաջադրուած մեղադրանքները մնում են նոյնը՝ յանցաւոր համագործակցութեանը մասնակցելը եւ ապօրինի զէնք պահելը, որը կատարուել է կազմակերպուած խմբի կողմից:*

*Ենթադրեալ յանցախմբի անդամները, սակայն, շարունակում են չընդունել իրենց առաջադրուած մեղադրանքները:*

*Յիշեցնենք, որ յունուարի 20-ին դատարանը որոշեց երկու ամսով երկարաձգել անցած տարուայ նոյեմբերից անազատութեան մէջ գտնուող 25-ամեայ Այսա Մկրտչեանի ու 34-ամեայ Մարինէ Կաթանեանի կալանքի ժամկէտը: Նախաքննական մարմինը նշել էր, որ նրանց նկատմամբ հիմնաւոր կասկածի առկայութիւնը շարունակում է մնալ: Երկու ամսով երկարացուել էր նաեւ Ազգային անվտանգութեան ծառայութեան (ԱԱԾ) կողմից որպէս զինուած խմբի ղեկավար ներկայացուող Արթուր Վարդանեանի կալանքի ժամկէտը:*

*Թէ որքան մարդ է կալանաւորուած այս գործի շրջանակներում՝ ԱԱԾ-ն հրաժարւում է տեղեկացնել, սակայն, փաստաբանների տեղեկութիւններով, անազատութեան մէջ գտնուողների թիւն անցնում է երեք տասնեակից:*

*Յիշեցնենք, ըստ Ազգային անվտանգութեան ծառայութեան, «բացայայտուած զինուած խումբը ծրագրել էր մի շարք բարձրաստիճան պաշտօնեաների եւ քաղաքական գործիչների սպանութիւններ իրականացնել»: Թէ խօսքն ում մասին է՝ ԱԱԾ-ն հրաժարւում է մանրամասնել: Մինչդեռ մամուլի հրապարակումների համաձայն՝ խումբը ծրագրել էր յարձակումներ իրականացնել նախագահի նստավայրի, Ազգային ժողովի, կառավարութեան եւ այլ պետական հաստատութիւնների վրայ:*

*Ըստ մամուլի, ծրագրուել էր նաեւ պայթեցնել Ֆրանսիա մեկնել պատրաստուող նախագահի ինքնաթիռը: Թէ ինչու է ԱԱԾ-ն որոշել այս գործի շրջանակներում խմբի անդամների մի մասին ազատ արձակել՝ պաշտօնական որեւէ պարզաբանում չկայ:*

*Ազատ արձակուած անձինք առայժմ հրաժարւում են հարցազրոյցներ տալ:*

# «2017-ի Ընտրութիւններում Յաղթող Ուժը Հանրապետականն է Լինելու». ՀՀԿ-ական Պատգամաւոր

*2017թ. խորհրդարանական ընտրութիւններում յաղթող ուժը Հանրապետական կուսակցութիւնն է լինելու: Այս մասին Յունուարի 26-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է ԱԺ ՀՀԿ խմբակցութեան պատգամաւոր Սուքիաս Աւետիսեանը՝ յաւելելով, որ այդ եզրակացութեանն է եկել կուսակցականների թուի, պետութեան ընդհանուր իրավիճակը վերլուծութեան արդիւնքում:*

*«Ճիշդ ժողովրդավարութիւնն այն է, որպէսզի երկրում իրավիճակը կանխատեսելի լինի, ոչ թէ անկանխատեսելի, մեզ մօտ այդպէս է: Լիդերներին տեսնում եմ նորից լիդերների շարքում, մարդ որը մեծ գործ է արել պետութեան կայացման համար, սխալ է ասել, որ նրան այլ պաշտօնում չի կարելի տեսնել»,-ասաց պատգամաւորը:*

# Սէյրան Օհանեանը Հերքել է Ռուսաստանից Սպառազինութեան Մատակարարման Խախտումները

*Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը հերքել է Ռուսաստանից սպառազինութեան մատակարարումների խախտումների մասին լուրերը:*

*«Գործընկեր-երկրների հետ ռազմական եւ ռազմատեխնիկական համագործակցութիւնն ընթանում է ըստ պլանի: Յատկապէս՝ Ռուսաստանի հետ», - ընդգծել է նախարարը: Նրա խօսքով, իրականացւում են նախկինում ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները: Նրա խօսքով, 2013-ի պայմանագիրը ենթադրում է հեռահար եւ ճշգրիտ սպառազինութեան եւ տեխնիկայի մատակարարումներ: «Ամէն ինչ իրականացւում է ըստ պլանի», - եւս մէկ անգամ հաւաստիացրել է Օհանեանը:*

## ԼՈՒՐԵՐ

### Լեւոն Տէր-Պետրոսեանը Ենթարկուել է Աղիքային Քաղցկեղի Վիրահատութեան

*Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը ԱՄՆ Կլէնտէյլ քաղաքում ենթարկուել է աղիքային քաղցկեղի վիրահատութեան:*

*Լեւոն Տէր-Պետրոսեանի գրասենեակի մամուլի քարտուղար Արման Մուսինեանը հաղորդագրութիւն է տարածել, որում ասւում է. «Ս.Թ. Յունուարի 15-ին Հայաստանի Հանրապետութեան հիմնադիր նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը ԱՄՆ Կլէնտէյլ քաղաքի Glendale Memorial հիւանդանոցում ենթարկուել է աղիքային քաղցկեղի վիրահատութեան: Վիրահատութիւնը կատարել են յայտնի բժիշկներ՝ վիրաբոյժ, դոկտոր Պետար Վուկասինը (Colorectal Surgery Institute) եւ ուռուցքաբան, դոկտոր Գալուստ Յուքարը (Pacific Shore Medical Group): Ետվիրահատական բուժումից յետոյ Տէր-Պետրոսեանը Յունուարի 24-ին դուրս է գրուել հիւանդանոցից:*



*Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան*

### Ամերիկայի Փոխնախագահը Հանդիպել է Ռաքէլ Դինքի հետ

*ԱՄՆ փոխնախագահ Ջո Բայդենը Թուրքիա կատարած այցելութեան ընթացքում հանդիպել է նաեւ Ռաքէլ Դինքի՝ «Ակօս» թերթի սպաննուած խմբագիր Հրանդ Դինքի այրու հետ: Այս մասին գրում է Daily Sabah-ը:*

*Լուսաբանելով ԱՄՆ-ի փոխնախագահի անցած շաբաթավերջին Թուրքիա կատարած այցը՝ թերթը նշում է, որ Բայդենը առանձին հանդիպում է ունեցել Ռաքէլ Դինքի, ինչպէս նաեւ Թիւրքան Էլչիի եւ Դիլեկ Դինդարի հետ: Թիւրքան Էլչին Դիարբեքիրի փաստաբանների ընկերակցութեան նախկին նախագահ Թահիր Էլչիի այրին է, նրա ամուսինը սպանուել էր 2015-ի Նոյեմբերի վերջին: Իսկ Դիլեկ Դինդարը Cumhuriyet թերթի գլխաւոր խմբագիր Ջան Դինդարի կինն է:*

*Cumhuriyet-ի գլխաւոր խմբագիրը ձերբակալուել է Թուրքիայի ազգային հետախուզական ծառայութեան (MIT) գաղտնի գործողութիւնը բացայայտելու համար: Լուսանկարներով հրապարակումը ցոյց էր տուել, որ Ազգային հետախուզական ծառայութեան բեռնատարներով անօրինական զէնք է տեղափոխւում Սիրիա:*

*Յունուարի 23-ին Ջո Բայդենը հանդիպել էր Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանի, ինչպէս նաեւ վարչապետ Ահմէտ Դաւութօղլուի հետ:*



*Ռաքէլ Դինքն իր ամուսինի մահուան 9-րդ տարելիցին առթիւ Պոլոյ մէջ տեղի ունեցած յիշատակի միջոցառման ընթացքին*

### Պերմյակովն Իրեն Մեղաւոր Ճանաչեց Առաջադրուած Բոլոր Մեղադրանքներուն



*Աւետիսեանների ընտանիքի սպանդի մէջ մեղադրուող Վալերի Պերմյակով դատավարութեան ընթացքին*

*Աւետիսեանների ընտանիքի սպանդի մէջ մեղադրուող Վալերի Պերմյակով իրեն մեղաւոր ճանաչեց առաջադրուած բոլոր մեղադրանքներուն՝ առանձնակի դաժանութեամբ իրականացուած սպանութեան, աւազակութեան եւ Հայաստանի պետական սահմանը յատելու փորձի:*

*Տուժողի իրաւայաջորդի ներկայացուցիչներն միջնորդեցին, որ որպէս ապացոյց՝ ռուսական կողմի յարուցած քրէական գործից փաստաթղթեր ընդգրկուեն այս գործի մէջ: Փաստաբան Միհրան Պօղոսեանը պահանջեց, որպէսզի դատարանը ռուսական կողմից պահանջի տուեալ գործով սեփական քննութեան փաստաթղթերը՝ հայկական գործին կցելու համար: Փաստաբան Լուսինէ Սահակեանն էլ միջնորդութիւն ներկայացրեց, որպէսզի դատաւորը պահանջի նաեւ տեղեկատուութիւն՝ արդեօք յարուցուե՞լ են քրէական գործեր այլ անձանց նկատմամբ, օրինակ՝ Վալերի Պերմյակովին զորակոչելու, զէնք տրամադրելու համար:*

*Դատարանը, որ նախորդ նիստերին չարունակաբար մերժում էր տուժող կողմի միջնորդութիւնները, այս մէկի քննարկումը յետաձգեց, ինչը է՛լ աւելի բորբոքեց կրքերը: Աւետիսեանների հարազատներն ու նրանց շահերի ներկայացուցիչները յայտարարեցին, թէ ռուսական ռազմաբազայի տարածքում գործը քննող դատաւոր Յարութիւն Մովսիսեանը կաշկանդուած է:*

### «ԵՏՄ-ից Հրաժարուելը Հայաստանի Համար Ինքնասպանութիւն կը Լինէր»

*Հայաստանի համար Եւրասիական տնտեսական միութեանն անդամակցութիւնից հրաժարուելն ինքնասպանութիւն կը լինէր: Այս մասին, նշել է տնտեսագէտ Թաթուլ Մանասերեանը:*

*Նրա խօսքով, որքան էլ ԵՏՄ-ն կայացման փուլում լինի, այդուհանդերձ, ԵՏՄ-ին այլընտրանք չկայ, որպէս հետխորհրդային տարածքում տարածաշրջանային տնտեսական համագործակցութեան կառոյցի օրինակ:*

*«Այլընտրանք չկայ նաեւ Հայաստանի համար, քանի որ մեզ անընդհատ փորձել են մեկուսացնել ցանկացած ինտեգրացիոն նախագծերից»,-ընդգծել է Թաթուլ Մանասերեանը:*

*Նրա խօսքով, 2015 թուականը դժուարութիւնների ու փորձութիւնների տարի էր: «Ռիսկերից գլխաւորն այն է, որ ԵՏՄ բոլոր երկրներում գերարժեզրկում է տեղի ունեցել: Ռուսական ռուբլին նուազել է մօտ 100 տոկոսով, ղազախական թենգէն՝ մօտ 90 տոկոսով, ինչը կախուած է այդ երկրների՝ ածխաջրածիններից կախուածութիւնից: Այդ երկրները պէտք է դիվերսիֆիկացնեն իրենց տնտեսութիւնը»,-նշել է Մանասերեանը:*

*Տնտեսագէտը յաւելել է, որ 2016 թուականը բարդ ու փորձութիւններով լի տարի է լինելու, որը սակայն կարեւոր հնարաւորութիւնների տարի է լինելու Հայաստանի, ինչպէս նաեւ ողջ տարածաշրջանի համար:*

### 2015-ին Կրճատուել է Ինչպէս Ներքին եւ Արտաքին Առեւտուրը

*«Ներմուծման ծաւալների անկումը, ինչպէս նաեւ ներքին մեր առեւտրաշրջանառութեան անկումը անուղղակիօրէն խօսում են բնակչութեան գնողունակութեան անկման մասին», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց տնտեսագէտ Բաբկէն Թունեանը:*

*Պաշտօնական վիճակագրութեան համաձայն, այնուամենայնիւ, աշխատավարձերը անցեալ տարի 1.9 տոկոսով բարձրացել են:*

*Բայց Թունեանի կարծիքով, այս չնչին բարձացումը գործազրկութեան բարձր ցուցանիշ ունեցող Հայաստանի բարեկեցութեան վրայ համարեա չի ազդել. - «Մեզ մօտ բնակչութեան մի ստուար հատուած ապրում է ոչ թէ աշխատավարձով, այլ այլ աղբիւրներից ստացած եկամուտներով՝ օրինակ, դրսից եկած տրանսֆերտներով: Այնպէս որ, բնակչութեան գնողունակութեան մասին խօսելիս, թէկուզ այս տուեալները հիմք վերցնելով, դա չի կարելի ամբողջ բնակչութեան վրայ տարածել»:*

*2015-ին կրճատուել են նաեւ Հայաստանի տնտեսութեան համար խիստ կարեւոր արտաքին տրանսֆերտներըզ միայն տարուայ առաջին կէսին դրանք նուազել են մօտ 280 միլիոն դոլարով:*

*Գործարար Սամսոն Գրիգորեանը եւս պնդում է, որ գոնէ իր յաճախորդները 2015-ին շատ աւելի քիչ գումար են ծախսել - «2015 թուականից սկսած, ամիս առ ամիս մենք զգացել ենք առեւտրի անկում, շրջանառութեան անկում: Հիմա՝ 2016-ը ինչ սկսուել է, ընդհանրապէս ահաւոր վիճակ է: Ես միայն իմ մասին չեմ խօսում: Ընդհանրապէս առեւտուրը ահաւոր ընկած է:*

*Ուրեմն մարդկանց ձեռքին գումար չկայ, գնողունակութիւնն ընկած է»:*

### Եւրոպայի Միութեան Դեսպանի Կարծիքով

*Շարունակուած էջ 1-էն*

*տատութիւններու կողմէ, եւ մասնաւորապէս, ԵԱՀԿ-ի կողմէ: Կարեւոր է, որ հայերը ամբողջովին հաւատան ու վստահին յաջորդ ընտրութիւններու արդարացիութեան: «Մենք՝ Հայաստանի միջազգային գործընկերները, պատրաստ ենք Հայաստանի իշխանութիւններուն հետ քննարկումներ ծաւալել՝ ընտրական օրէնսգրքի մշակման ուղղութեամբ: Մեր աջակցութիւնը կը յայտնենք ԵԱՀԿ առաջարկութիւններուն, եւ իւրաքանչիւր հնարաւորութիւն, հանդիպում, որ ես կ'ունենամ Հայաստանի իշխանութիւններուն հետ, կ'օգտագործեմ՝ ընդգծելու, որ հարկաւոր է ունենալ այնպիսի ընտրական օրէնսգիրք, որ նկատի կ'ունենայ եւրոպական հաստատութիւններու բոլոր առաջարկութիւնները:*

www.massisweekly.com
Updated every Friday

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ՕՔՍՖՈՐՏԻ ՄԷՋ ՍԿԻԶԲ ԱՌԱՒ «ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՆ» ԽՈՐԱԳՐՈՎ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Յունուար 21ի երեկոյեան Օքսֆորտի համալսարանի Pembroke քոլէջին մէջ իր աշխատանքը սկսաւ «Արեւմտահայերէնը 21-րդ դարուն» խորագիրը կրող համաժողով-աշխատանոցը, որ կազմակերպուած է «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկի Հայկական Բաժանմունքի տնօրէնութեան կողմէ: Կատարելով բացումը եւ ողջունելով հիւրերուն՝ համաժողովի կազմակերպիչներէն Օքսֆորտ համալսարանի Արեւելագիտութեան փաքուլթէտի Տքթ. Հրաչ Ջիլինկիրեան խօսեցաւ համաժողովի հրաւիրման դրդապատճառներու եւ նպատակներու մասին՝ նշելով, որ առաջին անգամն է՝ Եւրոպայի մէջ նման նիւթով մը համաժողով կը կազմակերպուի եւ մաղթեց, որպէսզի ան ըլլայ շարունակական:




Թէօ ֆան Լինտ ներկայացուց օրուան միակ բանախօսը՝ Ժընեւի համալսարանի Հայագիտութեան ամպիոնի վարիչ եւ Միջերկրական, Սլաւոնական եւ Արեւելեան լեզուներու եւ Քաղաքակրթութեանց Բաժանմունքի դասախօս Վալէնթինա Քալցոլարին, որ խօսեցաւ արդի հայերէնի խնդիրներուն մասին: Քալցուարի իր հետ բերած էր հայ մեծ հայագէտ Արսէն Այտընեանի (1825 - 1902) «Քննական Քերականութիւն Աշխարհաբարի կամ արդի հայերէն լեզուի» գիրքին բնօրինակը, ինչպէս նաեւ օրինակներով խօսեցաւ հայերէնին վերաբերող ներկայ ու անցեալ կարգ մը հարցերու մասին: Վալէնթինա Քալցոլարի աշխարհաբար հայերէնի որոշ հարցեր քննարկեց նաեւ Մարկ Նշանեանի մէկ ուսումնասիրութեան հիման վրայ: Իր անգլերէն լեզուով դասախօսութեան ընթացքին Ժընեւի համալսարանի դասախօսը հայերէնով կարդաց նաեւ Զարեհ Խրախունիի մէկ բանաստեղծութիւնը, իբրեւ արդի հայերէնով գրուած գրական գործ: Այնուհետեւ Վալէնթինա Քալցուարի պատասխանեց ներկաներու հարցումներուն:

Այսօր Օքսֆորտի նոյն քոլէջին մէջ համաժողովը կը շարունակէ իր աշխատանքը:

Այսօրուայ ծրագրին մէջ ներառուած են հետեւեալ նիւթերը՝

-Արեւմտահայերէնի ներկայ «աշխարհագրութիւնը». աշխարհաքաղաքական տագնապներու հետեւանքները եւ տնտեսական ընկերային մաքառումներու ազդեցութիւնը արեւմտահայերէն մշակոյթին ներկային ու յառաջիկայ տասնամեակներուն վրայ»:

-Սփիւռքի մէջ արեւմտահայերէնով մտածելու եւ ստեղծագործելու խնդիրներն ու մարտահրաւէրները՝ գրողին, ընթերցողին համար:

-Ինչպիսի՞ կառոյցներ, հաստատութիւններ եւ միջոցներ պէտք են գալիք տասը, քսան, երեսուն տարուան ընթացքին արեւմտահայերէնը կենսունակ պահելու համար:

# ԷՐՏՈՂԱՆԸ ՄԱՐԴԱՍՊԱՆ Է. ՆՈԱՄ ՉՈՄՍՔԻ

Թրքական «T 24» կայքը կը փոխանցէ, որ ամերիկացի նշանաւոր լեզուաբան եւ փիլիսոփայ Նոամ Չոմսքին սուր քննադատութեան ենթարկած է Թուրքիոյ նախագահ Էրտողանը, զայն անուանելով մարդասպան: Չոմսքի իր խօսքին մէջ նշած է, որ կասկած չկայ, թէ Էրտողան ինքն է քիւրտերու դէմ յարձակում գործելու հրահանգներ արձակողն ու ճնշումներ բանեցնողը, որ մարդասպանի գործ է, նշելով, որ իր խօսքը ծայրայեղ մենատիրական ռեժիմի մասին է:

Կը նշուի նաեւ, որ Էրտողան Թուրքիոյ մէջ խաղաղութիւն հաստատելու կոչին տակ ստորագրած թուրք եւ արտասահմանեան գիտնականներուն դէմ դատական հետապնդում արձակած էր, եւ այդ կոչի տակ ստորագրած գիտնականներու շարքին եղած է նաեւ Չոմսքին:



# ԿԱՐՕ ՓԱՅԼԱՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԱՆԴԱՄ

Թուրքիոյ մէջ սահմանդրական փոփոխութիւններու համար համաձայնութեան խորհրդարանական յանձնախումբը մը կազմուած է, որուն մաս կազմելու հրաւիրուած են նաեւ ընդդիմադիր կուսակցութիւնները: HDP Կիրակի օր իր համանախագահները ընտրելէ ետք, նորընտրեալ համանախագահ Տէմիրթաշը յայտնած է, որ կուսակցութիւնը մաս պիտի կազմէ նշեալ նոր յանձնաժողովին: Աւելի ուշ տեղեկացուած է, որ HDP կուսակցութիւնը ներկայացուցած է յանձնախումբը մէջ իր երեք ներկայացուցիչներու անունները, որոնցմէ մէկն է պոլսահայ երեսփոխան Կարօ փայլանը, իսկ միւս երկուքը՝ Միթհատ Սանճար եւ Մէրալ Պէրըշ-Պէշթաշ:




## ԵԽԽՎ Մերժեց Մէկ «Ոչ Հայանպաստ» Բանաձեւ

Շարունակուած էջ 1-էն

ցումները:

Շարք մը եւրոպացի պատգամաւորներ իրենց ելոյթներուն մէջ դիտել կու տային, որ Ուոլթըրը ներկայացուցած է միակողմանի փաստաթուղթ, որ կ՚արտացոլացնէ բացառապէս ատրպէյճանական կողմի դիրքորոշումը: Այլ խորհրդարանականներ եւս, կ՚ընդգծէին, որ բրիտանացի պատգամաւորը պարզապէս ներկայացուցած է պաշտօնական Պաքուի քարոզչութիւնը, որ իր փաստահաւաք առաքելութեան ընթացքին Հայաստան եւ Լեռնային Ղարաբաղ չայցելած Ուոլթըրը, նոյնիսկ չէ համագործակցած կամ խորհրդակցած Մինսկի Խումբի համանախագահներուն հետ, որու արդիւնքով ալ կազմած է ոչ իրատեսական փաստաթուղթ:

Երկրորդ՝ ընդունուած փաստաթղթին մէջ, Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանին մէջ գտնուող Սարսանգի ջրամբարը որպէս սպառնալիք ներկայացնող Մարկովիչը, առանց նոյնիսկ այցելելու Սարսանգի ջրամբար, կը պնդէ, թէ հայկական կողմը այդ ջրամբարը որպէս զէնք կ՚օգտագործէ, կը սպառնայ ատրպէյճանցիներուն եւ կը զրկէ անոնց, գիւղատնտեսութեամբ զբաղուելու կարելիութիւններէն:

Որքան ալ որ այս պատգամաւորը կը փորձէր խնդիրը ներկայացնել որպէս բնապահպանական, եւ մարդասիրական, այնուհանդերձ, ելոյթ ունեցող խորհրդարանականներէն շատերը կը յայտարարէին, որ Մարկովիչ հարցը կը շահարկէ, ստուերելով Մինսկի Խումբի գործունէութեան վրայ:

Քուէարկութենէն յետոյ, ԵԽԽՎ-ի հայկական պատուիրակութիւնը հաղորդագրութիւն տարածելով ընդգծեց, որ երկու բանաձեւերուն մէջ տեղ գտած ձեւակերպումները «համահունչ չէին միջազգային հանրութեան ու, առաջին հերթին, ԵԱՀԿ Մինսկի Խմբի համանախագահ երկիրներու՝ Ֆրանսայի, Ռուսաստանի եւ Միացեալ Նահանգներու կողմէ արտայայտած դիրքորոշումներին ու յայտարարութիւններին»:

Հայկական պատուիրակութիւնը յայտարարեց, որ խորհրդարանական վեհաժողովի անդամները, ըմբռնելով պահի պատասխանատուութիւնը, մերժեցին Ուոլթըրի «տխրահռչակ» բանաձեւը: «Ինչ վերաբերում է Սարսանգի վերաբերեալ բանաձեւին, ԵԽԽՎ մի շարք պատգամաւորներ, անտեսելով միջազգային հանրութեան կարծիքը, դրսեւորելով միակողմանի մօտեցում, քուէարկեցին դրա ընդունման օգտին՝ այդպիսով հումանիտար-տեխնիկական բնոյթի զեկոյցին տալով քաղաքական բովանդակութիւն», - յայտարարեցին ԵԽԽՎ-ի Հայաստանի պատուիրակները:



# ԿԵՑՑԷ՜ ԶԷՅԹՈՒՆ, ԱՊՐԻ՛ ԶԷՅԹՈՒՆ
## (ԶԷՅԹՈՒՆԻ ՅԱՂԹԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ 120 ԱՄԵԱԿ)



*19-րդ դարու վերջին ծաւալած հայ ազգային ազատագրական պայքարի սկզբնական փուլը անմիջականօրէն կապուած է Հնչակեան Կուսակցութեան հետ: Հայաստանի ազատագրութեան հետամուտ արեւելահայ ուսանողներ, երբ Ժընեւի մէջ կը մշակէին Հնչակեան Կուսակցութեան գաղափարախօսութիւնը, անոր մարտավարական ու ռազմավարական հարցերը, առաջնահերթ համարեցին յեղափոխական գործը սկսիլ նոյնինքն Հայաստանի տարածքէն՝ ճնշեալ հայ զանգուածները իրենց խոր թմբիրէն զարթնեցնելու նպատակով: Յեղափոխութիւնը նախեւառաջ կը պահանջէ գործ, գետնի վրայ հետեւողական եւ նպատակասլաց գործունէութիւն. եւ այդ գործին յաջողութեան համար՝ գործիչներ:*

*Հնչակեան Կուսակցութեան ծրագիրը, որ բաղկացած է երկու մասերէ՝ մօտաւոր եւ հեռաւոր նպատակներ, համապարփակ վերլուծութիւնն է կուսակցութեան գաղափարախօսութեան, քաղաքական եւ մարտական դաւանանքին: Մօտաւոր նպատակին յօդուածները կը պարզաբանէին յեղափոխական գործունէութեան այն ոլորտները, որոնք պիտի կիրարկուէին Օսմանեան Կայսրութեան տարածքին:*

*3-րդ յօդուածը կը նշէ.- «Ասպատակային գնդերի կազմութիւն, իբրեւ մշտական պատրաստի մարտական ույժ կառավարական զօրքերի կամ այլ վայրի ցեղերի յարձակումներին դիմադրելու համար, ժողովրդին պաշտպանելով: Ընդհանուր ապստամբութեան միջոցին այդ գնդերը կարող են կատարել առաջաւոր-գնդերի դեր»: Բնականաբար, այս ծրագիրին կենսագործման համար պարարտ ենթահող պիտի հանդիսանային այն վայրերը, որոնք նախապէս ունէին մարտական աւանդոյթներ, եղած էին յեղափոխաշունչ ակումբներ եւ կրնային շուտով ներգրաւուիլ ազատագրական պայքարի յորձանուտին մէջ: Թրքաքրտական հալածանքները, չարաշահութիւնները եւ սանձարձակութիւնները արդէն իսկ պութկումի եզրին հասցուցած էին հայ շինականն ու մշակը, սովորական քաղաքացին եւ մտաւորականը. ռայայի հոգեվիճակով կարելի չէր գոյատեւել: Մարտական խմորումները հետզհետէ կը շիկանային եւ կայծ մ՛իսկ հերիք էր բռնկելու եւ ընդվզելու համար:*

*Հնչակեան Կուսակցութեան գործիչները եղան մէկ-մէկ այդ կայծերը, որոնք յածելով Հայաստանի տարբեր շրջանները, հնչեցուցին ազատութեան կոչնակները՝ ի զէն հրաւիրելով յափշտակեալ եւ ազատաբաղձ հայորդիքը: Դժուար չէ երեւակայել անոնց անձնուիրութեան եւ անվեհերութեան սահմանները՝ քանզի դէմ յանդիման պիտի գային արնաթաթ Կարմիր Սուլթանին հորդաներուն, անոնց ժանգոտ շղթաներուն ու խոնաւ գնտաններուն:*

*Եթէ Ռուբէն Խանազատ եւ Գաբրիէլ Կաֆեան (Շմաւոն) որպէս շրջուն առաքեալներ ուղեւորուեցան զանազան շրջաններ, Մեծն Մուրատ եւ Միհրան Տամատեան ճամբայ ինկան դէպի Սասուն, Մօրուք Ժիրայր՝ Եոզկաթ, Գալուստ Արխանեան եւ Արամ Աչըգպաշեան՝ Փոքր Հայք, ապա՝ Աղասիին (Կարապետ Թուրսարգիսեան) վիճակուած էր Կիլիկիոյ հարաւային շրջանները եւ յատկապէս Զէյթունի գաւառակը:*

*Երկա՜ր ժամանակ, Զէյթունի կիսանկախ կարգավիճակը անհանգստութիւն կը պատճառէր սուլթաններուն եւ Զէյթունի յարակից փաշաներուն, որոնց կէտ-նպատակն եղած էր արեան մէջ խեղդել Կիլիկիոյ հիւսիսը՝ Տաւրոսեան լեռներուն թառած այդ արծուաբոյնը: Զէյթունցիք հանրածանօթ էին գինավարժութեամբ, չընկճուող ոգիով, խրոխտ նկարագիրով եւ աւանդապաշտ կենցաղով: Թրքական բոլոր խարդաւանքները ճզմելու Զէյթունը՝ ձախողեցան, ռազմական ոտնձգութիւնները՝ ի դերեւ ելան:*

*Օսմանեան Կայսրութեան դէմ բազմիցս ապստամբած Զէյթուն ունեցաւ երկու մեծ պատերազմներ՝ 1862-ին եւ 1895-ին: Երկուքն ալ համընդհանուր ոգեւորութիւն պատճառեցին հայկական բոլոր շրջանակներուն մօտ. Զէյթուն դարձաւ հոմանիշը ազատասիրութեան, հայրենասիրութեան եւ սխրագործութեան: Բանաստեղծներու եւ գուսաններու ներշնչման աղբիւրներ հանդիսացած Զէյթունն ու զէյթունցիք փառքով պսակեցին հայոց արժանապատուութիւնն ու ապրելու տարրական իրաւունքը: Քաջերու օրրանն էր ան եւ օրինակելի կղզեակը հայոց ազատամարտին:*

*Հնչակեան յեղափոխական Աղասի իր հինգ ընկերներով (Հրաչեայ Մարալ, Ապահ, Մլեհ, Նշան եւ Կարապետ՝ «հնչակեան վեց պարոններ» կոչուած) կազմակերպելով 1895-ի ապստամբութեան տարողութիւն ստացած ինքնապաշտ-*

*Շար.ը էջ 18*

# ՄԷԿ ԴԱՐ ՅԵՏՈՅ ԵՒ 128 ՏԱՐԻ ԱՆՑ

*Անցնող Նոյեմբեր, 2015-ին, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը՝ բոլորեց իր ծննդեան 128-րդ ամեակը, մինչ համայն հայ ժողովուրդը մեծ մաշտապով եւ աշխարհով մէկ նշեց իր դէմ գործուած անարգ ցեղասպանութեան 100-րդ տարելիցը:*

*Ցեղասպանութենէն 28 տարիներ առաջ, հայ ազգի խումբ մը «խենդ» նուիրեալներ, գալիք լուրջ եւ վտանգաւոր մարտահրաւէրները զգալով, միացան եւ ծնունդ տուին հզօր գաղափարի մը եւ հաւատամքի մը, որուն անմիջական կարիքը ունէր հայ ժողովուրդը:*

*128 տարիներ առաջ, ահազանգներու ընդառաջ ծնունդ առաւ հայ ժողովուրդի Մայր Կուսակցութիւնը, Ս.Դ.Հ.Կ.ը, տէր կենալու հայ ժողովուրդի իրաւունքներուն: Ահա այդ օրէն անցած է մէկ դար եւ 28 տարի:*

*Ինչու Ս.Դ.Հ.Կ.ը գոյատեւած է այսքան երկար, եթէ ոչ իր գաղափարախօսութեան հզօրութեան.*

*Ինչու մնացած է միշտ անշեղ, եթէ ոչ իր ամրապինդ կեցուածքներուն եւ անխախտ համոզումներուն.*

*Ս.Դ.Հ.Կ.ը 128 տարիներ ետք տակաւին կ՛ապրի՝ վասն հայրենիքի եւ հայ ժողովուրդի, ի գործ դնելով իր առաջին օրերու խտիալները եւ հաւատարիմ մնալով իր երդումին: Առաջին օրուայ նման խիզախ, յանձնառու եւ պատասխանատու:*

*Որքան ալ դժուար ըլլան պայմանները, կայ հզօր գաղափար մը որ մեզ արթուն կը պահէ, կը յուսադրէ եւ չ՛արտօնէր որ ննջենք:*

*Կայ համոզում մը, որուն համար հերոսացած են հազարներ եւ անմահացած:*

*128 տարուայ իր պատմութեամբ՝ Ս.Դ.Հ.Կ.ը կը մնայ կանգուն, հաւատալով որ գալիքը շարունակութիւնը պիտի ըլլայ նոյն պայքարին. պայքար ընդդէմ չարը, անարդարը եւ թշնամին:*

*Գալիքը պիտի ըլլայ հարիւր տարուայ աննահանջ պայքարի պտուղը եւ փարփարոմներու ձախողութիւնը, ուր հայը պէտք է ըլլայ աւելի տոկուն եւ վճռակամ:*

*128 տարի ետք, Ս.Դ.Հ.Կ.ի երդումը եւ խոստումը հայ ժողովուրդին՝ ի զօրու կը մնայ, նոյն եւ բարձր նուիրուածութեամբ: Պատմութիւնը հայելին է գործին, բայց տակաւին հայ ժողովուրդի առջեւ հսկայ դժուարութիւններ կան, ըլլայ սփիւռքի մէջ եւ կամ հայրենիքէն ներս:*

*Հարկ է անձնական շահերէ ետ կենալ եւ աշխատիլ Հայ Ազգի եւ հայրենիքի բարօրութեան համար,*

«Հոգ տանելով անոր եւ արդարութեան ձայնը միշտ բարձր պահելով,

պայքարելով անիրաւութեան եւ զրկանքի դէմ՝ հզօր ապագայի մը հեռանկարով.

Մեր ձեռք բերած անկախութիւնը պահելով եւ մնայուն խաղաղութեան կարչելով:»

*Բարի երթ դէպի 129 Ամեակ, դէպի առաւել պատասխանատուութիւն եւ յանձնառու աշխատանք:*

*Դէպի Հայ Ժողովուրդի պայծառ Ապագայ:*

*Լ.Մ.*




# Ո՞ՒՐ Է ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

***ՈՍԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ***

*Ո՞վ պատասխան պիտի տայ Ռուս Օրթոտոքս Եկեղեցւոյ պատրիարք Կիրիլի յայտարարութեան եթէ ոչ Եպիսկոպոսական Ժողովի համանախագահ՝ երկու կաթողիկոսները: Բոլորիս ծանօթ է հայկական մամուլէն որ անցեալ շաբաթ Հայաստանի մէջ ժողովրդական մեծ վրդովմունք յառաջացուց համայն Ռուսաստանի Պատրիարք Կիրիլի ա՛յն յայտարարութիւնը, թէ Օսմանեան Կայսրութեան մէջ քրիստոնեաներու հանդէպ ո՛չ մէկ հալածանք կատարուած է: Այնուհետեւ որքան ալ պարզաբանումներ կատարուեցան Ռուս Եկեղեցւոյ բանբերին կողմէ, չկարողացանք համոզուիլ ու ապա չհասկցանք թէ ի՞նչ էր շարժառիթը այս նորելուկ յայտարարութեան:*

*Ներկայի քաղաքական փափուկ եւ զգայուն պայմաններու ներքեւ, կը փորձենք հասկնալ եւ չենք ակնկալեր որ հայրենի պետութիւնը այս տխրահռչակ յայտարարութեան վերաբերեալ որեւէ մեկնաբանութիւն կատարէ, նամանաւանդ երբ պաշտօնապէս «մեղմացուցիչ դէպք յանցանաց» պարզաբանումներ կատարուեցան Ռուս Եկեղեցւոյ բանբերին կողմէ:*

*Սակայն եւ այնպէս ո՛չ թէ անհասկնալի՝ այլեւ դատապարտելի է նուիրապետական մեր երկու Աթոռներուն՝ Էջմիածնի եւ Կիլիկիոյ գահակալներուն լռութիւնը: Տակաւին երէկ էր՝ ուխտեցինք յանուն մեր նահատակներուն պահպանել մեզի աւանդ թողուած ամէն սրբութիւն: Հարիւրամեակի հոգեպարար հանդիսութիւններուն, աննախընթաց քայլարշաւներուն, գիտաժողովներուն, հազարաւոր հանդիսութիւններուն ոտնաձայները կը լսենք տակաւին: Մեր սրբացած նահատակներու յիշատակին վառած մեր մոմերը տակաւին կը պլպլան: Սրբատաշ հայկական տաճարներուն մէջ տակաւին կը ճենճերին խունկի հոտն ու աղօթքի մրմունջները: Այս բոլորին «գիտակից» մեր հոգեւոր ղեկավարութիւնը ինչպէ՞ս կրնայ լուռ մնալ մեր նահատակներուն յիշատակը արատաւորող այսպիսի խեղաթիւրուած յայտարարութիւններու նկատմամբ:*

*Ս. Էջմիածնի մամլոյ ծառայութեան ղեկավար Տ. Վահրամ Մելիքեան քահանայի հետեւեալ պաշտօնական յայտարարութիւնը նոյնքան անհանգստացուցիչ է եւ կը փոթորկէ մեզ իր այդքան տժգոյն, աժան եւ ողորմելի մեկնաբանութեան համար. «Մի բան յստակ է, որ պէտք չէ աւելորդ տեղը քաղաքականցնել այս ամէնը: Որովհետեւ միայն մի արտայայտութեամբ, որը նաեւ կոնտեքստից դուրս է հանւում, դատել ամբողջ եկեղեցու դիրքորոշման մասին, կարծում եմ, տեղին չէ: Առաւել եւս, որ այդ եկեղեցու դիրքորոշումը տարբեր առիթներով եւ տարբեր կերպերով մշտապէս արտայատուել է, եւ զօրակցութիւն ցուցաբերուել է թէ՛ հայ ժողովրդին, թէ՛ հայ եկեղեցուն եւ թէ՛ մեր հայրենիքին»:*

*Ի՞նչն է որ պիտի քաղաքականացնենք: Բացարձակ ճշմարտութեան մը խեղաթիւրումը պարզապէս բարոյական ապտակ մըն է մեր ժողովուրդին ուղղուած, այդ ալ անմիջապէս հարիւրամեակէն ետք: Մեր նպատակը պատմութեան դաս տալ չէ, այլ պարզապէս չէինք ակնկալեր որ համայն Ռուս Եկեղեցւոյ պատրիարքը կրնայ նման պատմական խոշոր սխալ մը թոյլ տալ, այդ ալ այս օրերուն, երբ ամբողջ քրիստոնէական աշխարհը դէմ յանդիման կը կանգնի իսլամական նոր արշաւանքներու, որոնք կը միտին տապալել քրիստոնէական եւ բարոյական ամէն ազնիւ սկզբունք:*

*Բացէք Օսմանեան պատմութեան էջերը եւ տեսէք թէ ինչպէս Ուղղափառ եւ Կաթողիկէ եկեղեցւոյ զաւակներ բռնի կերպով իսլամացան պալքանեան բոլոր երկիրներու տարածքին: Բիւզանդական Կայսրութեան մնացորդ յոյներ, Հայկական Բարձրաւանդակին վրայ հազարմեայ բնակութիւն հաստատած հայեր, ասորիներ ինչպիսի արհաւիրքներէ եւ սպանդներէ անցան իրենց քրիստոնէական կրօնքը չուրանալու համար, շատեր ալ իսլամացան, որոնց մասին տակաւին նոր գրեցինք մեր նախորդ յօդուածներէն մէկուն մէջ: Եւ այս բոլորը գիտնալով յայտարարել թէ Օսմանեան պետութեան տիրապետութեան տակ քրիստոնեաներ չեն հալածուած, - ինչ որ բացարձակ իրողութիւն մը է եւ տակաւին այսօր իսկ կը շարունակուի, Օսմանեան Պետութեան արժանաւոր յաջորդ եւ ժառանգորդ Թուրք պետութեան կողմէ,- անընդունելի է:*

*Չի բաւեր կարծէք պատմական այս խոշոր խեղաթիւրումը, արտասանուած Ռուսաց պատրիարքին կողմէ, ահաւասիկ Մայր Աթոռի բանբերը եկած է արդարացնելու եղածը եւ մեզի դաս տալու որ չքաղաքականացնենք հարցը: Ո՛հ ինչ սրտկամիտ հոգեբանութիւն: Անհանգիստ են մեր նահատակներուն ոսկորները....*

*Թէեւ այդքան ալ պէտք չէ զարմանանք կատարուածին վրայ, որովհետեւ շատ մօտիկ անցեալին, ցարական իշխանութեան միջամտութեամբ, որքա՜ն սրկացուցին Հայ Եկեղեցին, որուն՝ դժբախտաբար՝ անհատական եւ փառասիրական շահերէն մեկնելով իր ամբողջական մասնակցութիւնը բերաւ տխրահռչակ Ամենայն Հայոց Հայրապետ՝ Յովհաննէս Ը. Կարբեցին, որ իր նպատակին հասնելու համար ենթարկուեցաւ Ռուսաց տէրութեան եւ մեզի պարտադրուեցաւ Պոլոժէնիէն, որպէս Հայ Եկեղեցւոյ նոր կանոնագրութիւն: Նիւթէն շեղած կ՛ըլլանք եթէ աւելի մանրամասն խօսինք այս տխրահռչակ կանոնագրութեան մասին, որ ամբողջութեամբ եղծեց Հայ Եկեղեցւոյ ժողովրդապետական պատկերը:*

*Պատմութենէն մեզի ծանօթ է որ Ռուս Օրթոտոքս եկեղեցւոյ սկզբունքն է եկեղեցական իշխանութիւնը ենթարկեալ նկատել, եւ պետութիւնը ճանչնալ որպէս կրօնական եւ քաղաքական յարաբերութեանց գերագոյն վարիչ: Կարծէք մեր Մայր Աթոռի ներկայ վիճակը հայելին է այդ օրերու Ռուս Եկեղեցւոյ քաղաքականութեան: Նոյն ատեն դարձեալ պէտք է յիշեցնել, որ Ռուս Օրթոտոքս Եկեղեցին, բիւզանդական ըմբռնումներէն ժառանգուած՝ Հայ Եկեղեցին կը նկատէ աղանդաւոր, այսինքն Եւտիքեան, հակառակ ա՛յն իրողութեան որ Հայ Եկեղեցին նզոված է Եւտիքէսը:*

*Գիտակցելով վերեւ յիշատակուած բոլոր իրողութեանց, կը կարծենք որ Մայր Աթոռը պիտի չկարենայ բարձրացնել իր պաշտօնական ձայնը, որովհետեւ Ամենայն Հայոց Հայրապետութիւնը որպէս եկեղեցական իշխանութիւն ենթակայ է պետութեան եւ այսօր քաղաքական այս պայթուցիկ օրերուն չենք ակնկալեր որ իր խօսքը ըսէ: Սակայն եւ այնպէս չենք ալ ուզեր լսել արդարացուցիչ շինծու գնահատականներ:*

*Արտասահմանի մէջ նոյնը չէ պարագան, ուր կ՛ապրի հայութեան մեծամասնութիւնը, որոնց ստուար մէկ մասը ժառանգորդներն են ցեղասպանութենէն մազապուրծ փրկուած հայութեան բեկորներուն: Հետեւաբար՝ պարտաւորութիւնը կը ծանրանայ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.ի վրայ, որ երկար տարիներ վարած է Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (World Council of Churches) կեդրոնական վարչութեան ատենապետութիւնը, եւ տակաւին մօտէն հետեւելով՝ իր գործօն մասնակցութիւնը կը բերէ անոնց աշխատանքներուն: Որպէս ցեղասպանութենէն ճողոպրած հայու զաւակ, կրկնակի պարտաւորութիւն ունի բարձրաղաղակ դատապարտելու եւ զգաստութեան հրաւիրելու Կիրիլ Պատրիարքը: Ռուս Եկեղեցին, որպէս մէկ բաժինը քրիստոնէական ընդհանուր եկեղեցւոյ, իրաւունք չունի զանազան քաղաքական հաշիւներէ ելլելով՝ պատմականօրէն փաստուած ցեղասպանութեան եւ բռնի կրօնափոխութեան դէպքերը խեղաթիւրելու:*

*Ռուս Եկեղեցին պարտաւոր է Հայ Եկեղեցւոյ եւ ժողովուրդի տառապանքներու հանդէպ իր դիրքորոշումը անգամ մը եւս յստակացնելու եւ գործնականապէս ցոյց տալու որ ան, որպէս աւագ եղբայր, յատուկ հոգածութիւն կը ցուցաբերէ իր փոքր եղբօր նկատմամբ որ տակաւին կը սպասէ արդարութեան....*





## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ Ս. ԾՆՈՒՆԴԻ ԻՍԿԱԿԱՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍՓՌԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐՑԱԽԻ ՄԷՋ



Մեզմէ շատեր կը յիշեն թէ ինչպիսի անհամբերութեամբ կը սպասէին Ամանորի եւ Սուրբ Ծնունդի տօնակատարութիւններուն իրենց մանկութեան շրջանին: Անոնք իրենց համար լոյսերով, ժպիտներով, ուրախ երգերով եւ պարերով լի տարիներ էին: Անհամբեր կը սպասէին կաղանդ պապայի ժամանումին ու անոր բաշխած նուէրներուն: Դանդաղ կը բանային փաթեթաւորուած նուէրի տուփը եւ սրտի թրթիռով կը գննէին թէ ի՞նչ անակնկալ կայ անոր մէջ:

Մարդիկ այսօր այնքան տարուած են իրենց առօրեայ հոգերով, որ երբեմն կը մոռնան մանուկներուն պարզել իսկական Սուրբ Ծնունդի իմաստը: Սակայն Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը (ԱՀԱԸ) մոռցած չէ Հայաստանի եւ Արցախի մեր մանուկները: Արդէն երրորդ տասնամեակն է որ 40-է աւելի քաղաքներու եւ գիւղերու մէջ ԱՀԱԸ-ը կը կազմակերպէ Նոր Տարուան եւ Սուրբ Ծնունդի յատուկ հանդիսութիւններ՝ Դեկտեմբերի վերջին օրերէն մինչեւ ձմեռնային արձակուրդի աւարտը, հազարաւոր մանուկներու, պատանիներու եւ անոնց ծնողներուն համար: Այս տօնակատարութիւններով ԱՀԱԸ-ը կը հռչակէ Սուրբ Ծնունդի իսկական ուրախութիւնը եւ Աստուծոյ անհուն սէրը երգերով, արտասանութիւններով, խաղերով եւ յատուկ բեմադրութիւններով: Հանդիսութիւններու աւարտին իւրաքանչիւր մանուկ կը ստանայ Սուրբ Ծնունդի նուէրի արկղ մը լեցուն դպրոցական իրերով, գուլպաներով, քաղցրավենիքով, այլեւայլ խաղալիքներով, Սուրբ Ծնունդի պատմութիւնը ներկայացնող գունազարդ գիրքերով եւ այլ նուէրներով:

Յունուարի 8-ին եւ 9-ին ԱՀԱԸ-ի Երեւանի Կեդրոնին մէջ տեղի ունեցան յատուկ տօնակատարութիւններ, որուն ներկայ գտնուեցան աւելի քան 1500 մանուկներ եւ անոնց ծնողները: Զորս յաջորդական հանդիսութիւններով ԱՀԱԸ-ի «Հայասա» Դատերախումբը՝ Նունէ Աբրահամյանի ղեկավարութեամբ ներկայացուց գեղեցիկ եւ հետաքրքիր բեմադրութիւն մը՝ «Քեզ Ուրախութիւն Նուիրողը» խորագրով:

Յանուն ԱՀԱԸ-ի եւ հազարաւոր մանուկներու որոնք մասնակցեցան այս տօնակատարութիւններուն, կ՛ուզենք շնորհակալութիւն յայտնել բոլոր անոնց, որոնք նիւթապէս եւ իրենց աղօթքներով մասնակցեցան այս Ծնունդի ծրագիրներուն: Կ՛ուզենք նաեւ շնորհակալութեամբ յիշել բոլոր այն կամաւորները, որոնք ուրախութեամբ մասնակ-ցեցան հազարաւոր նուէրներ փաթաթելու աշխատանքին: Յատուկ շնորհակալութիւն Նէյսըն Ռանտոլֆի եւ Էյլ Ճիպիլեանի, որոնք համագործակցեցան այս նուէրները գնելու եւ Միացեալ Նահանգներէն Հայաստան առաքելու աշխա-տանքին: Էյլ Ճիպիլեանը մինչեւ իսկ Հայաստան մեկնեցաւ իր մասնակցութիւնը բերելու նուէրներու փաթեթաւորման աշխատանքներուն: Վերջին տարիներու անոնց համագործակցական աշխատանքներուն շնորհիւ ԱՀԱԸ-ի Ծնունդի ծրագիրները աւելի ամրապնդուած են եւ կը շարունակեն ծաւալիլ: Փառք կու տանք Աստուծոյ որ մեզի կարելիութիւնը կ՛ընձայէ Քրիստոսի սէրը ցուցաբերելու մեր Հայրենի մանուկներուն ամէն կարելի միջոցներով:

## ԼԻԲԱՆԱՆ
## ԴՈԿՏ. ՀԱՅՏՈՍԹԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ՝ «ՀԱՅԵՐՈՒՆ ԲԵՐԱԾ ՆՊԱՍՏԸ ԼԻԲԱՆԱՆԻՆ. ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐ ԵՒ ԴԱՍԵՐ» ՆԻՒԹՈՎ



ՄԻՐԱ ԽԱՐՏԸՄԵԱՆ

19 Յունուար 2016-ին, Հայկազեան Համալսարանը հիւրընկալելով լիբանանցի-բրիտանացի առեւտրականներու մէկ համախմբումը, Հայկազեան Համալսարանի սրահին մէջ ներկայացուց «Հայերուն Բերած Նպաստը Լիբանանին. Մարտահրաւէրներ Եւ Դասեր» խորագրեալ նիւթով դասախօսութիւն մը, ուր հանդէս եկաւ Համալսարանին Նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսթեան:

Համախմբումին Նախագահ Կրահամ Պոլնախ իր բարի գալուստի խօսքին մէջ ողջունելով մեծաթիւ լիբանանցի եւ բրիտանացի ակադեմական մասնագէտներու ներկայութիւնը, շնորհակալութիւն յայտնեց Հայկազեան Համալսարանի ազնիւ կեցուածքին համար, որ կը հիւրընկալէր 2016-ի իրենց տարեկան հանդիպում-հանդիսութիւնը:

Իր ոգեշնչող ուղերձին մէջ, Հայկազեան Համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսթեան բացատրեց բոլոր լիբանանահայերու զօրաւոր կապուածութիւնն ու կառչածութիւնը Լիբանանին, վեր առաւ լիբանանահայ համայնքին եզակի ու իւրօրինակ յատկանիշերը, լիբանանահայերուն բերած նպաստը այս երկրի բազմամշակութային դիմագիծին՝ պատմական հեռանկարը, ինչպէս նաեւ վառ ներկայութիւնը լիբանանահայ ականաւոր դէմքերու, որոնք ունեցած են առաջնորդողի ու ռահվիրայի գործունէութիւն լիբանանեան մշակութային, քաղաքական ու գիտական ոլորտներու մէջ:

Խօսելով լիբանանահայերուն բերած նպաստին մասին տեսողական եւ չօշափելի նիւթերու ընդմէջէն, Դոկտ. Հայտոսթեան յաւելեալ տեղեկութիւններով լոյս սփռեց լիբանանահայերու պատմական յարաբերութիւններուն եւ գոյատեւման վրայ տարածաշրջանին մէջ, սկսեալ Մեծն Տիգրան Թագաւորի օրերէն՝ Ք.Ա. 1 Թուականէն, մինչեւ դէպի Սուրբ հողեր առաջին հայերու ուխտագնացութեան տարիները՝ քրիստոնէական կրօնի տարածման վաղ ժամանակներուն, մինչեւ Հայ կաթողիկէներու հաստատումն ու ներկայութիւնը Քեսրուանի շրջան եւ հիմնադրութիւնը Զմմառու վանքին՝ 1771-ին, եւ մինչեւ Ա. Աշխարհամարտի ընթացքին հայերու զանգուածային բռնի տեղահանութեան ու տարագրութեան տարիները...:

Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսթեան նաեւ ներկայացուց Հայկազեան Համալսարանին յաջողութիւն արձանագրած պատմու թիւնը՝

Շար.ը էջ 14


ԿԱՅԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ՀԱՅ ՖԻԼՄԻ ՓԱՌԱՏՕՆ
Տեղի Կ'ունենայ Ամսուայ Առաջին Եւ Երրորդ Հինգշաբթի Օրերը
POKER.AM
GAIDZ Youth Organization – PRESENTS - GAIDZ Movie Night
ARMENIAN Film Festival; Every 1ST & 3RD Thursday of the Month

Հայ Կատակերգութիւն ֆիլմ;
Հինգշաբթի 4 Փետրուար 2016, երեկոյան ժամը 7:30-ԻՆ
ՀԿԲՄ Կարօ Սողանալեան Սրահէն Ներս
1060 N. Allan Avenue, Pasadena, CA
Մուտք՝ նուիրատուութիւն ներառեալ ընթրիք

Armenian Comedy Movie;
Thursday, February 4, 2016 at 7:30 pm
AEBU Garo Soghanalian Hall
1060 N. Allan Avenue, Pasadena, CA
Entrance Fee: DONATION, Included Dinner



# Massis Weekly

Volume 36, No. 3 Saturday, January 30, 2016

## PACE Rejects One Pro-Azeri Resolution, Approves Another



STRASBOURG (RFE/RL) -- The Council of Europe's Parliamentary Assembly (PACE) on Tuesday voted down a draft resolution demanding the unconditional restoration of Azerbaijan's "full sovereignty" over Nagorno-Karabakh and Armenian-controlled districts surrounding it.

Still, the Strasbourg-based assembly went on to adopt another controversial text that deplores "the occupation by Armenia of Nagorno-Karabakh and other adjacent areas of Azerbaijan."

The two resolutions were approved by the PACE's standing committees on political and social affairs in November. They were welcomed by Azerbaijan but strongly condemned by Armenia and Karabakh's Armenian-backed leadership.

The pro-Azerbaijani documents also prompted serious concern from the U.S., Russian and French mediators trying to broker a comprise solution to the Karabakh conflict. In a statement released late last week, the three co-chairs of the OSCE Minsk Group again warned the PACE against "undermining" their peace efforts.

Continued on page 4

## Armenia Continuing Military Buildup

YEREVAN -- Armenia is continuing to acquire "long-range and precision-guided" weapons for its armed forces thanks to its close military ties with Russia, Defense Minister Seyran Ohanian said on Tuesday.

"Within the framework of a relevant [Russian-Armenian] agreement signed in 2013, we are ensuring their development through the acquisition of modern and compatible weaponry, military hardware and long-range and precision-guided systems," he told a news conference. "All that is going according to plan."

Ohanian gave no details of those acquisitions that were apparently discussed last week in Yerevan at a meeting of a Russian-Armenian intergovernmental commission on bilateral "military-technical cooperation."

The four-day meeting was co-chaired by Konstantin Biryulin, the deputy head of a Russian government agency overseeing arms deals with foreign states, and Armenian Deputy Defense Minister Alik Mirzabekian.

The Armenian Defense Ministry said that the meeting discussed, among other things, Russian arms supplies. But it reported no concrete agreements to that effect.

In June 2015, the Russian government provided Yerevan with a $200 million loan that will be spent on the purchase of more Russian-made weapons for the Armenian army. Shortly afterwards, a Russian official revealed that the two sides are negotiating on the delivery of advanced Russian Iskander-M missiles to the Armenian army.

With a firing range of up to 500 kilometers, the Iskander-M systems would have significant implications for the military balance in the Nagorno-Karabakh conflict. They would make Azerbaijan's vital oil and gas infrastructure even more vulnerable to Armenian missile strikes in the event of a renewed war for Karabakh.

Russia has not exported such missiles to any foreign state so far. Ohanian and other Armenian military officials have been reluctant comment on the possible Iskander-M deal.

Ohanian on Tuesday did not deny media claims that the Russian-Armenian commission also discussed the possibility of supplying Armenia with advanced Russian Su-30 fighter jets. But he declined to elaborate.

Armenia's modest Air Force currently consists of more than a dozen older and less sophisticated Su-25 jets that are designed for air-to-ground missions.

Ohanian reportedly thanked Russia for its "huge" military assistance to Armenia when he met with Russian Defense Minister Sergey Shoygu in Moscow late last month. The two men signed an agreement on the creation of a new Russian-Armenian air defense system.

## Lavrov: No New Document on Karabakh Settlement



MOSCOW -- Russia has not initiated the adoption of any new documents on the principles of settlement of the Nagorno Karabakh conflict, Russian Foreign Minister Sergey Lavrov told a press conference in Moscow.

He reminded that there are several documents on the Karabakh settlement. "There are five or six documents the OSCE Minsk Group Co-Chairs have prepared at different stages of negotiations as a step towards a peace deal that will be of legally binding, not political character," Lavrov said.

"Different versions of this document have been deposited with the OSCE Secretary General and are kept in the deposits of that organization. Those are the only documents negotiated by the parties after the diplomatic contacts were resumed after a break with a view of "seeking solutions," the Russian Foreign Minister said.

"Such solutions are currently being searched for on the level of oral considerations. There have been several meetings with my Armenian and Azerbaijani counterparts. There are no documents other than the ones deposited with the OSCE. The rest is a search for solutions, a 'brainstorming'," Lavrov stated.

## OSCE Co-Chairs Warn PACE against Undermining Karabakh Negotiations



VIENNA (RFE/RL) -- Diplomats from the United States, Russia and France on Friday again warned the Council of Europe's Parliamentary Assembly (PACE) against undermining their efforts to resolve the Nagorno-Karabakh conflict with pro-Azerbaijani resolutions that will be debated in Strasbourg next week.

In a joint statement, James Warlick, Igor Popov and Pierre Andrieu stressed that that the OSCE Minsk Group co-headed by them "remains the only accepted format for negotiations."

"We appreciate the interest paid by PACE members, but urge that steps not be taken which could undermine the Minsk Group's mandate from the Organization for Security and Co-operation in Europe or complicate ongoing negotiations," they said.

The two draft resolutions on Karabakh were approved by the PACE's standing committees on political and social affairs in November. One of them was drawn up by Robert Walter, a pro-Azerbaijani British parliamentarian. It demands Karabakh's unconditional return to Azerbaijani rule and says that the three mediating powers should "consider reviewing" their peace efforts accordingly.

The other document drafted by Bosnian lawmaker Milica Markovic accuses Armenia of "deliberately depriving" Azerbaijani farmers of water flowing from the Sarsang reservoir in northern Karabakh. It too calls for "the immediate withdrawal of Armenian armed forces from the region concerned."

Armenia and Karabakh's leader-

Continued on pag4

## Presidents of Armenian and Iran Discuss Prospects of New Opportunities of Cooperation



YEREVAN -- Armenian and Iranian presidents, Serzh Sarkisian and Hassan Rouhani, on Sunday discussed in a telephone conversation the prospects of cooperation between the two neighboring countries after the lifting of international sanctions against the Islamic Republic.

"The presidents exchanged views on new opportunities for further developing bilateral ties in the light of the implementation of recent agreements on Iran's nuclear program," Sarkisian's office said in a statement on the phone call. "They also discussed the positive impact of these developments, which will strengthen regional security and stability."

Sarkisiann and Rouhani also discussed issues pertinent to the Armenian-Iranian friendly relations and cooperation, as well as a number of pressing issues of the international and regional agenda.

President Rouhani reaffirmed his government's commitment to closer cooperation with Armenia. He also underscored his country's readiness to work actively towards the strengthening of the good-neighborly, close partnership, expand and deepen cooperation with Armenia.

"The Islamic Republic of Iran and Armenia should exploit all available possibilities for reinvigorate bilateral relations," the Iranian Mehr news agency quoted Rouhani as telling Sarkisian. "In the post-sanction era, the path to increased economic collaboration has become clear," he said.

During the phone conversation, the presidents agreed also on the timetable of the forthcoming visits.

## Gyumri Massacre Defendant Pleads Guilty



The Russian soldier charged with killing an Armenian family of seven in Gyumri pleaded guilty to all grave accusations levelled against him as his main trial continued there on Friday.

Valery Permyakov will face a life sentence if a court in Armenia's second largest city convicts him of murdering a local couple, their daughter, son, daughter-in-law and two small grandchildren in January 2015. The 20-year-old conscript also stands accused of armed robbery and an attempt to illegally cross the Armenian-Turkish border.

Permyakov did not testify about the reasons why he deserted his unit with an assault rifle, broke into the Avetisian family's modest house and went on a killing spree there early in the morning. He told Russian military prosecutors last year that he had grown homesick and wanted to reunite with his family living in a small town in Siberia.

A Russian military court sentenced Permyakov to 10 years in prison for desertion in August. That trial began shortly after Russian authorities reluctantly agreed to place the separate murder case under Armenian jurisdiction.

Permyakov's Armenian trial is taking place, ostensibly for security considerations, at the Gyumri headquarters of the Russian military base in Armenia. The defendant has been kept there ever since his arrest.

Permyakov's guilty plea was followed by the cross-examination of two relatives of the murdered Avetisian family. It started from Rita Petrosian, whose sister Hasmik was among the victims and who was the first to enter the Avetisians' house after the massacre.

Araksya's father, Andranik Poghosian, was the next to take the stand, urging the court to ensure a fair trial. His testimony was accompanied by angry cries from other relatives present in the makeshift courtroom.

The trial was adjourned until January 29 after the surviving daughters of the murdered couple, Anahit and Lusine, told the court that they are too distressed to give testimony now.

## Former President Levon Ter-Petrosian Has Cancer Surgery in Glendale



YEREVAN (RFE/RL) -- Former President Levon Ter-Petrosian has undergone surgery for intestinal cancer at a hospital in the United States, his press secretary said on Monday.

In a written statement, Arman Musinian said the operation took place in Glendale Memorial Hospital in California on January 15. He said Ter-Petrosian was discharged from the hospital on Sunday and is now "continuing his recovery at relatives' home" in the U.S.

Ter-Petrosian and his family, Musinian went on, want to thank the surgeons and other hospital staff for their "professional medical assistance, special care and warm and humane attitude." The statement did not say when the 71-year-old politician will return to Armenia.

Levon Zurabian, the deputy chairman of Ter-Petrosian's Armenian National Congress (HAK) party, said on January 18 that the ex-president's illness is serious but "curable."

Ter-Petrosian served as independent Armenia's first president from 1991 to 1998. He set up the HAK in 2008 after contesting a hotly disputed presidential election as the main opposition candidate. The HAK has since been one of the country's leading opposition forces.

## Ambassador Arman Kirakosyan Urges Turkey to Listen to its Citizens



VIENNA (Mediamax) -- Head of Armenia's mission to OSCE, Ambassador Arman Kirakosyan has stated that Armenia is consistently supporting freedom of press and security of journalists and human rights defenders.

The Ambassador said this during January 21 meeting of OSCE Permanent Council, in his statement on the 9th anniversary of Agos newspaper's chief editor Hrant Dink's murder.

The Armenian Ambassador has shared OSCE Representative on Freedom of the Media Dunja Mijatovic's expectation according to which the masterminds behind Hrant Dink's assassination would be held accountable which would show the public the importance of fighting for freedom of expression and in defiance of violence against journalists.

Arman Kirakosyan has noted that intimidation of journalists, community leaders and human rights defenders in Turkey and inability to respond to the violence and intimidations creates impunity.

The Ambassador has positively assessed the fact that a considerable part of the Turkish society have taken to streets to mark the 9th anniversary of Hrant Dink's murder calling for punishing all the masterminds of the murder.

The Armenian representative has also urged the Turkish authorities to give an adequate response to the calls.

MEHER BABIAN, D.D.S.
General Dentistry
1111 S. Glendale Avenue
Suite 206
Glendale, CA 91205
Tel: (818) 547-0884
Tel: (818) 547-1476

## Legal Mission for the Recognition of the Independence of Artsakh

**ARMENIAN BAR ASSOCIATION EMBARKS ON LEGAL MISSION TO GAIN RECOGNITION OF THE INDEPENDENCE OF THE ARTSAKH REPUBLIC UNDER INTERNATIONAL LAW**

The Armenian Bar Association's 17 member Board of Governors has passed a resolution stating that an official policy of the organization is to help secure international recognition of the Nagorno-Karabakh Republic (Artsakh Republic) as an independent, sovereign state under international law.

To emphasize the Armenian Bar Association's commitment to secure under international law the right of self-determination of the citizens of the Artsakh Republic, the Board passed a further resolution which for the first time in its twenty-six year history, amended its mission statement to read as follows:

"A fundamental organizational purpose of the Armenian Bar Association is a commitment to take any and all steps permitted under international law to secure the recognition of the independence of the Artsakh Republic and to protect the right to self-determination of the people of the Artsakh Republic as guaranteed under international law."

The resolutions were initially proposed by Chairman Ex-officio Armen K. Hovanissian, Vice-Chair Saro K. Kerkonian, Co-Chairs of the Armenian Rights Watch Committee Garo B. Ghazarian and Karnig Kerkonian and past Chairman and long-standing Board of Governors member Edvin E. Minassian.

On the occasion of the passage of the historic resolution, Armenian Bar Association chairman, Harry H. Dikranian, of Montreal, Canada, stated that "Every day, with the utmost courage and determination, Armenian men and women are putting their lives on the line to defend their right, guaranteed under international law, to exercise their self-determination. Today, the members of the Armenian Bar Association vow to stand shoulder-to-shoulder with their brothers and sisters in Artsakh and offer their legal expertise to assist them in their just quest to seek international recognition of the territorial integrity and sovereignty of the Artsakh Republic. We encourage all Armenian organizations world-wide to join in this effort."

The Armenian Bar Association is the largest organization of Armenian attorneys, judges, law professors and other legal professionals in the diaspora. Founded by Raffi Hovannisian in 1989, for the past 26 years, through the work of its various committees, the Association has sought to promote the development of the rule of law in Armenia, defend the rights of Armenians anywhere through its Armenian Rights Watch Committee and provided free legal assistance to Armenian communities through the work of the Pro Bono Committee.

## Film on Anti-Armenian Pogroms in Azerbaijan Screens in Rhode Island




PROVIDENCE, RI -- On January 16, the screening of a documentary entitled "Century-old Genocide. Black January of Baku" was held in the capital city of the U.S. State of Rhode Island, Providence. The event was organized jointly by the Cultural Committee of the St. Sahak and Mesrop Armenian Church, Rhode Island's Memorial Committee, and the Armenian Refugees' Social and Economic Development Association (ARSEDA).

Permanent Representative of the Nagorno Karabakh Republic to the USA Robert Avetisyan, Rhode Island MP Catherine Kazarian, representatives of St. Sahak and Mesrop Armenian Church, journalists, Armenian refugees from Baku, and representatives of the local Armenian community participated in the event dedicated to the anniversary of the Armenian pogroms in Azerbaijan.

After the screening, Artsakh's representative in the USA Robert Avetisyan, Rhode Island MP Catherine Kazarian, ARSEDA Chairman Karen Baghdasaryan, and religious leaders delivered speeches. Member of the film's creative team Haykaram Nahapetian presented the details of the documentary.

After his speech, NKR Permanent Representative Robert Avetisyan answered the questions related to the Azerbaijani-Karabakh conflict, the negotiation process, and the problems of refugees.

Black JanuaryBaku"A century-long Genocide. Black January of Baku" is dedicated to the 25th anniversary of the Armenian pogroms in Baku. The film is based on interviews with refugees from Baku, recorded by a project crew in the United States. Yet only a small part of those witness accounts is used in the documentary.

The leading conceptual idea of the film is the tangible connection between those events in the early XX century in Ottoman Empire with what has been perpetrated against Armenians in Azerbaijan and Nagorno-Karabakh. The memoirs of those refugees about their ancestors affected in Western Armenia account for the continuity of Turkish policies at the hands of Azerbaijan, as well as for the continuity of the genocide of Armenians for over a century. The stories told by refugees unveil a lot more previously untold details of pogroms of Armenians in Baku. These accounts leave no doubts that violence and killings of Armenians began in Baku right after Sumgait, and January 1990 was just the culmination of genocide and expulsion of 250,000-strong Armenian population of Baku.

## Prominent Intelligence Officer Gohar Vartanian Celebrates 90th Birthday Anniversary



YEREVAN (Armenpress) -- Prominent intelligence officer, veteran of Russian Foreign Intelligence Service Gohar Vartanian, who made a big contribution in acquisition of the needed information for the country's national interests and safety, celebrates her 90th birthday jubilee on January 25.

Gohar Vartanian was born on January 25, 1926 in Leninakan (Gyumri) city. In the early 1930s, her family moved to Iran. At age 16, she entered her future husband and comrade-in-arms Gevork Vartanian's anti-fascist group and lead an active intelligence work with him.

In 1943 she participated in the operation for assuring security during the conference of the leaders of the "Big Three" Stalin, Churchill and Roosevelt. Hitler's special services had planned to assassinate the leaders of "Big Three" Stalin, Churchill and Roosevelt during their meeting in Tehran.

After careful planning and deliberation under the personal supervision of Nazi Security Police Chief Ernst Kaltenbrunner, Hitler sent his special commando agent, Otto Skorzeny, along with six other men to rendezvous at Tehran and spearhead the operation. The plan entailed the capture and/or assassination of Josef Stalin, Winston Churchill, and Franklin Roosevelt.

Gevork Vartanian had been assigned to recruit agents since 1940 in Iran. In 1940-41 Vartanian's team of seven intelligence officers had identified more than 400 Nazi agents, all of whom had been arrested by Soviet troops. In the autumn of 1943, they were assigned the task of ensuring the security for the upcoming Tehran conference. In their efforts to foil the assassination plot devised by the Nazis, Vartanian's group located six Nazi radio operators shortly before the conference opened on November 28, 1943. The German assassins had been dropped by parachute near the town of Qom, 40 miles from Tehran.

Vartanian later told the following details, "We followed them to Tehran, where the Nazi field station had readied a villa for their stay. They were travelling by camel, and were loaded with weapons. While we were watching the group, we established that they had contacted Berlin by radio, and recorded their communication... When we decrypted these radio messages, we learned that the Germans were preparing to land a second group of subversives for a terrorist act — the assassination or abduction of the 'Big Three'. The second group was supposed to be led by Skorzeny himself". All the members of the first group were arrested and forced to contact their handlers under Soviet supervision. The operation got off track and the main group led by Skorzeny never went to Tehran. This way the success of Vartanian's group in locating the Nazi advance party prevented the Nazi attempt to assassinate the 'Big Three'.

In 2003, relying on declassified documents, Yuri Lvovich Kuznets published a book called Tehran-43 or Operation Long Jump, which detailed Vartanian's role at the Tehran Conference. A Soviet film, Tegeran-43, which featured the French actor Alain Delon, was released in 1981.

In 1951, Vartanian couple returned to the USSR and in 1956 graduated from the Yerevan Institute of Foreign Languages. Then Gohar and Gevork Vartanians, under "Anita" and "Henry" pseudonyms, worked in private conditions in many countries. The spies returned to their homeland in 1986.

## San Diego' New Armenian Church Wins Unanimous Approval from California Coastal Commission




SAN DIEGO, CA – In a historic vote of 11-0, the California State Coastal Commission approved St. John Garabed Armenian Church's application to build a new church campus near Del Mar, California. The vote was taken on Thursday, January 14, 2016 in the San Diego County Board of Supervisors Chambers. The new campus, which will be built in stages over a period of several years, will include a sanctuary, social hall, education center, library, gymnasium, youth center, Armenian heritage park, picnic and meditation space, and abundant parking.

For more than one year, the church's application has been under review by Coastal Commission staff. The church made numerous revisions and adjustments to be in compliance with coastal regulations. In fall 2015, Coastal staff sent a report to the commissioners stating that the church had met all necessary requirements with the exception of two staff-recommended conditions. Condition 1A proposed that the height of the church be lowered from 85 feet to 50 feet. Condition 1B proposed that the location of the church be moved to the back of the property (on the south side) so it would be less visible, essentially screening it from view.

The Coastal Commission approved the application with an amending motion to delete Conditions 1A and 1B.

The new church property lies 1.8 miles from the ocean and encompasses a total of 13.4 acres. The project will be developing 4.23 acres of land while preserving 9.18 acres. The plan preserves the sensitive habitat and promotes the biological and scenic corridors of its coastal location.

Since its inception, $1.2 million has been raised in support of the project.

The history of this project dates back to 2008 when the Trust Fund Committee of St. John Garabed Armenian Church purchased close to 14 acres of premium property near Del Mar, California. On October 30, 2014, the project received unanimous approval by the City Planning Commission. The new property is located at 13860 El Camino Real in the City of San Diego between Del Mar Heights Rd. and Via de la Valle.

## PACE Rejects One Pro-Azeri Resolution

**Continued from page 1**

Following a heated debate in Strasbourg, the PACE narrowly rejected the more important of the proposed resolutions that was drafted by Robert Walter, a recently retired British lawmaker known for his strong support for the Azerbaijani government.

Walter's text called for a peaceful settlement that would start with "the withdrawal of Armenian armed forces and other irregular armed forces from Nagorno-Karabakh and the other occupied territories of Azerbaijan" and "the establishment of full sovereignty of Azerbaijan in these territories." It said that the OSCE Minsk Group should "consider reviewing its approach to the resolution of the conflict" accordingly.

The three mediating powers have been seeking a very different Armenian-Azerbaijani peace accord. Their Basic Principles of a Karabakh settlement envisage an internationally recognized referendum in which Karabakh's predominantly Armenian population would apparently be able to reaffirm the territory's de facto secession from Azerbaijan.

The other resolution, approved by the PACE over strong Armenian objections, accuses Armenia of "deliberately depriving" Azerbaijani farmers of water flowing from the Sarsang reservoir in northern Karabakh. It says that this "environmental aggression" necessitates "the immediate withdrawal of Armenian armed forces from the region concerned."

Several Armenian and other members of the PACE tried unsuccessfully to have the assembly remove or change these wordings.

Milica Markovic, the Bosnian author of the resolution, did not visit Armenia, Sarsang or other parts of Karabakh before drafting it. "Unfortunately, I did not have the opportunity to undertake a visit to Armenia, owing to the lack of cooperation of the Armenian delegation," she said during the debate.

In a statement issued later on Tuesday, the Armenian delegation at the PACE praised the Council of Europe body for blocking Walter's resolution but criticized it for approving the other "one-sided" document. Armenia's Deputy Foreign Minister Shavarsh Kocharian likewise charged that Markovic's resolution "pours water on the mill of Azerbaijani propaganda aimed at undermining the Nagorno-Karabakh peace process."

## AMAA Spreads True Christmas Joy in Armenia and Karabakh



PARAMUS, NJ -- Most people remember how they waited for Christmas and New Year's celebrations during their childhood. These holidays were filled with laughter, joy and songs. They anxiously waited for the arrival of Santa and the Christmas gifts. They slowly opened their Christmas gift boxes to see what kind of surprise was waiting for them.

Sometimes people indulge in their everyday life and forget to offer children the gift of true Christmas celebration. For over 30 years, the Armenian Missionary Association of America (AMAA) and the Evangelical Church of Armenia, however, have not forgotten the children in Armenia and Karabagh during the Christmas season.

During the 2015-2016 Christmas season, in more than 40 towns and cities in Armenia and Karabagh, Christmas and New Year's Programs were organized in the final days of December until the end of winter vacation for children, teens and their parents. Through these programs they shared God's love and "Christmas Joy" was brought to thousands of children and their families. The real message of Christmas was proclaimed through music, recitations, games and drama with the children presenting Christ's birth and conveying the meaning and importance of His birth, and by telling about the plan of God's salvation. Each program included a special visit from Santa distributing "Christmas Joy" boxes of school supplies, socks, candy, toys, Christmas story activity booklets, puzzles, coloring books etc.

The highlight of the Christmas Programs took place at the AMAA Center in Yerevan on January 8 and 9 for more than 1,500 children and their parents. Four presentations of a beautiful and exciting drama by AMAA's "Hayasa" Theatrical group entitled "The Giver of Joy" were staged and directed by Nune Abrahamyan.

On behalf of the AMAA and of thousands of participating children, we thank those who prayed for and contributed toward these Christmas programs. We are also very appreciative of all the volunteers who joyfully participated in the process of assembling the "Christmas Joy" boxes. We would especially like to recognize and thank Nelson Randolph and Al Jibilian, who coordinated the purchasing and shipping of the boxes and their contents, from the U.S. to Armenia. Al Jibilian even traveled to Armenia with volunteers from the U.S. to assist with the packing and assembling of the "Christmas Joy" boxes. Since their involvement over the last few years the Christmas Joy Program has strengthened and continues to grow. Most importantly, we praise God for enabling us all to reach out to these children with the love of Jesus Christ.

## OSCE Co-Chairs Warn PACE

**Continued from page 1**

ship have strongly rejected the proposed resolutions, saying that their authors have close ties with the Azerbaijani government and therefore cannot be impartial. Armenian criticism of Walter, who reportedly received Turkish citizenship and relocated to Turkey last year, has been particularly harsh.

The Minsk Group co-chairs also criticized Walter's resolution and warned the PACE not to "disrupt the negotiation process and impede progress towards a settlement" in a statement issued in November.

By contrast, Azerbaijan welcomed the proposed text. It also lambasted the U.S., Russian and French mediators, saying that their long-running peace efforts have produced "zero results."

Peace proposals made by the mediating powers over the past decade markedly differ from the Karabakh settlement advocated by the PACE committees. Their Basic Principles envisage an internationally recognized referendum in which Karabakh's predominantly Armenian population would apparently be able to reaffirm the territory's de facto secession from Azerbaijan.

The referendum would take place years after the return of virtually all seven districts in Azerbaijan proper that were fully or partly occupied by Karabakh Armenian forces during the 1991-1994 war.

# ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ ԱՊՐՈՂ, ԲԱԶՄԱՍՆՈՒՈՂ ԵՒ ԿԵՆՍԱՏՈՒ ԼԵԶՈՒ

**ԼՈՒՍԻՆԷ ԱՒԵՏԻՍԵԱՆ**
**Գրականագէտ, գրաբարագէտ, բանասիրական գիտութիւնների թեկնածու**

*Գրական երկու լեզուների շուրջ մտորումները օրինաչափօրէն ուղեկցւում են ուղղագրութեան խնդրին դէմառդիմումով, ասես ամէն անգամ յիշեցնելով, որ լեզուի ձայնագրութեան կերպը նոյնքան կարեւոր հանգամանք է՝ մասնաւորապէս երկուորեակ հայերէնները համագուգակցող իր նշանակութեամբ, եւ յատկապէս Սփիւռք-հայրենիք յարաբերութիւնները կիզակէտող դերով:*

*Անշուշտ, պետութիւնը կարեւոր, թէեւ ոչ միակ պայմանն է լեզուի զարգացման, լեզուի նկարագրի պահպանութեան համար: Դրան հակառակ՝ գրեթէ միաժամանակ մեր երկու գրական լեզուները ծանր ցնցումներ ապրեցին, արդիւնքում մէկը կորցրեց իր հողն ու հայրենիքը, միւսը՝ արհեստական պահանջ-պայմանների մամլիչի ներքոյ՝ իր դիմագիծը, ինչը նոյնպէս, ըստ էութեան, համազօր էր հայրենիքի մասնակի «կորուստի», թէեւ միաժամանակ այդ «կորուստը» պահանջուած փրկագինը եղաւ սպառնացող աւելի վատթար վտանգից ... Այդ պահերից ի վեր պարտադրուած ուղղագրութիւնը տարբեր եղանակներով հանգեցրեց գիտակցութեան մէջ բառարմատ-գաղափարների եղերական կորուստի՝ կաԲմ դրանք ածանցների վերածելով, ինչպէս՝ օրէն(ք)՝ կերպ, կարգ-ազատօրէն, ազնուօրէն, կամ խեղուած ձեւի մէջ տարրալուծելով եւ իսպառ անհետացնելով արմատը, ինչպէս՝ ի+օրին+ել (յօրինել, որն, ըստ էութեան, յիշեցնում է տիեզերքի եւ ամէն նոր յղացումի արարչական սկիզբը՝ անօրինակ մի բան օրինակ դարձնելը, օրէնքի ու կարգաւորման բերելը, յարդարելը) - յօրինել, կամ համահունչ արմատները միակերպելով, ինչպէս՝ հանգ (հանգ՝ շէջ, յանգ՝ եզր), հոտ (հոտ՝ բոյր, հօտ՝ ոչխարի բազմութիւն), սեր (սեր՝ կաթի, սէր՝ զգացմունք), հեղ (հեղ՝ լցնել, թափել եւ յեղ՝ շրջել, փոխել), գետ (աստղագէտ, Մեղրագետ), կամ առաջացնելով համաձեւ նոյնանուններ՝ արտաքնապէս համընկնող քերականական տարբեր ձ«եր, ինչպէս՝ -ա+վանդ-ավանդ (կրծքավանդակ-բարձրաւանդակ), -ա+վար-ավար (Նաւավար-ռազմաւար), կամ եւ այլն: Մինչդեռ այս գեղչումներին հակառակ՝ գրաբարում ի սկզբանէ իմաստային միեւնոյն դաշտից ծագած բառերը ժամանակի ընթացքում նշանակութեան եւ հնչական մակարդակներում միմեանցից հեռանալով՝ ստանում էին իրենց առանձնայատուկ նշանային պատկերը՝ այդպիսով հարստացնելով լեզուն, ընդարձակելով մտածողութեան ոլորտները, ծնելով ու բազմացնելով իմաստասիրութեամբ շողացող բառամարմիններ, կերտելով զուտ ազգային լեզուամտածողութեան իւրայատկութիւններ: Տեղին եմ համարում ներկայացնել գրաբարեան մէկ բառազոյգի մասին իմ մտորումը, որ վերը ասածիս դիպուկ օրինակ է: Նկատի ունեմ «հաշտ» եւ «յաշտ» բառերը: Նման բառազոյգերը բնորոշող լեզուաբանական մի եզր կայ՝ յարաբերակից, առնչակից, որ ֆրանսերէն բառով կոչւում է corrlatife: Այդպէս են անուանում միեւնոյն լեզւում երկու այնպիսի հնչիւնական յաջորդականութիւնները, որոնց կապը միմեանց հետ լեզուի ներկայ փուլում ոչնչով չի հիմնաւորւում եւ համարւում է երբեմնի գործող ձայնական ընդհանրութեան վերապրուկ կամ մնացորդ: Այս բացատրութեամբ նկարագրուող գրաբարում առկայ «հաշտ» (համերաշխ, խաղաղ, ներող եւ այլն) « «յաշտ» (զոհ, նուէր, ձօն, «յաշտ առնել»՝ զոհ մատուցել) բառային զոյգը սկզբնապէս, ամենայն հաւանականութեամբ, ծագել է միեւնոյն իմաստային դաշտից, իսկ հետագայում տարբերակումը շարունակ մեծացել է: Ի վերջոյ ի՞նչ է հաշտութիւնը, եթէ ոչ իւրատեսակ զոհաբերութիւն: Եւ զոհաբերումը, որ հոգեկան եւ ֆիզիկական գործընթաց-ծէսի նկարագրութիւն է, անհրաժեշտ եւ բաւարար պայմանն է հաշտութեան, իսկ հաշտութիւնը ինքնին արդիւնքն է զոհաբերութեան: Անգամ ինքնահաշտութիւնն է պահանջում զոհաբերութիւն՝ գաղափարի՝ յանուն աւելի մեծի, ձգտումի՝ յանուն աւելի բարձրի, մարմնի՝ յանուն հոգու... Բայց միշտ յանուն աւելիի: Ուստի ասուածն էլ բաւարար է՝ հիմնաւորելու, որ արմատների գեղչումը բերում է գաղափարների կորուստի:*

*Արմատների եւ գաղափարների կորուստից բացի՝ պարտադրուած ուղղագրութիւնը յաջողութեամբ նպաստեց երկու գրական լեզուները կրողների միջեւ անդունդի հետզհետէ մեծացմանը... 1913 թուականին հրապարակած իր «Մեր ուղղագրութեան մասին» ծաւալուն յօդուածում Մ. Աբեղեանը գրում է. «Միանգամ ընդմիշտ պիտի հրաժարուել ուղղագրութեան մէջ հիմնական փոփոխութիւններ մտցնելու ամէն ծայրայեղ մտքից, որով ցանկանում են (ընդգծումը՝ Լ. Ա.) մեր ուղղագրութիւնը խիստ հնչաբանական դարձնել, որովհետեւ այդպիսի մտքի գործադրութիւնը հաւասարազօր է մեր մեծ ջանքերով ձեռք բերած գրական լեզուներից հրաժարուելուն, առնուազն գոնէ երկու այնպիսի գրական լեզու ունենալուց, որոնք իրարուց անչափ հեռու կը լինին» : Նոյն յօդուածում աւելի վերը ասուած է. «Ուղղագրութիւնը միութիւն պիտի ունենայ, որպէս զի նոյն լեզուն խօսող մարդիկ կարողանան մէկմէկու գրած հեշտութեամբ վերծանել: Բացի այդ՝ բառերի պատկերները դարէ դար էլ չպիտի մեծ փոփոխութիւնների ենթակայ լինին, որպէս զի յաջորդ սերունդները չկտրուեն նախորդների հետ գրի միջոցով մտաւոր հաղորդակցութիւն ունենալուց: Եթէ չլինի ուրեմն ուղղագրութեան այս ընդհանուր եւ տեւական միութիւնը, չի կարող գոյութիւն ունենալ եւ մի ընդհանուր գրական լեզու: Հայերէնի համար աւելի մեծ է այս պայմանի նշանակութիւնը, քանի որ մենք ունենք այսօր երկու գրական լեզուներ, որոնք նոյնանում են գոնէ միակերպ ուղղագրութեամբ: Ուստի հենց սկզբից պիտի ասեմ, որ եթէ որ եւ է փոփոխութիւն պէտք է մեր ուղղագրութեան մէջ աւելի խառն դրութիւն մտցնի եւ մեր գրական լեզուներն իրարուց աւելի հեռացնի, աւելի լաւ է, որ չլինի» : Համոզուած լինելով, որ որոշակի մանր փոփոխութիւններ անհրաժեշտ է կատարել ուղղագրութեան մէջ, այնուամենայնիւ նա հաւաստիացնում է, որ այդ փոփոխութիւնները պէտք է անել գործնական նպատակներով, բոլորը գիտական հիմունքներով, նաեւ՝ որ դրանք պիտի համապատասխան լինեն երկու գրական լեզուներին ու ընդհանուր ընդունելի... Կատարուեց ճիշտ հակառակը... Լաւ, հասկանալի է, որ պարտադրաբար խախտուեց ուղղագրութեան ընդհանրութիւնը: Սակայն այսօր սա այն խնդիրն է, որ հնարաւոր է օր առաջ լուծել, եւ շատ լեզուաբանների ու գրականագէտների պատճառաբանութիւնները անհիմն են հնչում, թէ հսկայական գրականութիւն ստիպուած պիտի լինենք վերստին վերածելու դասական ուղղագրութեան, թէ անգրագիտութեան նոր ալիք է բարձրանալու Հայաստանում եւ այլն: Մի՞թէ ստիպուած չենք եղել Ղ. Աղայեանի, Րաֆֆիի, Յովհ. Թումանեանի ժառանգութիւնը, արեւմտահայ հարուստ գրականութիւնը, եւ, առհասարակ, շուրջ 1600-ամեայ մինչխորհրդային հսկայածաւալ գրականութիւնը վերածել աբեղեանական ուղղագրութեան, եւ մի՞թէ մի քանի տասնամեակում մի քանի անգամ ժողովուրդը ստիպուած չի եղել անգրագիտանալ՝ մինչեւ «Ցերեվան»ը վերջապէս դարձել է «Երեւան»: Նոր ուղղագրութեան տեւումը չի արդարանում նման պատճառաբանութիւններով, մանաւանդ եթէ նկատի ունենանք, որ վերադարձի արդիւնքում մեծապէս օգտուած ենք դուրս գալու, քանի որ աւելի մեծ արժէք ենք ձեռք բերելու. այն է՝ մեր արմատները վերագտնելուց զատ՝ մէկ քայլով եւս մօտեցումը Սփիւռքին, աւելի ճիշտ՝ մեր ինքնութեանը, պառակտման արհեստական պատճառներից մէկի ջնջում, ինչն էլ ենթադրում է հարազատացում ու մերձեցում, զոհաբերութիւն յանուն աւելիի... Աւելորդ եմ համարում այստեղ խօսել այն մասին, որ միասնական ուղղագրութեան անցնելու դէպքում երկուստեք դժուարութիւններ ենք յաղթահարելու, քանի որ անհրաժեշտութիւն է առաջանալու օրինակ՝ օտար անունների տառադարձման միօրինակացումի եւ այլն: Սակայն այսպիսի հարցերը համատեղ լուծելն աւելի դիւրին կը լինի:*

*Տեղին ու կարեւոր եմ համարում ընդգծել, որ լեզուն ցանկացած ազգի մեծագոյն արժէքն է, եւ ամէն գնով այն պահպանելու խնդիրը ոչ միայն մշտապէս լինելու է օրակարգում, այլեւ կարելի է ստեղծել հնարաւորութիւն՝ այն աւելի ճոխացնելու եւ կատարելագործելու:*

*Խօսքը մտքի արտայայտութիւնն է: Մինչդեռ լեզուն կատարեալ արտայայտութիւնն է մտածողութեան, այն բացայայտում է իրերի եւ երեւոյթների առնչութիւնների խորքում թաքնուած, ոչ ակնյայտ կապերն ու օրինաչափութիւնները: Մտածողութիւնը իր մարմնաւորման համար պահանջում է դրսեւորման որեւէ համակարգ՝ լեզու: Այն, որ ազգի ինքնագիտակցութեան մէջ առաջին ու ամենակայուն արժէքը լեզուն է, հաստատում է նաեւ Աստուածաշունչը՝ ցոյց տալով տարբեր ազգերի ծագման իր վարկածը, որը շարադրուած է Բաբելոնի աշտարակաշինութեան առասպելում: Ազգը ծագում եւ գոյութիւն է ունենում շնորհիւ լեզուի... Եւ այդուհետ ցանկացած ազգի ամենաապահով ապաստարանը նրա լեզուն է, որը ձայնագրիչն է նրա մտածողութեան եւ բրիչը նրա հոգեկերտուածքի... Պատմութիւնը հաւաստում է, որ եթէ հազարամեակներով պետականազուրկ եւ հայրենազուրկ ազգերը չեն վերացել պատմու-*

*Շար.ը էջ 20*



# ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ԵՐԱԶԱՅԻՆ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԱՍՏԱՆԷՆ
## «ՊՏՈՅՏ ՄԸ ՊՈԼՍՈՅ ԹԱՂԵՐՈՒՆ ՄԷՋ» (Բ)

*ՎԱՐԴԳԷՍ ԳՈՒՐՈՒԵԱՆ*

*«Տոլմա Պահճէ»ի Պալատը*

*Բառերով կարելի չէ Տոլմա Պահճէի (Լեցուած Պարտէզ) պալատը նկարագրել:*

*Գեղեցկօրէն հոյակապ եւ հոյակապօրէն գեղեցիկ է ան:*

*Գլխու պտոյտ տուող ճոխ գեղեցկութեամբ կանգնած է ան եւ այցելուներուն ուղեղները կը սառեցնէ:*

*Ճարտարապետներ Կարապետ եւ Նիկողոս Պալեանները (հայր եւ որդի) ոչ մէկ բան խնայած են Տոլմա Պահճէի պալատը աշխարհի ամենագեղեցիկ պալատին վերածելու: Մարդ կ՛ապշի որ ինչպէս կարելի է նման ճոխ երեւակայութիւն ունենալ եւ նման հրաշալիք մը ստեղծել Վոսփորի ափին:*

*Երբ մեր պասը Տոլմա Պահճէի քովընտի պասերու կանգառին մէջ կեցաւ, տեղատարափ անձրեւը մեզ մեր պասին մէջ գամած էր: Աւելի քան քառորդ ժամ սպասելէն ետք, որոշեցինք անձրեւին տակ վազելով պալատ մտնել: Երբ պալատ հասանք, անձրեւը կեցաւ...:*

*Տոլմա Պահճէի տեղը նախապէս Օսմանեան Նաւատորմին Նաւահանգիստներէն մէկը եղած էր: 1611-1614 թուականներուն, ծոցը լեցուցին եւ Սուլթան Ահմէտ Ա.-ի հրամանով «Պէշիկթաշ Պալատը» շինուեցաւ: Այս պալատին այրելէն եւ վայրը ժամանակ մը պարապ մնալէն ետք, Սուլթան Ապտուլմէճիտ Ա.-ը 1839 թուականին ճարտարապետ Կարապետ Պալեանին պատուիրեց նոյն վայրին վրայ նոր պալատ մը շինել, քանի որ վայրը ծովեզերեայ էր, շատ գեղեցիկ եւ քաղաքին կեդրոնին մօտ:*

*Պալատին շինութիւնը սկսաւ 1843-ին եւ տեւեց 13 տարի: Օսմանեան Կայսրութեան վերջին 6 սուլթանները այս պալատը գործածեցին, սակայն կարգ մը սուլթաններ իրենց համար աւելի փոքր պալատներ ալ շինեցին (ինչպէս Ելտըզի պալատը) եւ յաճախ կ՛երթեւեկէին պալատներուն միջեւ: Մուսթաֆա Քեմալ Աթաթիւրքն ալ երբ Իստանպուլ գար, մինչեւ իր մահը, (10 Նոյ. 1938) Տոլմա Պահճէն կը գործածէր որպէս իր բնակարանը եւ Նախագահական Պալատը: Ժամանակ մը պարապ մնալէն ետք, Պալատը վերածուեցաւ թանգարանի:*

*Տոլմա Պահճէի Պալատը շինուած է Փարիզի Լուվր եւ Լոնտոնի Պագինհկամ Պալատներու նմանողութեամբ, որպէսզի Եւրոպացի բարձրաստիճան այցելուներու ցոյց տրուի որ Օսմանեան Կայսրութիւնը «արդիականացած» է: Սակայն եւրոպական այս մոտիւներու վրայ աւելցուած է Օսմանեան զարթօնքի ճարտարապետական բարդ եւ ճոխ կերպերը:*

*Կը կարծուի որ 18-րդ դարու կիսուն, այս պալատին շինութիւնը պատճառ եղաւ որ Օսմանեան Կայսրութիւնը սնանկութեան դուռը հասնի:*

*Պալատին ներքնամասը ամբողջութեամբ զարդանկարուած է: Ֆրանսացի եւ Իտալացի արուեստագէտներ ոչինչ խնայած են գեղեցկագոյնը տալու: Հոն կը հանդիպինք նաեւ հայազգի Այվազովսկիի ծովանկարներուն:*

*Արձանագրուած է որ 14 թոն ոսկի եւ 40 թոն արծաթ գործածուած է պալատը զեղազարդելու: Կարասիներուն մեծ մասը ներածուած է Փարիզէն, մոմակալները Անգլիայէն, մարմարները Յունաստանէն: Բոլոր կարասիները մասնաւոր պատուէրներով պատրաստուած են: 131 մեծ եւ 99 փոքր գորգերը բոլորն ալ մասնաւոր չափերով հիւսուած են բարձրորակ մետաքսով, կայսերական Հէրէքէ գորգագործարաններու մէջ:*

*Պալատը ունի երեք մաս. ձախին «Սէլամլըք»ը, որ վարչական կեդրոնն էր, «Արարողութիւններու» (Ceremonial) կամ «Մեծ Դահլիճը» եւ անշուշտ Հարեմի բաժինը:*

*Տոլմա Պահճէին ընդհանուր տարածքն է 250,000 ք.մ.: Ան ունի 285 սենեակներ, 43 սրահներ կամ ժողովասրահներ, 6 պատշգամներ, 6 բաղնիքներ, 1427 պատուհաններ, 156 ժամացոյցներ, 280 վազեր (ծաղկաման), եւ 58 մեծ մոմակալներ: (Յիշեցնեմ որ Թուրքիոյ այժմու Նախագահ Էրտողանը 1100 սենեակներով Թուրքիոյ Նախագահական Պալատը շինած է, ինչուեւ, ապագայի ինչ ծրագիրներով ...:)*

*Երբ գլխաւոր սրահը մտանք,*



*հոն, առաստաղէն կախուած տեսանք 4.5 թոն ծանրութեամբ եւ 750 մոմատեղերով ջահ-աշտանակը (chandelier) որ նուիրուած էր Անգլիոյ Վիքթորիա Բ. Թագուհիին կողմէ: Կային նաեւ 1.5, եւ 2.5 թոն ծանրութեամբ սքանչելի աշտանակներ: «Արարողութիւններու Սրահ»ին գորգը, մետաքսով բանուած, 124 ք.մ. մեծութիւն ունի: «Յախճապակեայ Բազրիկներով Աստիճաններ»էն (Crystal Staircase) բարձրանալով շարունակեցինք մեր շրջապտոյտը: Բոլոր միջանցքներուն երկու ծայրերը մեծադիր հայելիներ կախուած էին, անշուշտ շատ ճոխ, ոսկեգոյն շրջանակներու մէջ անցուած: Ըսուեցաւ որ այդ հայելիները մասնաւոր, »սթրաթէճիք« վայրերու վրայ զետեղուած են որպէսզի Սուլթանները կամ Մեծ Վէզիրները, երբ երթեւեկէին միջանցքներով, հայելիներուն մէջէն եւ ետեւէն եկողները տեսնէին եւ յանկարծ չըլլայ որ մահափորձ գործադրուէր իրենց վրայ:*

*Մեր այցելութեան ժամանակ, կինս եւ Ալիսը, քանի մը անգամ մերիններէն խնդրեց որ շրջագայութեան ուղեկցորդներուն հարցնեն թէ ո՞վ է եղել ճարտարապետը աշխարհի այս ամենագեղեցիկ պալատին: Երբ տեսաւ որ «մերոնք» չեն հարցներ, ինք, ուղղակի ուղեկցորդին հարցուց, քիչ մըն ալ յանդուգն կերպով: Մարդը «Պալեան էֆէնտիլեր» ըսաւ: «Ինչեւէ կը վախնաք, չեմ գիտեր» եղաւ Ալիսի յանդիմանական ակնարկութիւնը եւ մեզի...:*

*Տոլմա Պահճէին դուրսը, պարտէզները... պէտք ունիմ նկարագրելու աւազաններուն, արձաններուն, ծառ ու ծաղիկներուն գեղեցկութիւնը, Վոսփորի կապոյտ ջուրերուն հետ համահունչ:*

*Հայերս շինենք, թուրք սրիկաները թող վայելեն: Եւ ցաւալին ան է, որ երբ օտար զբօսաշրջիկներ կու գան վայելելու այս եւ նման պալատներուն գեղեցկութիւնները, թուրքերը կը գովաբանուին որպէս «ճաշակաւոր» շինարարներ:*

*Եկուր ալ մի ջղայնանար:*

# «ՏՕՆԵՐ ԵՒ ՆՇՄԱՐՆԵՐ»
## ՀԵՂԻՆԱԿ ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

*2016ի տարեսկզբին լոյս տեսած է վերապատուելի դոկտ. Վահան Յ. Թութիկեանի կրօնաշունչ նոր հատորը «Տօներ եւ Նշմարներ» 159 էջերէ բաղկացած, որուն 104 էջը անգլերէն, իսկ մնացեալը հայերէն:*

*Գիրքին յառաջաբանէն կ՛իմանանք որ սոյն հատորը անուանի հոգեւորականի 38րդ աշխատութիւնն է: Գիրքի հայերէն բաժինը հեղինակը նուիրած է մեր եկեղեցական եւ ազգային կեանքին հետ աղերս ունեցող տօներու եւ խնդիրներու, որոնք կը պարունակեն քարոզներ, ոգեկոչումներ եւ յօդուածներ: Գիրքը կը կարդացուի հետաքրքրութեամբ եւ կը բաւարարէ կրօնական խնդիրներով, հետաքրքրուողներուն: Հոն կը լուսաբանուին մեր կրօնքին եւ եկեղեցիին հետ առնչուող կարգ մը հարցեր: Կը շնորհաւորենք վերապատուելի դոկտ. Վահան Յ.*




*Թութիկեանը, մաղթելով յաջողութիւններ, նորանոր հատորներ տալու ընթերցողներուն:*

*«Մասիս»*

# ԴՈԿՏ. ՀԱՅՏՈՍԹԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուածէջ 8-էն*

*Սփիւռքի տարածքին իբրեւ միակ հայկական սեփականութիւն վայելող կրթական բարձրագոյն կառոյց կամ համալսարան, վեր առնելով անոր 60 տարիներու խաղաղանպատակ դերակատարութիւնը, յատկապէս պատրաստելով ու դաստիարակելով լիբանանահայ երիտասարդութեան ապագան համերաշխական մթնոլորտի մէջ: Այս առումով, Դոկտ. Հայտոսթեան բերաւ օրինակը »Rocket Society«-ի (»Հրթիռի Ընկերակցութիւն«) հիմնումին՝ Հայկազեանի ատենի մաթեմաթիքի դասախօս եւ տեսլականի տէր Մանուկ Մանուկեանի ու անոր աշակերտներուն հետ համատեղ աշխատանքով, վաղ 1960-ականներուն, իբրեւ »ներքին գիտական ծրագիր«, որ յետագային աւելի զարգացաւ Լիբանանի Բանակին հետ միացեալ ճիգերով, ըլլալու Ազգային ծրագիր մը՝ կոչուելով »Լիբանանեան Հրթիռի Ընկերակցութիւն« (Lebanese Rocket Society):*

*Թուելով գէթ քանի մը յաջողակ լիբանանահայերու անուն նե րը՝ որոնք ուշագրաւօրէն իրենց կարեւոր նպաստը բերած են լիբանանեան ազգային ժառանգութեան վերաբերող կալուածին մէջ, Դոկտ. Հայտոսթեան ներկայացուց օրինակը անուանի հոգեբոյժ, Լիբանանի խորհրդարանի նախկին անդամ Տոքթ. Անդրանիկ Մանուկեանի, որ նշանակուեցաւ առաջին լիբանանցի տնօրէն յիմարանոցի (մտային խանգարում ունեցողներու ապաստանարան-բուժարան, արաբերէնով՝ »Ասֆուրիյէ«): Դոկտ. Հայտոսթեան նաեւ յիշեցուց անունները երկու նշանաւոր ճարտարագէտներու - Յարութիւն Գալայեանի՝ որ փորձագէտ-մասնագէտ ծանօթ անուն մըն է Պաալպէքի եւ Այնճարի հին աւերակներու վերականգնման աշխատանքներուն մէջ, ինչպէս նաեւ Մարտիրոս Ալթունեանի՝ որ իրագործելով այլ նշանաւոր կառոյցներ, ճարտարագէտն է Լիբանանի խորհրդարանի շէնքին շինութեան՝ 1931-ին, եւ »Ապըտ« ժամացոյցի աշտարակին՝ 1934-ին:*

*Եզրակացնելով եւ իր դասախօսութեան աւարտին կրկնելով իր խօսքը, Դոկտ. Հայտոսթեան ըսաւ. »Հայերը՝ Սփիւռքի մէջ ընդհանրապէս եւ Լիբանանի մէջ՝ մասնաւորապէս, ցոյց տուած են բարձր աստիճանի հաւատարմութեան չափանիշ, ջերմ փափաք ու նախանձախնդրութիւն՝ աշխատելու ազատութեան եւ ձեռնարկութիւն ստեղծողի մթնոլորտին մէջ: Անոնք կը շարունակեն ծառայել իբրեւ վառ ու կենդանի օրինակ ազգի մը, որ ողբերգութիւնը վերածած է զօրութեան, առիթը՝ ծանր ու յարատեւ աշխատանքի: Եւ մինչ, Լիբանանի ընկերաքաղաքական ու ազգային կեանքը կը դիմէ վերամիացումի աշխատանք, լիբանանահայ համայնքը միշտ ալ մաս կազմած է երկրի հպարտութեան՝ պահպանելով զօրաւոր զգացումը Լիբանանի բազմերես ինքնութեան դրուածքին մէջ, իր հարուստ մշակութային ժառանգութեամբ եւ յիշողութեան զօրութեամբ՝ նպաստելով եւ ծառայելով Լիբանանին«:*

## #OscarsSoWhite

*Ինչպէս ծանօթ է չաբաթասկիզբին յայտարարուեցաւ Օսքարներու թեկնածուներու ցանկը, որուն մէջ »The Revenant«ը առաջատար է 12 թեկնածութիւններով:*

*Նշենք որ Օսքարի 88րդ մրցանակաբաշխութիւնը տեղի պիտի ունենայ Փետրուար 28ին:*

*Սակայն Օսքարներու թեկնածութեան յայտարարութիւններէն յետոյ մեծ պոռթկում մը յառաջացաւ, երբ ամերիկացի դերասուհի եւ արտադրիչ Ճատա Փինքեթ-Սմիթ՝ Ուիլ Սմիթի կինը, խիստ վշտացած՝ ֆիլմարտադրութեան մարզի սեւամորթ գործիչներու նկատմամբ այս անարդարութեամբ, նկատի առած որ արդէն երկրորդ տարին անընդմէջ հիմնական անուանակարգերու մէջ յաւակնորդները բացառապէս սպիտակամորթ են՝ Facebook-ի իր էջով սեւամորթ գործընկերներուն կոչ ուղղեց պոյքոթել Օսքարի յանձնման այս տարուայ արարողութիւնը: «Օսքարին սեւամորթները յաճախ կը գուարճացնեն հանդիսատեսն ու մրցանակները կը յանձնեն, իսկ մեր դերասանական ձեռքբերումները հազուադէպ կ'ընդունուին: Գուցէ արժէ, որ սեւամորթները զերծ մնան մասնակցութենէ: Մարդիկ մեզի հետ կը վերաբերին այնպէս, ինչպէս մենք անոնց թոյլ կու տանք, որ վերաբերին»,- գրած է դերասանուհին:*

*Սմիթի այս կոչին շուտով արձագանգեց ամերիկացի յայտնի բեմադրիչ եւ դերասան Սփայք Լի, որ անցեալ տարի պատուաւոր Օսքարի արժանացած էր: Ան եւս պատրաստակամութիւն յայտնեց պոյքոթելու Օսքարներու մրցանակաբաշխութիւնը:*

*«Չեմ ուզեր անյարգալից թուալ իմ ընկերներուն՝ հաղորդավար Քրիս Ռոքի, արտադրիչ Ռեճի Հատլինի, ֆիլմարուեստի ակադեմիայի նախագահ Շերիլ Պուն Այզըքի եւ Ակադեմիայի անդամներուն նկատմամբ: Բայց ինչպէ՞ս հնարաւոր է, որ երկու տարի շարունակ դերասանական անուանակարգերուն մէջ միայն սպիտակամորթ դերասաններ ըլլան: Ես նոյնիսկ հաշուի չեմ առներ միւս մրցանակաբաշխութիւնները: 20 տարուան մէջ 40 սպիտակամորթ դերասան եւ ոչ մէկ սեւամորթ»:*

*Բացի այդ, Twitter-ի ցանցին վրայ դարձեալ սաստկացած է անցեալ տարուընէ մեկնարկած #OscarsSoWhite արշաւը:*

*Շարունակելով արձագանգները, Ճորճ Քլունի եւ Լիւփիթա Նիոնկօն իրենց կարգին*

*պատրաս տա կամութիւն յայտնած են պոյքոթելու այս հեղինակաւոր մրցանակաբաշխութիւնը, որոնց յաջորդած է Ուիլ Սմիթը, որ զօ րակցած է իր կողակիցին: Իսկ 50 Cent-ը հաղորդավար Քրիս Ռոքին կոչ ուղղած է հրաժարելու մրցանակաբաշխու թեան արարողու թիւնը վարելէ: Հանրայայտ ռեփըրը նշած է, որ Ռոքի որոշումը մեծ նշանակութիւն ունի:*

*Ռոքին նոյնատիպ կոչ ուղղած է նաեւ ռեփ երգիչ եւ դերասան Թայրիզ Կիպսըն, որ յայտնի է «Fast & Furious» ֆիլմաշարով:*

*Հնարաւոր է, որ արարողութիւնը կ'արհամարհէ նաեւ "լաւագոյն օժանդակ դերասան" անուանակարգին մէջ Օսքարի թեկնածու Մարք Ռաֆըլօ:*

*48-ամեայ դերասանը հարցազրոյց մը տուած էր BBC հեռուստաալիքին, ուր անդրադարձած է Օսքարին վերաբերող զայթակղութեան եւ առ հասարակ ցեղային խտրականութեան:*

*«Խնդիրը միայն Օսքարի արարողութիւնը չէ: Ամբողջ ամերիկեան համակարգը լեցուած է սեւամորթներու նկատմամբ ցեղային խտրականութեամբ, ինչ որ յատկապէս ցայտուն է արդարադատութեան համակարգին մէջ: Ինչպէ՞ս ճիշդ վարուիլ այս իրավիճակին մէջ: Չէ՞ որ ինչպէս Մարթըն Լիւթըր Քինկ կ'ըսէր՝ լաւ մարդիկ, որոնք ոչինչ կ'ընեն, աւելի վատն են, քան անոնք, որոնք միտումնաւոր սխալ կը գործեն»:*

*Այս աճագնացող բողոքի ալիքին ի տես՝ Ամերիկեան ֆիլմարուեստի ակադեմիան կտրուկ քայլեր կը ձեռնարկէ Օսքար մրցանակի թեկնածուներու ընտրութեան դատական կազմի անդամները փոխելու եւ ակադեմիայի անդամներու շրջանակին մէջ բազմազանութիւն մտցնելու համար: Ըստ կազմակերպութեան նախագահ Շերիլ Պուն Այզըքսին՝ «Յառաջիկայ օրերուն եւ շաբաթներուն մենք կը վերանայինք անդամներու ընտրութեան գործընթացը՝ 2016 թուականին եւ յետագային անհրաժեշտ բազմազանութիւնը մտցնելու համար»,- ըսած է Այզըքս: Ան աւելցուցած է, որ վերջին չորս տարիներուն ֆիլմարուեստի ակադեմիան արդէն ձեռնարկած է փորձեր՝ բազմազանութիւն մտցնելու ուղղութեամբ: Ասիկա բարդ, բայց կարեւոր հարց էր, ու եկած է ժամանակը մեծ փոփոխութիւններու»:*

*Աւելին՝ ըստ «LA Times»-ի, այս ամէնի պատճառով ամերիկեան ֆիլմարուեստի ակադեմիան մտադիր է աւելցնել Օսքար-2016 մրցանակաբաշ խութեան թեկնածուներու քանակը:*

*Նման առաջարկ քննարկուած է ֆիլմարուեստի ակադեմիայի կառավարիչներու խորհուրդի վերջերս կայացած հանդիպման ժամանակ:*

*Եւ այսպիսով՝ "Լաւագոյն ֆիլմ" գլխաւոր անուանակարգին մէջ մրցող ֆիլմերու քանակը կրնայ 8-էն բարձրանալ 10-ի, եւ հաւանաբար մշտական հիմունքներով: Կը նշուի որ այս պիսով՝ հնարաւոր կ'ըլլայ դափնեկիրներու ընտրութեան գործընթացը աւելի առարկայական դարձնել: Խորհուրդը քննարկած է նաեւ այլ անուանակարգերու մէջ թեկնածուներու թիւը աւելցնելու հնարաւորութիւնը:*

*Այս արշաւին արձագանգեց նաեւ ԱՄՆ նախագահի հանրապետական թեկնածու Տոնալտ Թրամփ Fox News հեռուստաալիքի «Fox & Friends» հաղորդման ժամանակ:*

*Թրամփ սակայն աջակցած է ամերիկացի դերասանուհի Սթէյսի Տէշի դիրքորոշման, որ յիշատակած է BET մրցանակաբաշխութեան մասին, որ ամերիկեան մրցքնակաբաշխութիւն մըն է յատուկ սեւամորթ արուեստագէտներու համար,մինչ սպիտակամորթները այնտեղ անուանակարգեր չունին... Բայց անկասկած որ, շատ լաւ կ'ըլլար, եթէ բոլորը պատշաճ ձեւով ներկայացուած ըլլան»,- նշած է Թրամփ՝ աւելցնելով, որ սեւամորթ դերասանները նախապէս ալ բազմիցս Օսքար ստացած են:*

www.massispost.com

## Թուրքիայում լոյս է տեսել Յովսէփ Հայրենիի «Վերին Եփրատի աւազանի հայերը, 1915 թ. եւ Դերսիմը» գիրքը




*Թուրքիայում «Բելգէ» հրատարակչութիւնը լոյս է ընծայել Յովսէփ Հայրենիի «Վերին Եփրատի աւազանի հայերը, 1915 թ. եւ Դերսիմը» աշխատութիւնը: Այդ մասին հաղորդում է Akunq.net-ը:*

*Աղբիւրի համաձայն՝ սոյն խիստ հանգամանալից ուսումնասիրութեան մէջ հեղինակը կեդրոնանում է երեք հիմնական թեմաների վրայ: Դրանցից առաջինն անդրադառնում է 20-րդ դարասկզբին Դերսիմի վիլայեթի սահմանների հետ համընկնող Վերին Եփրատի աւազանում բնակուող մեծաթիւ հայութեան դէմ Աբդուլ Համիդի իրականացրած կոտորածների, ինչպէս նաեւ՝ 1915 թ. երիտթուրքերի իրագործած Հայոց ցեղասպանութեան թեմաներին:*

*Երկրորդ թեման վերաբերում է այն փաստին, որ հայ քաղաքական կուսակցութիւնները չէին կանխատեսել Ցեղասպանութիւնը, եւ քննում դրա հետեւանքով որեւէ կազմակերպուած ինքնապաշտպանութիւն չցուցաբերելու հանգամանքները:*

*Երրորդ թեման անդրադառնում է Դերսիմի աշխարհագրութեանը եւ Ցեղասպանութիւնից յետոյ այստեղ մնացած փոքրաթիւ հայերի փրկուելու հարցում Դերսիմի բնակչութեան ունեցած դերին:*

*Գրքում օգտագործուած աղբիւրների մեծ մասը կազմում են անձամբ հեղինակի կողմից ժողովուած՝ ականատեսների հայերէն յուշերը, որոնց մեծ մասն առաջին անգամ է հրատարակւում թուրքերէն լեզուով:*

*Բացի այդ, հեղինակն այս աշխատութեան մէջ ներկայացնում է, թէ սոյն տարածքի բնակավայրերում՝ գիւղ առ գիւղ, ինչպէս եւ ում կողմից են իրականացուել կոտորածներն ու Ցեղասպանութիւնը, եւ այստեղի որ աշիրեթներն են պաշտպանել հայերին:*

*Յովսէփ Հայրենին նշելով, թէ Հայոց ցեղասպանութեան հետեւանքով հայ եւ քուրդ ժողովուրդները կորցրել են միասին փրկուելու հնարաւորութիւնը, 1938 թ. Դերսիմի կոտորածը համարում է 1915 թ. Ցեղասպանութեան շարունակութիւնը:*




## ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿՐԻԲԷՆ

10 օգտակար խորհուրդ չհիւանդանալու համար

Կրիբով վարակուիլ հնարաւոր է իւրաքանչիւր եղանակի:

Սակայն մարդոց բաւական մեծ հատուած կը հիւանդանայ ձմրան ամիսներուն: Կան քանի մը միջոցներ, որոնք ձեռնարկելու պարագային վարակուելու հաւանականութիւնը կարելի է զգալիօրէն նուազեցնել:

1. Աշխատեցէք խուսափիլ ամբոխէ: Շատեր կ'օգտուին հանրակառքերէն: Ատիկա կը նշանակէ, որ մենք այս կամ այն կերպ պարբերաբար կը յայտնուինք մեծ թիւով մարդոց մէջ, որ բնականաբար կ'աւելցնէ կրիբով վարակուելու հաւանականութիւնը:

2. Պարբերաբար լուացէք ձեռքերը: Ձեռքերը յաճախակի լուալով կը խուսափիք ո՛չ միայն կրիբէն, այլեւ՝ այլ վարակներէ:

3. Մի մսիք: Յատկապէս կարեւոր է տաք պահել ոտքերն ու վիզը: Անձրեւային եղանակին գերադասելի է պատշաճ կօշիկներ կրել:

4. Հիւանդներու հետ շփման մէջ մի մտնէք: Տան մէջ հիւանդի առկայութեան պարագային աշխատեցէք կրճատել անոր հետ շփումը, մի օգտուիք նոյն սպասքէն:

5. Յաճախ մաքրեցէք բնակարանը: Եթէ տան մէջ հիւանդ մարդ կայ, պէտք է տունը մաքրել նուազագոյնը 3 անգամ: Յատակն ու կահոյքը մաքրեցէք թաց լաթով:

6. Ճիշդ սնուեցէք: Կարեւոր է գիտնալ, որ կրիբով վարակուիլ կարելի է նոյնիսկ հիւանդի հետ չշփուելու պարագային: Առաջին հերթին՝ վարակուելու կրնայ յանգեցնել ցած դիմադրողականութիւնը: Պատճառ կրնայ դառնալ սխալ սնունդը: Յանկալի է օգտագործել թարմ բանջարեղէն եւ միրգեր: Բացի այդ, օրուան ընթացքին պէտք է 8 ժամ քնանալ:

7. Ալքոլի օգտագործման նուազեցում: Հաւանաբար շատեր կը մտածեն, որ ալքոլը լաւ է կրիբի եւ այլ հիւանդութիւններու պարագային: Սակայն, իրականութեան մէջ ասիկա սխալ է եւ ոչ մէկ հիմք ունի: Աւելին, ալքոլը բացասաբար կ'ազդէ դիմադրողականութեան վրայ: Այդ պատճառով ալ գերադասելի է զայն ընդհանրապէս չօգտագործել:

8. Մարզանքով զբաղեցէք: Առաւօտը սկսեցէք մարզանքով: Ատիկա կրնայ օգնել կանխարգիլել շատ հիւանդութիւններ, ներառեալ՝ կրիբը: Մարզանքի վրայ պիտի ծախսէք 20 վայրկեան, սակայն պիտի ունենաք լաւ ինքնազգացողութիւն եւ առողջութիւն:

9. Զափէն շատ մի աշխատիք: Այս պարագային մարմինը կրնայ այնքան տկարանալ, որ չկրնայ դիմադրել հիւանդութիւններուն:

10. Շատ հեղուկներ խմեցէք: Ջուրը կեանք է: Որպէսզի դիմադրողականութիւնը բնական վիճակի մէջ ըլլայ, օրուան ընթացքին նուազագոյնը 8 գաւաթ ջուր խմեցէք:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷՆ

## ԻՆՉՊԷՍ ԼՐԱՑՆԵԼ ՎԻԹԱՄԻՆ D-Ի ՊԱԿԱՍԸ ՁՄՐԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

Ձմրան ընթացքին մեր մարմինը կը տառապի արեւային «սննդակարգէ» եւ մենք կ'ունենանք վիթամին D-ի պակաս, զոր տարուան միւս եղանակներուն կը ստանանք արեւէն:

Վիթամին D-ի շնորհիւ քալսիումը, ֆոսֆորը, վիթամին A-ը, մակնեզիումը եւ այլ օգտակար նիւթերը, որոնք կը պարունակուին սնունդի մէջ, կը ներծծուին մարմնի մէջ բարակ աղիքի միջոցով: Այդ պատճառով այս վիթամինին պակասը կը խանգարէ նաեւ օգտակար տարրերու ներթափանցումը մեր մարմնին մէջ:

Վիթամին D-ն նաեւ կը կարգաւորէ նիւթափոխանակման գործընթացները, կը խթանէ որոշ հորմոններու աշխատանքը եւ շատ կարեւոր է ոսկորներու աճի, սրտի աշխատանքի, արեան մակարդելիութեան համար: Վիթամին D-ն նաեւ կը կարգաւորէ ջղային համակարգի աշխատանքը:

Ինչպէ՞ս լրացնել այս կարեւոր վիթամինին պակասը.

Պարզ է, որ վիթամին D-ի հիմնական աղբիւրը արեւն է եւ անոր պակասի պարագային պէտք է գտնել այլընտրանք: Ձմրան ընթացքին, երբ արեւոտ է, աշխատեցէք երկար զբօսնել: Վիթամին D-ի յառաջացման կը նպաստեն նաեւ օդային եւ ջրային լոգանքները եւ մերսումը:

Շատ կարեւոր է նաեւ ձմրան ընթացքին օգտագործել այս վիթամինի պարունակութեամբ սնունդ՝ ինչպէս ձուկ եւ ծովային ուտելիքներ: Իւղոտ ձուկը վիթամին D-ի հիանալի աղբիւր է:

Կաթնեղէնը. Մէկ գաւաթ կաթը կը լրացնէ վիթամին D-ի օրական պահանջը: Նաեւ կարելի է օգտագործել պինդ տեսակի պանիր, կարագ:

Հաւկիթը. Տապկուած հաւկիթը ոչ միայն ամենահասարակ եւ յայտնի նախաճաշն է, այլ նաեւ ամենահամեղն ու օգտակարը: Առաւօտեան տապկուած հաւկիթը կ'ապահովէ օրական պահանջի 10%-ը, որ կայ անոր դեղնուցին մէջ:

Սունկը. Վիթամին D-ն սունկի մէջ կ'արտադրուի արեւու ճառագայթներուն շնորհիւ: Անոր քանակը չի փոխուիր սունկի պատրաստման եղանակէն:

Բուսական սնունդ. Յատկապէս օգտակար են ազատքեղը, եղինջը, առւոյտը, սոյան:

## ՉԱՄԻՉԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՐԵԼԻ Է ՄԱՔՐԵԼ ԼԵԱՐԴԸ

Չամիչը արժէքաւոր ուտելիք է ջղային համակարգը հանգստացնելու եւ քունը բարելաւելու համար:

Չամիչի իւրաքանչիւր հատիկ, հակառակ իր փոքրիկ չափին, կը պարունակէ արժէքաւոր, անհրաժեշտ ու մարմնի համար չափազանց առողջարար նիւթեր:

Չամիչի օգտակար յատկութիւնները կը բացատրուին թարմ խաղողի առողջարար ըլլալու փաստով, սակայն արժէքաւոր նիւթերը անոնց մէջ 10 անգամ աւելի շատ են, քան թարմ խաղողի հատիկներուն մէջ: Չամիչը կ'ամրապնդէ ջղային համակարգը ու կը բարելաւէ քունը՝ շնորհիւ վիթամին B-ի խումբերու մեծ քանակին: Անիկա կարելի է օգտագործել իբրեւ հանգստացնող միջոց, որ կը հանէ մարմնի լարուածութիւնն ու յոգնածութիւնը:

Լեարդը մաքրելը չամիչի միջոցով ամենաարդիւնաւէտ միջոցներէն մէկն է մարմնի բուժման ու քրոնիկ հիւանդութիւններէն ազատելու համար, չէ՞ որ նոյնինքն մարմնի աւելորդ նիւթերով ծանրաբեռնուածութիւնը կը խանգարէ անոր ինքնավերականգնման աշխատանքը, ինչպէս նաեւ զգալիօրէն կը նուազեցնէ դեղօրայքի ու աւանդական բժշկութեան բաղադրատոմսերու ազդեցութիւնը:

## ՖՐԱՆՍՈՒՀԻՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ֆրանսուհիները միշտ ուշադրութիւն կը գրաւեն իրենց հմայքով եւ կանացիութեամբ: Անոնք իւրայատուկ են: Անոնց կեանքի քանի մը սկզբունքները, որոնց կ'արժէ հետեւիլ:

-Յստակ սահմանեցէք ձեզի համար, թէ որ հագուստը ձեզ կը դարձնէ աւելի հմայիչ: Ֆրանսուհիները յայտնի են իրենց ոճի զգացումով, քանի որ լաւ գիտեն, թէ ինչը կը վայելէ իրենց, ինչը՝ ոչ:

-Յաճախ զբաղեցէք այն բանով, որ ձեզի հաճոյք կը պատճառէ: Լաւ զգալը նոյնքան կարեւոր է, որքան լաւ տեսք ունենալը: Երկարատեւ լոգանքը, շպարի տարբեր արարողակարգերը եւ մերսումները ճոխութիւն չեն, այլ անհրաժեշտութիւն:

-Մի պատժէք ձեր մարմինը: «Զկայ ցաւ, չկայ յաղթանակ» սկզբունքը այդպէս ալ չհասաւ Ֆրանսա: Այնտեղի բնակիչները կը նախընտրեն հաճոյքի սկզբունքը: Եթէ կ'ընես այն, ինչը քեզ հաճելի է, ուրեմն ատիկա լաւ կ'ազդէ առողջութեանդ եւ յաջողութեանդ վրայ:

-Ընդունէ դուն քեզ այնպիսին, ինչպէս որ ես: Նայելով իւրաքանչիւր ֆրանսական ամսագիրի՝ դուք կը տեսնէք կանացի գեղեցկութեան անհասանելի իտէալները: Սակայն իրական կեանքի մէջ ֆրանսուհին գիտէ, որ երջանկութիւնը կախեալ չէ հագուստի չափէն, անիկա կախեալ է այն ունակութենէն, որ դուն քեզ հիանալի զգաս սեփական մաշկիդ մէջ:

-Վայելեցէք համեղ ուտելիքներ: Համեղ ուտելիքը ֆրանսական մշակոյթի հիմքն է: Անիկա կարելի է վայելել քիչ-քիչ, սահմանափակ քանակութեամբ: Ոչ մէկ ֆրանսուհի կ'ուտէ հաց, պանիր եւ քաղցրաւենիք ամէն օր:

-Յարգեցէք ձեր մարմինը: Շատ ուտելը ոչ մէկ լաւ բանի կը տանի: Շոքոլայ կ'ուզէք, կրնաք ուտել քիչ մը, բայց այդ պարագային այդ օրը հրաժարեցէք պանիրէն եւ գինիի երկրորդ բաժակէն:

-Զգացէք դուք ձեզ լիարժէք: Ինքզինք յարգող ոչ մէկ ֆրանսուհի թոյլ կու տայ տունէն ելլել ճմրթուած տեսքով, մարզական հագուստով եւ կամ չսանտրուած մազով: Լաւ տեսք ունենալ կը նշանակէ յարգել ինքդ քեզ եւ քեզ շրջապատող աշխարհը:

-Եղիր այնպէս ինչպէս որ ես: Նոյնիսկ քիչ մը հետաքրքրական մատանին, ծիծաղելի երկարավիզ կօշիկը կամ վառ գոյնով շալը կ'ընդգծեն ձեր անհատականութիւնը:

-Աշխատեցէք այն բանին վրայ, որ ունիք եւ ո՛չ թէ ինչ պիտի ուզէիք ունենալ: Լաւ տեսք ունենալու համար ֆրանսուհին երբեք նպատակ չի դներ նիհարնալ 3 քիլոկրամով կամ երկարել մազերը: Եթէ դուք ունիք ոճի զգացում եւ ներդաշնակ ներաշխարհ, ուստի ոչ ոք կը նկատէ այդ աւելորդ 3 քիլոկրամը:

-Եղէք բնական: Նուազագոյն շպար, համապատասխան շրթներկ եւ հաճելի բոյր, այս է այն ամէնը, որ պէտք է:

-Թոյլ մի տաք, որ տարիքը զրկէ ձեզ հաճոյքէ: Ֆրանսուհիները համոզուած են, որ տարիքը չի կրնար խանգարել կնոջ երեւնալ եւ զգալ լաւ ու մնալ հմայիչ: Այդ երկրին մէջ կան շատ յայտնիներ, որոնք տարիքի հետ կը դառնան աւելի գեղեցիկ:

-Ուրախացէք մանրուքներով: Փոքր, բայց համեղ թխուածք, նոր օծանելիք, նարդոսի բոյր... Ֆրանսուհիները կը հասկնան, որ այդպիսի մանրուքները նոյնպէս կարեւոր են:

-Վայելեցէք կեանքը: Գտէք ձեր կիրքը, ըսէք «ոչ» այն ամէնուն, որոնք կը վատնեն ձեր ժամանակը, եւ գացէք առաջ:

Կեդրոնացէք միայն այն բանին վրայ, զոր կը սիրէք եւ եղէք անկրկնելի:

## ՅՂՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ԳԵՏՆԱԽՆՁՈՐԸ Կ'ԱՒԵԼՑՆԷ ՅՂԻՆԵՐՈՒ ՇԱՔԱՐԱԽՏԻ ՅԱՌԱՋԱՑՄԱՆ ՎՏԱՆԳԸ

Գիտնականները կը վկայեն, որ յղութեան ընթացքին մեծ չափով գետնախնձորի օգտագործումը կրնայ բարձրացնել յղիներու շաքարախտի յառաջացման վտանգը:

Յղիներու շաքարախտը յղութեան ընթացքին կը զարգանայ կիներու մէջ 2-3 տոկոսի մօտ եւ կրնայ բացասաբար ազդել փոքրիկի զարգացման վրայ: Ամէնէն յաճախ յղիներու շաքարախտի ախտանիշները կ'անհետանան ծննդաբերութենէն ետք:

Գիտնականները վերլուծած են 21.000 յղութիւններու ընթացքը, որոնց վերաբերեալ տուեալները հաւաքուած էին 1991-2001-ին: Փորձարկման մասնակիցներէն ոչ մէկը տառապած է քրոնիկ որեւէ հիւանդութենէ: Գիտնականները վերլուծած են յղութեան ընթացքին ապագայ մայրերու սնունդի բնոյթը, առանձին ուշադրութիւն դարձնելով այն բանին, թէ կիներ որքան յաճախ օգտագործած են գետնախնձոր՝ փուրէի, տապկուածի, խորոված, եփածի եւ չիփսի տեսքով: Անոնք հաշուի առած էին նաեւ այնպիսի գործօններ, ինչպէս ֆիզիքական աշխուժութեան մակարդակը, տարիքը, ճարպակալումը:

Պարզուած է, որ այն կիներու մօտ, որոնք շաբաթը աւելի քան հինգ չափ գետնախնձոր կերած էին (մէկ չափաբաժինը համապատասխանած էր 100 կրամի), յղիներու շաքարախտը զարգացած էր 50 տոկոսով աւելի յաճախ, քան անոնց մօտ, որոնք քիչ կերած էին գետնախնձոր:

Գիտնականները կը կարծեն, որ այդ բարդութեան ի յայտ գալուն պատճառը գետնախնձորին մէջ պարունակուող օսլան է, որ արեան մէջ կտրուկ կերպով կը բարձրացնէ շաքարի մակարդակը:

## ԱՐԹՈՒՐ ԱԲՐԱՀԱՄԸ ՌԱՄԻՐԷՍԻ ՀԵՏ ԿԸ ՄԵՆԱՄԱՐՏԻ ԼԱՍ ՎԵԿԱՍՈՒՄ

Արթուր Աբրահամը պրոֆէսիոնալ բռնցքամարտի սուպերմիջին քաշային կարգում WBO վարկածով աշխարհի չեմպիոնական տիտղոսի պաշտպանութեան մենամարտը կ'անցկացնի Ապրիլի 9-ին Լաս Վեգասում, հաղորդում է Boxingnews 24-ը:

35-ամեայ Աբրահամի մրցակիցը լինելու է 24-ամեայ մեքսիկացի Ջիլբերտօ Ռամիրէսը:

Լաս Վեկասում կայանալիք բռնցքամարտի երեկոյի գլխաւոր մենամարտը կը լինի ֆիլիպինից Մենի Պակեաոյի եւ ամերիկացի Տիմոտի Բրեդլիի միջեւ հանդիպումը, որից առաջ ռինգ դուրս կը գան Աբրահամն ու Ռամիրէսը:

Յիշեցնենք, որ Արթուր Աբրահամը նախորդ անգամ ԱՄՆ-ում մենամարտել է 2012-ի Մայիսի 14-ին՝ Կալիֆորնիայում պարտուելով ամերիկացի Անդրէ Ուորդին: Նա նախորդ մենամարտն անցկացրել է 2015-ի Նոյեմբերի 21-ին Գերմանիայի Հանովեր քաղաքում, որտեղ միաւորներով յաղթել էր անգլիացի Մարտին Մարէյին:

## ՄԱՐԳԱՐԻՏԱ ԳԱՍՊԱՐԵԱՆ. ՍԵՐԵՆԱ ՈՒԻԼԻԱՄՍԸ ՇԱՆՍ ՉՏՈՒԵՑ ԻՆՁ



Ռուսաստանը ներկայացնող Մարգարիտա Գասպարեանը յետխաղեայ ասուլիսում խօսել է Թենիսի Աւստրալիայի բաց առաջնութեան երրորդ շրջանում աշխարհի առաջին ռակետ Սերենա Ուիլեամսից կրած պարտութեան մասին:

«Հիանալի էր խաղալ կեդրոնական կորտում: Ես խաղացել էի նաեւ Ուիմբլդոնի կեդրոնական կորտում, եւ դա շատ յուզական պահ էր: Ինձ դուր եկաւ: Սերենան շատ լաւ էր խաղում այսօր: Պարզապէս աներեւակայելի: Նա հիանալի է մատուցում, շատ լաւ է շարժւում եւ ագրեսիւ պատասխանում հարուածներին: Ես յաղթանակի շանսեր չունէի: Փորձում էի խաղալ ագրեսիւ, բայց մրցակիցը շատ լաւ գործեց: Բացի այդ, ես շատ էի սխալւում: Այսօր կը հանգստանամ, իսկ վաղը կը վերադառնամ տուն»,- 21-ամեայ ռուսաստանցու խօսքը մէջբերում է Australian Open-ի կայքը:

Յիշեցնենք, որ ամերիկուհին 3 գէյմ էր տուել Գասպարեանին՝ 6:2, 6:1: Նախորդ 2 մրցախաղերում Մարգարիտան յաղթել էր իտալուհի Սառա Էրանիին ու Ղազախստանը ներկայացնող Յուլիա Պուտինցեւային:

## ԱՐԱՍ ՕԶԲԻԼԻՍԸ՝ «ԲԵՇԻԿԹԱՇԻ» ՖՈՒՏԲՈԼԻՍՏ



Ստամպուլի «Բեշիկթաշը» պաշտօնապէս յայտարարել է Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Արաս Օզբիլիսի հետ պայմանագիր կնքելու մասին: «Բեշիկթաշի» կայքը յայտնում է, որ 25-ամեայ ֆուտպոլիստին ձեռք բերելու համար Թուրքական ակումբը Մոսկուայի «Սպարտակին» վճարել է 1.3 միլիոն եւրօ:

«Սպարտակն» իր կայքում շնորհակալութիւն է յայտնել Օզբիլիսին՝ մաղթելով յաջողութիւն: Կիսապաշտպանն էլ իր հերթին Instagram-ում շնորհակալութիւն է յայտնել ռուսական ակումբին:

«Քիչ առաջ պայմանագիր կնքեցի «Բեշիկթաշի» հետ: Այստեղ շատ ջերմ ընդունեցին ինձ: Իմ կեանքում նոր էջ է բացւում: Շնորհակալութիւն «Սպարտակին» այս 2.5 տարուայ համար: Ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել ակումբին ու երկրպագուներին: Յաջողութիւն եմ մաղթում «Սպարտակին»,- գրել է Արասը:

Արաս Օզբիլիսը 2013-ին Կրասնոդարի «Կուբանից» էր տեղափոխուել «Սպարտակ», որի կազմում անցկացրել է 40 խաղ՝ խփելով 5 կոլ: Աւելի վաղ յայտնի էր դարձել, որ մինչեւ այս մրցաշրջանի աւարտը «Բեշիկթաշը» նրան վարձավճարով տրամադրելու է Մադրիդի «Ռայօ Վալյեկանոյին»:

## ԵՈՒՐԱ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼ. «ՄԱՖԻԱՅԻ ՄԱՍԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԿԱՊ ՉՈՒՆԻ»

Ֆուտպոլի Հայաստանի ազգային հաւաքականի յարձակուող Եուրա Մովսիսեանի գործակալ Պատրիկ Մաքքէյըն անդրադարձել է ամերիկեան «Ռէալ Սոլթ Լէյքի» սեփականատէր Լոյ Հանսենի յայտարարութեանը, թէ Մոսկուայի «Սպարտակից» հեռանալու համար 28-ամեայ ֆուտպոլիստը ստիպուած է եղել դիմել ռուսական մաֆիային:

«Մաֆիայի մասին այդ պատմութիւնը բացարձակ չի համապատասխանում իրականութեանը: Այդ մասին նոյնիսկ մեկնաբանելու բան չկայ: «Սպարտակը» պրոֆեսիոնալ մօտեցում է ցուցաբերել Եուրայի հետ կապուած բոլոր հարցերում եւ միշտ լաւ է վերաբերուել նրան: Յուրան ունի բացառապէս հաճելի յիշողութիւններ «Սպարտակի» մասին: Այդ ակումբը նրան հնարաւորութիւն է տուել խաղալ ամենաբարձր մակարդակի վրայ»,- Մաքքէյըի խօսքը մէջբերում է Tass.ru-ն:

Յիշեցնենք, որ Մովսիսեանը «Ռէալ Սոլթ Լէյքում» խաղացել է 2007-2009 թուականներին: Վարձակալութեան պայմանագիրը նախատեսուած է մինչեւ 2016թ. Դեկտեմբերի 1-ը:

## «ԱՐՍԵՆԱԼԸ» ՊԱՐՏՈՒԵՑ «ՉԵԼՍԻԻՆ», «ԼԵՍԹԵՐԸ»՝ ԱՌԱՋԱՏԱՐ



Անգլիական Պրեմյեր լիգայի 23-րդ տուրի կեդրոնական խաղում «Արսենալը» լոնտոնեան դերբիում նուազագոյն հաշուով տնային պարտութիւն կրեց «Չելսիից»:

18-րդ րոպէին «Արսենալի» գերմանացի պաշտպան Պեր Մերտեսակերը հեռացուեց խաղադաշտից, իսկ 5 րոպէ անց պրազիլացի յարձակուող Տիեգօ Կոստան առաջ մղեց հիւրերին: «Չելսին» մինչեւ ընդմիջում պահպանեց առաւելութիւնը, իսկ երկրորդ խաղակէսում փորձում էր խաղը հանգստացնել գնդակի վերահսկումով: 57-րդ րոպէին փոխարինման դուրս եկաւ վնասուածքից ապաքինուած Ալեքսիս Սանչէսը, որը զգալիօրէն ակտիւացրեց «Արսենալի» խաղն աջեւի գծում, սակայն տանտէրերին չյաջողուեց խուսափել պարտութիւնից:

Արսէն Վենգերի թիմը «Մանչեսթեր Սիթիի» հետ բաժանում է 2-3-րդ տեղերը՝ 3 միաւոր զիջելով առաջատար «Լեսթերին»: «Չելսին» 28 միաւորով բարձրացաւ 13-րդ տեղ:

## ՀԵՆՐԻԽ ՄԽԻԹԱՐԵԱՆԸ՝ «ԲՈՐՈՒՍԻԱՆԵՐԻ» ՄԻՋԵՒ ԴԵՐԲԻԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՖՈՒՏՊՈԼԻՍՏ



Հայաստանի ազգային հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը Whoscored.com-ի վարկածով ճանաչուել է Դորտմունդի «Բորուսիայի» եւ Մյոնխենգլադբախի «Բորուսիայի» միջեւ գերմանական Բունդեսլիգայի 19-րդ տուրի հանդիպման լաւագոյն ֆուտպոլիստ:

27-ամեայ ֆուտպոլիստն արժանացել է 9.6 գնահատականի: Երկրորդ ամենաբարձր գնահատականը ստացել է նրա ակումբակից Իլկայ Գիւնդոգանը՝ 9 բալ:

Յիշեցնենք, որ Հենրիխ Մխիթարեանը հիւրերի մեկնարկային կազմում մասնակցել էր ամբողջ խաղին եւ դարձել կոլի ու գոլային փոխանցման հեղինակ: Դորտմունդցիները յաղթել էին 3:1 հաշուով:

Գերմանիայի ընթացիկ առաջնութիւնում Մխիթարեանը մասնակցել է 17 խաղի՝ դառնալով 7 կոլի եւ 9 կոլային փոխանցման հեղինակ:

## «ՌԷԱԼԸ»՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԵԿԱՄՏԱԲԵՐ ԱԿՈՒՄԲ

Մադրիդի «Ռէալը» Deloitte-ի անցկացրած հաշուարկների արդիւնքում ճանաչուել է նախորդ մրցաշրջանի ամենաեկամտաբեր ակումբ, տեղեկացնում է BBC-ն:

2014/15 մրցաշրջանում Արքայական ակումբի եկամուտը կազմել է 577 միլիոն եւրօ եւ 11-րդ տարին անընդմէջ գլխաւորում է այդ ցուցակը: Երկրորդ տեղում «Բարսելոնան» է, որի եկամուտը 560,8 միլիոն է, իսկ Դորտմունդի «Բորուսիան» 280,6 միլիոնով 11-րդ տեղում է:

Ամենաեկամտաբեր ակումբները

1. «Ռէալ» (Սպանիա) - 577 միլիոն եւրօ
2. «Բարսելոնա» (Սպանիա) - 560,8
3. «Մանչեսթեր Յունայթէդ» (Անգլիա) - 519,5
4. ՊՍԺ (Ֆրանսիա) - 480,8
5. «Բաւարիա» (Գերմանիա) - 474
6. «Մանչեսթեր Սիթի» (Անգլիա) - 463,5
7. «Արսենալ» (Անգլիա) - 435,5
8. «Չելսի» (Անգլիա) - 420
9. «Լիվերպուլ» (Անգլիա) - 391,8
10. «Յուվէնտուս» (Իտալիա) - 323,9
11. «Բորոսիա Դ.» (Գերմանիա) - 280,6

## ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

ԸՆԿԵՐ ԿԷՐԻ ՍԻՆԱՆԵԱՆ վերջերս վիրաբուժական լուրջ գործողութիւեան մը ենթարկուած ըլլալով այժմ կը բոլորէ իր ապաքինման շրջանը: Արագ եւ կատարեալ ապաքինում կը մաղթենք յարգելի ընկերոջ:

«Մասիս»

## ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** Մարտ 21-Ապրիլ 19
Ծրագիրներդ յաջողցնելու համար նկատելիօրէն զօրաւոր ջանք կը թափես եւ վճրակամութիւնդ ու բարձրագոյն ճիգդ կը ցուցնես: Գործատեղիի մէջ պատահած դէպքերը քեզի շատ կը ճնշեն եւ կը կաշկանդեն: Մի մտահոգուիր:
Բախտաւոր թիւերդ են: 4,9,11,25,29

**ՑՈՒԼ** Ապրիլ 20-Մայիս 20
Դժուար հարց մը կը բեռնաւորէ քեզ եւ օգնութեան ձեռքերու պէտք ունիս: Միակ լուծումը այս կացութեան եւ մտահոգութիւններէդ ազատելու՝օգնութիւն ստանալն է: Մի վարանիր խնդրելու: Կողակիցիդ սիրտը մի կտրեր անտեղի խօսքերով:
Բախտաւոր թիւերդ են: 1,11,15,23,26

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** Մայիս 21-Յունիս 20
Յեռանկարներդ տրամաբանական բնոյթ թող ունենան որ կարելի ըլլան իրագործել զանոնք: Երբ նեղութեան մատնուիս՝ իրար մի անցնիր, այլ համբերութեամբ եւ իմաստութեամբ լուծէ հարցը: Քանի մը անձերու հետ կապդ խզելու ես:
Բախտաւոր թիւերդ են: 7,15,24,29,34

**ԽԵՑԳԵՏԻՆ** Յունիս 21-Յուլիս 22
Սրտիդ բոլոր փափաքները
ընելու համար յարատեւութեան եւ լաւատեսութեան պէտք ունիս, բաներ որ կը պակսին մէջդ: Մի ընդդիմանար գործատիրոջդ պատուէրներուն որպէսզի գործդ կորսնցնելու հաւանականութիւն չ՛ունենաս:
Բախտաւոր թիւերդ են: 6,9,14,25,30

**ԱՌԻԾ** Յուլիս 23-Օգոստոս 22
Երբ մէկու մը սիրտը վիրաւորես՝ անպայման այդ անձին սիրտը առնելու ես անուշ խօսքերով: Առաջնորդ ըլլալու լաւ յատկութիւններ ունիս՝ օգտագործէ զանոնք: Սիրելիներդ առանձին մի ձգեր իրենց պայքարին մէջ: Ունեցածներէդ գոհացիր:
Բախտաւոր թիւերդ են: 5,14,28,29,33

**ԿՈՅՍ** Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
Յաճախ ենթադրութիւններ ընելով՝ նեղութեան նիւթեր կ՛ստեղծես: Մտածելակերպդ փոխէ եւ իրաւագէտ եղիր: Շուտով երեւան պիտի ելլէ թէ բարեկամներէդ մէկը քեզմէ մեծ գաղտնիք մը պահած է: Լուրջ հարց մը մտավախութիւն պիտի պատճառէ քեզի:
Բախտաւոր թիւերդ են: 2,15,25,26,33

**ԿՇԻՌՔ** Սեպտեմբեր 23-Յոկտեմբեր 22
Միշտ կը մտածես դէպի յառաջ երթալ եւ կը մերժես ոեւէ յետադարձ գնացք: Նպատակդ միշտ բարի է բայց ինքզինքդ= արտայայտելու դժուարութիւն կ՛ունենաս: Ոեւէ տագնապի պարագային՝ վստահէ ընտանիքիդ խորհուրդներուն:
Բախտաւոր թիւերդ են: 7,15,18,24,31

**ԿԱՐԻՃ** Յոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
Կեանքի յաջողութիւնները եւ ձախողութիւնները իմաստութեամբ կ՛ընդգրկես եւ օրինակելի վերաբերմունք կ՛ունենաս բոլոր շրջանակիդ հետ: Յառաջիկայ ամիսներուն հաւանական է որ տնտեսական ելեւէջներ ունենաս:
Բախտաւոր թիւերդ են: 8,11,22,25,34

**ԱՂԵՂՆԱՒՈՐ** Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21
Անորոշ վիճակի մը մէջ պիտի գտնուիս եւ կը հաւատաս որ այս կացութենէն միայն հակազդելով կրնաս դուրս գալ: Մի ըմբոստանար քեզի տրուած խրատներուն դէմ: Նուէր մը կեանքդ ամբողջութեանբ պիտի բարելաւէ եւ մտածելակերպդ փոխէ:
Բախտաւոր թիւերդ են: 1,17,20,25,26

**ԱՅԾԵՂՋԻՒՐ** Դեկտեմբեր 22-Յունուար 19
Յաճախ դուն քեզ կը խաբես սուտ միտքերով: Բարգաւաճ կեանք մը ունիս եւ միշտ գանգատ կը յայտնաբերես ընտանիքիդ: Յամոզումդ փոխէ եւ կեցուածքդ շտկէ: Ինքնաշարժային շրջապտոյտ մը քեզ աւելի պիտի մօտեցնէ ընտանիքիդ հետ:
Բախտաւոր թիւերդ են: 3,14,23,34,35

**ՋՐՀՈՍ** Յունուար 20-Փետրուար 18
Ընտանիքիդ հանդէպ զիջող եւ զոհուող ըլլալուդ՝ շատ կը փնտռուիս: Միշտ արդարութեամբ կը մօտենաս հարցերուն, ճիշդ լուծում գտնելով անոնց: Բարեկամ մը պէտք ունի քու մխիթարութեանդ եւ սփոփանքիդ, մօտեցիր իրեն եւ հետը եղիր:
Բախտաւոր թիւերդ են: 5,8,14,33,34

**ՁՈՒԿ** Փետրուար 19-Մարտ 20
Դէմքիդ ժպիտը կը գրաւէ բոլոր քեզ ճանչցողները: Անքուն գիշերներ կ՛անցնես մտածելով: Փոխանակ այնքան մտածելու՝ փորձէ հարցերը լուծել խօսելով: Մշտատեւ փոփոխութիւններու կ՛ենթարկես դուն քեզ փնտռելով ուրախութիւն կեանքիդ մէջ:
Բախտաւոր թիւերդ են: 5,18,24,26,35

## ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՓՈԽԱՆՈՐԴ

*Շարունակուած էջ 1-էն*

*սէփեան, Հայաստանի Գուգարաց Թեմի առաջնորդ Սեպուհ Արք. Չուլճեան, ինչպէս նաեւ Լոս Անճելոսի Հայաստանի Աւագ Հիւպատոսութեան տեղակալ Վալերի Մկրտումեան եւ իր օգնականը Ռազմիկ Ստեփանեան:*

*«Կոմիտասեան» եղանակով քառաձայն պատարագը ներդաշնակօրէն երգուեցաւ «Խաչատուրեան դպրաց դաս» երգչախումբին կողմէ, ղեկավարութեամբ Ստեփան Սրկ. Կէօզիւմեանի:*

*Պատարագի ընթացքին Արամ Սրբազան հոգեշունչ քարոզ մը տուաւ հայ ժողովուրդի հաւատքի մասին, բնաբան ունենալով «Ով որ ինծի կը հաւատայ՝ հօրս կը հաւատայ»: Այս առթիւ Արամ Սրբազան ոգեկոչեց յիշատակը երջանկայիշատակ Շնորհք Պատրիարք Գալուստեանի, որուն վախճանման 25րդ տարելիցն է այս տարի: Ան նշեց որ հանգուցեալ պատրիարքի զոյգ գիրքերը («Յայտնութեան Գիրքը» եւ «Եօթը պատգամներ Եօթը եկեղեցիներուն») վերջերս վերահրատարակուեցան խմբագրութեամբ եւ անգլերէնի թարգմանութեամբ Դոկտ. Ջաւէն Ա. Քհնյ. Արզումանեանի:*

*Առիթը պատեհ նկատելով Գերշ. Արամ Սրբազան հակիրճ կերպով անդրադարձաւ 1999 թուականին Պոլսոյ եւ շրջակայքի աղիտալի երկրաշարժի մասին, որուն զոհ գացած էր 30,000 հոգի եւ այդ պատճառով լուրջ վնասներու ենթարկուած էին պատրիարքարանն ու կարգ մը եկեղեցիներ: Անոնց նորոգութեան համար տեղական պիւտճէն անբաւարար նկատուելով ձռնարկուած էր հանգանակութեան ծաւալուն արշաւի մը, որուն մասնակցեցաւ նաեւ Գալիֆորնիոյ հայութիւնը, նախաձեռնութեամբ օրուան առաջնորդ Գերշ. Վաչէ Արք. Յովսէփեանի: Արդարեւ հանգանակուած էր 1 միլիոն երկու հարիւր հազար տոլար, որուն վեց հարիւր հազար տոլարը նուիրած էր Քըրք Գրիգորեանը: Այս առթիւ Արամ Արք. մեծագումար նուիրատու Սարօ Մարուքեանին պատուեց Պոլսոյ հայոց պատրիարքութեան պատուոյ գիրով ու «Շինարարութեան համար» ոսկեայ մետալով:*

*Պատարագի աւարտին տեղի ունեցաւ պաշտօնական հոգեհանգիստ երջնակայիշատակ Շնորհք Արք. Գալուստեանի վախճանումի 25րդ տարելիցին առթիւ:*

*Ս.Պատարագին յաջորդեց «Սիրոյ սեղան» ճաշկերոյթը, առաջնորդարանի կից «Գալայճեան» սրահին մէջ, կազմակերպութեամբ «Հոգեւորականներու Պատրաստութեան Հիմնադրամ»ին (Սթիուըրթ շիփ), որուն ներկայ էին բարձրաստիճան հոգեւորականներ, եկեղեցական տարբեր կառոյցներու ներկայացուցիչներ, բարերարներ եւ հիւրեր, շուրջ 250 հոգի:*

*«Սիրոյ սեղան»ի կազմակերպիչ մարմնի անունով օրուան հանդիսավարուհի Տիկ. Սիլվա Խաչիկեան իր ողջոյնի խօսքին մէջ բարի գալուստ մաղթեց Պոլսոյ Հայոց պատրիարքութեան փոխանորդ Գերշ. Տ. Արամ Արք. Աթէշեանին, շնորհակալութիւն յայտնելով որ բարեհաճած էր ընդառաջել Թեմիս առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի հրաւէրին:*

*Պոլսահայ Միութեան ատենապետ՝ իրաւաբան Ժոսլին Մինասեան տուաւ կենսագրական գիծերը հիւր եկեղեցականին, դրուատելով միաժամանակ անոր վարչական բարձր կարողութիւններն ու կրթանուէր եւ եկեղեցանուէր ազգօգուտ գործունէութիւնը: Հոգեւորականներու պատրաստութեան հիմնադրամին կողմէ խօսք առաւ ատենապետ՝ Վահրամ Պիրինճիգ: Ինք եւս ողջունեց Արամ Սրբազանի ներկայութիւնը:*

*Արեւմտեան Թեմի բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան իր ողջոյնի խօսքին մէջ բարձր գնահատեց Պոլսոյ Հայոց պատրիարքական փոխանորդ գերշ. Արամ Արք.-ի հոգեւոր ծառայութեան մէջ ունեցած արժանիքներն ու նուիրումը, լիուլի կատարելով պատրիարքական պարտաւորութիւնները, զգալի չի դարձնելու համար այժմու պատրիարք Մեսրոպ Մութաֆեանի բացակայութիւնը, որ երկարատեւ բուժման կը կարօտի:*

*Գեղարուեստական բաժինին մէջ ելոյթ ունեցաւ շնորհալի երգչուհի Ալենուշ Եղիազարը:*

*Աւարտին իր ելոյթին մէջ Գերշ. Արամ Սրբազան որոշ տեղեկութիւններ տուաւ նաեւ Պատրիարքարանի եւ պոլսահայ գաղութի մասին:*

*Գ.Մ.*

## ԿԵՑՑԷ՜ ԶԷՅԹՈՒՆ, ԱՊՐԻ՛ ԶԷՅԹՈՒՆ

*Շարունակուած էջ 6-էն*

*պանութիւնը, ինքնըստինքեան ոսկէ օղակ մը շաղկապեցին Հնչակեան Կուսակցութեան յեղափոխական պայքարի շղթային: Համիտեան կոտորածներու այդ արնաշաղախ օրերուն, եթէ հայկական բոլոր վայրերը Զէյթուններ ըլլային, մեր պատմութեան անիւը այլ ուղղութիւն պիտի չստանա՞ր արդեօք:*

*Ինչո՞ւ, որովհետեւ ապստամբութիւնը վերջ գտաւ Թրքական կողմին ջախջախումով, Սուլթան Համիտին թախանձանքին ետք՝ եւրոպական հիւպատոսներու միջնորդութեամբ եւ զէյթունցիներու պարտադրած պայմաններով: Այս ընդվզումը միակն էր որ աւարտեցաւ հայկական յաղթանակով:*

*«Հայ Ժողովրդի Պատմութիւն» ակադեմական հրատարակութեան 6-րդ հատորը այսպէս կ՛արժեւորէ 1895 Սեպտեմբեր 26-ին սկսած եւ 1896 Յունուար 28-ին վերջացած Զէյթունի ապստամբութիւնը.*

*«Զէյթունի 1895 թ. ապստամբութիւնը հայ ազատագրական շարժումների փառապսակն է, ժողովրդական-զանգուածային ըմբոստութիւններից համեմատաբար կազմակերպուածն ու ամենախոշորը: Զէյթունի հերոսամարտիկները հասան ոչ միայն բարոյական, այլեւ գործնական յաղթանակի, ստիպելով օսմանեան դահճապետներին հաշտութեան սեղանի շուրջ նստել ռազմադաշտում յաղթանակած հայ ապստամբների հետ»:*

*Զէյթունցիք ինքնամոռաց գուպարով, նահատակութեամբ եւ յաղթանակի տեսիլքով ռազմական ոգի ու կարգապահութիւն հաղորդեցին մեր պատմութեան. իրենց քայլերգը եղաւ ռազմի կոչ ու հպարտութեան ազդակ, քանի բամբ ձայնով ու սէգ ճակատով կը վեհանանք.*

*Կեցցէ՜ Զէյթուն, ապրի՛ Զէյթուն, Թող չտեսնէ ստրկութիւն,*
*Քանի ունի մեզ պէս որդիք, կեցցէ՜ Զէյթուն, ապրի՛ Զէյթուն:*

*ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ԱՐԱՐԱՏ»*

# ԿԵԱՆՔՆ ԻՄԱՍՏԱՒՈՐՒՈՒՄ Է ԾԱՌԱՅՈՒԹԵԱՄԲ
## (Կրթ. եւ հաս. գործիչ Երուանդ Ջամանեանի ցաւալի մահուան քառասնօրեակի առիթով)

*Ռ. ԿՈՐԻՒՆ*



Տարեմուտ 2016 Թիւը Ջամանեան ընտանիքի եւ գերդաստանի համար ծանր նստեց, կորուստն անփոխարինելի սուգի մատնեց բոլորին՝ ընտանիք, հարազատ, գործակից եւ շատ-շատերին: Երուանդի մահուան գոյժը Իրանի Թեհրան մայրաքաղաքից տարածուեց հասնելով մեզ Կալիֆորնիայի Գլենդէլ քաղաքում, որը ցաւով ու վշտով պարուրեց լսողաց սրտերը: Թէ ինչպէս անողոք հիւանդութիւնը կարճ ժամանակում հիւծեց նրան, անշնչացրեց, եւ այսպէս դժխեմ մահու հրեշտակն եկաւ ու անվերադարձ տարաւ նրան: Ա՛խր, նրա խիստ կարիքն էր զգացւում ընտանիքում, դեռ անելիքներ շատ ունէր, ինչո՞ւ այդպէս անժամանակ...

Նա իր մահկանացուն կնքեց յունուար 9-ին հիւանդանոցում: Յուղարկաւորութիւնը կատարուեց Յունուար 12-ին Թեհրանի Նոր Բուրաստան գերեզմանատնում հոծ սգակիրների մասնակցութեամբ, շիրիմը ծածկւում է ծաղկեպսակներով, մի կեանք ծառայութիւնը գնահատում է արտայայտողների՝ հայ եւ պարսիկ գործակիցների ու ազգային - հասարակական գործիչների միջոցով:

Կլենտէլում հանգուցեալ ուսուցչի տղան՝ Զարեհն, Գուլիզար քոյրը եւ փեսայ Վաղինակի հետ միասին Կիրակի, Յունուար 17-ին հոգեհանգստեան պաշտօն կատարեցին եկեղեցում, ապա հոգեճաշ տրուեց ճաշարանում, շատեր էին ներկայ գտնուել, գովասանքի, ափսոսանքի եւ յիշատակի խօսքեր ասուեցին:

Նա Բուրվարի գաւառի ծնունդ էր 1947-ին, բազմանդամ ընտանիքի զաւակ՝ երեք եղբայրներ, եօթ քոյրեր: Նա «Քուչէշ-Դաւթեան» հայոց ազգային միջնակարգ դպրոցի շրջանաւարտներից էր: Երիտասարդական եռանդուն տարիքում նուիրւում է ուսուցչութեան՝ փոխ տնօրէնի պաշտօնով «Իրան փիրուզ» եւ Հայոց Ազգ. «Նայիրի» տարրական դպրոցներում: Հանգստի կոչուելուց յետոյ եւս հրաւիրւում է շարունակելու պաշտօնը: Նա շուրջ յիսուն տարիներ որպէս երկրի կրթադաստիարակչական նախարարութեան պաշտօնեայ ծառայում է հայկական դպրոցներին հաւատարիմ մնալով իր կոչումին ու ասպարէզին՝ արժանանալով գնահատագրերի:

Երուանդի հետ թէ՛ բարեկամ եւ թէ՛ մտերիմ ընկերներ էինք, իր բնակարանը գտնւում էր մեր փողոցում: Խնայողութեամբ ու պարտքով կարողացել էր մի յարկաբաժին գնել: Ամուսնացել էր Սեդա Քեշիշեանի հետ, երկու տղայ զաւակների հայր էր, իր կողակից-Սեդան եւս ուսուցիչ էր՝ տարրականի դասատու:

Նրա ճամբան դէպի դպրոց անցնում էր մեր տան առջեւից տպաւորիչ լուրջ քայլուածքով, կոկիկ ու վայելուչ հագնուածքով, երբեք շտապանք չնկատեցի նրա քայլուածքում՝ օրինապահ ու ժամաճանաչ ուսուցչի վարք ու կեցուածք, որպէս պարտաճանաչ կրթական գործիչ:

Նա հաւաքների եւ խնճոյքների երեւելի հիւրն էր, իր հնչեղ քաղցր ձայնով թնդացնում էր «Ղարաբաղ» եւ այլ ազգային երգեր, Գէորգ Էմինի «Սասունցիների պարը», Պարոյր Սեւակի եւ Վահան Տէրեանի բանաստեղծութիւններից ասմունքելիս ներկաներին ոգեւորում եւ բուռն ծափերի էր արժանանում: Նա լաւ ճառախօս էր թէ՛ հայերէն եւ թէ՛ պարսկերէն լեզուներով, լաւապէս տիրապետում էր պարսկերէն լեզուին խօսքը համեմելով Հաֆէզի եւ Սաադիի քառեակներով:

Երուանդը ճանաչուած դէմք էր, լայն շրջանակ ունէր, բացի դա վեց ընկերներ էինք՝ Խէչօն, Շաւարշը, Շահէնը, Վարուժը, Անուշաւանը եւ Ռուբէնը, Վարուժը մահացաւ, մնացինք հինգ: Բոլորս էլ ազգային - հասարակական ծառայութեան մէջ էինք Թեմականին կից Կարիքաւորներին Օժանդակող մարմնի անդամ, եկեղեցու խորհուրդ, ամսուայ մէջ յաճախակի հանդիպում, կեր ու խումի սեղանի շուրջ առաւելաբար ազգային եւ հայրենիքին առնչւող հարցեր եւ մտքեր էին արծարծւում եւ շօշափւում: Նա գաղափարով ու մտածելակերպով ազատամիտ, ժողովրդասէր, ազգասէր եւ հայրենասէր էր:

Նա մի շրջան ընտրուեց համայնքի պատգամաւորական ժողովի անդամ: Նա բծախնդիր մարդ էր իր ներքին կեանքին եւ շրջապատին առնչւող կարգ ու կանոնների, մաքրութեան եւ յարաբերութիւնների կատարման շուրջ, ամէն ինչ ընտիրն էր սիրում կեանքի արժէքներին ի խնդիր: 2014 Թուականին Թեհրանում հանդիպեցի իրեն, առողջ եւ լաւ տրամադրութիւն ունէր, տղայի՝ Զարեհի հարսանիքին ներկայ եղայ, շատ էր ուրախացել, որ մեծ տղային ամուսնացնում է:

Մարդկային կեանքը ծովի հանգոյն անցաւոր է, մնայուն են աշխատանքով կատարուած գործն ու բարի անունը, հայրենիքի, ազգի եւ ժողովրդի համար ծառայութիւնն ու նուիրուածութիւնը: Աշխատանքով կեանքը թանկ է, աշխատանքով կեանքը գեղեցկանում է, աշխատանքով կեանքն ու երկիրը ծաղկում են: Ուսուցչութեամբ կեանքը թանկ է, ուսուցիչը սերունդ է դաստիարակում, լոյս ու գիտութեամբ է ճառագում մտքերն ու հոգիները, առաքինութեան եւ սիրոյ գործիչ է: Մեր ժողովրդի մօտ ուսուցիչը յատուկ տեղ ու դիրք ունի, պատուի ու մեծարանքի է արժանանում:

Մեր Երուանդը մէկն եղաւ այն նուիրեալ կրթական ազգ.-հասարակական մշակներից, որ իր կեանքի երկար տարիները դրեց այդ ճանապարհին: Նա միշտ մնաց ուսուցիչ եւ ուսուցչի վաստակով կեանքին հրաժեշտ տուեց:

Սիրելի՛ Երուանդ, դու քո ծառայութեամբ հայ դպրոցին արժանիօրէն կեանքդ իմաստաւորեցիր՝ անմոռանալի աւանդ թողնելով մեր համայնքի պատմութեան մէջ, որը արդարացիօրէն կը յիշատակուի պահելով յիշատակդ վառ ու պայծառ:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

# ԵՐԳՉՈՒՀԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ՆՈՒԻՐԵԱԼ ՍԻԼՎԱ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ



Սիլվա Ջիլինկիրեան, որ ծանօթ էր իր հայկական ժողովրդական ու միջազգային երգերու ուրոյն մեկնաբանութեամբ՝ իր մահկանացուն կնքեց անցեալ շաբաթ Լոս Անճելըսի մէջ յետ կարճատեւ հիւանդութեան:

Հասակ առած էր Լիբանանի մէջ՝ մշակոյթ ապրող եւ քաջալերող ընտանիքի մը մէջ: Անցած էր արուեստագէտի մը վերապահուած բոլոր հանգրուաններէն եւ գտած իր մեկնաբանութեան իւրայատուկ ոճը: Ձայնամարզութեան եւ երաժշտական նախնական կրթութիւնը ստացած էր Լիբանանի Ազգային Երաժշտանոցին մէջ եւ ապա Միացեալ Նահանգներ: Հետեւած էր թատրոնի եւ պարարուեստի դասընթացքներու Քալիֆորնիոյ Պետական Համալսարանին մէջ:

Ելոյթներ ունեցած էր ուսանողական տարիներէն: Սիլվան հանդէս եկած էր Լիբանանի, Սուրիոյ, Ֆրանսայի, Աւստրալիայի եւ Ամերիկայի տարբեր քաղաքներուն մէջ: Իր բազմալեզու էսդրատային ու ժողովրդական երգերը ներկայացուած են շարք մը խտասալիկներով:

Սիլվայի համար երաժշտութիւնը իր կեանքն էր: Մարդկային զգացումները, տրամադրութիւնները, ինչպէս նաեւ կեանքն ու բնութիւնը կը կենդանանային իր մեկնաբանութեան հմայիչ արտայայտութիւններով, ինչպէս իր ելոյթներն ու խտասալիկները կը վկայեն:

Գրող եւ բանաստեղծ Պէպօ Սիմոնեանը Սիլվայի երգարուեստը այսպէս բնութագրած էր.- «Խօսք, երաժշտութիւն եւ երգային մեկնաբանութիւն հաւասարազօր կշռոյթով կը յատկանշուին եւ ունկնդիրը կ՛առնեն իրենց թախծօրոր թաւալումին մէջ: Քնարական թախիծով երգուած երգերը վայելք են»:

Անսակարկ սիրով, գուրգուրանքով ու անսահման բարութեամբ ապրեցաւ իր կեանքը, բայց մնաց միշտ քաջ ու տոկուն բոլոր մարտահրաւէրներուն դիմաց: Իր անհուն նուիրումով հասաւ բոլորին կարիքներուն՝ իր անմիջական ընտանիքէն սկսեալ մինչեւ գաղութի շատ մը մշակութային ու ընկերային պէտքերուն, բայց մանաւանդ երիտասարդութեան ու մատղաշ սերունդին:

Ինչպէս իր «Առաջին Սէր» խտասալիկին մէջ տեղ գտած Աւետիք Իսահակեանի բանաստեղծութեան վրայ յօրինուած «Ժայռի Նման» երգին մէջ Սիլվան ապրումով կըսէր՝ «Կենսական ծովի հույզերի միջին / Ես ժայռի նման կանգնած եմ ամուր»: Իր ժայռանման հաւատքով, լաւատեսութեամբ ու առատաձեռնութեամբ ամէնուն բաշխեց ինչ որ կեանքը պարգեւած էր իրեն:

«Յաւիտենական յիշատակն արդարոցէ օրհնութեամբ եղիցի»: Որքան այս հնաւանդ խօսքերը պատշաճ են Սիլվային:

## ՄԱՀ ՍԻԼՎԱ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ

Ցաւով իմացանք մահը շնորհալի երգչուհի ՍԻԼՎԱ ՋԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ որ պատահած է Ուրբաթ, 22 Յունուար, 2016ին, կարճատեւ հիւանդութենէ մը ետք: Ս. Ջիլինկիրեան ծանօթ էր հայկական, արաբական եւ եւրոպական ժողովրդային երգերու իւրայատուկ մեկնաբանութեամբ:

*****

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՍԻԼՎԱ ՋԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ անակնկալ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան Վարչութիւնն ու անդամները իրենց խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ համայն հարազատներուն:

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱԶԱՏՈՒՀԻ ԿԻՒՏԷՇԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Տիրան եւ Մարգրիտ Ճերէճեան իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար Յարութ եւ Յակոբ Կիւտէշեան եղբայրներուն:

Առ այդ փոխան ծաղկեպսակի $100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿ ՀԱՃԻՆԵԱՆԻ մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները եղան «Մասիս»ին

Տէր եւ Տիկ. Սեդրակ եւ Ալին Աճեմեան $100
Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ծովիկ Քէօրողլեան $100
Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պեքարեան $100
Տէր եւ Տիկ. Մկրտիչ եւ Էլէն Փօշողլեան $100
Տէր եւ Տիկ. Յարութ Աճեմեան $100
Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Պերճուհի Ճինպաշեան $50
Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Քնար Պօղարեան $50
Տիկ. Սոնա Յովնան $40

## ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ ԱՊՐՈՂ

*Շարունակուած էջ 13-էն*

*թեան թատերաբեմից, ապա գոյատեւել են նախ եւ առաջ իրենց լեզուի շնորհիւ: Վառ մի օրինակ է հրէան... Ասորիները նոյնպէս այսօր ցրուած են աշխարհով մէկ՝ Իրաքում, ԱՄՆ-ում, Սիրիայում, Շուէդիայում, Գերմանիայում, Յորդանանում, Ռուսաստանում, Իրանում, Աւստրալիայում, Լիբանանում, Թուրքիայում, Հայաստանում: Նրանք, ինչպէս եւ հրէաները, շուրջ 2 հազար տարի զրկուած են իրենց հայրենիքից: Սակայն իրենց ծննդավայրի լեզուին զուգահեռ՝ պահպանում են իրենց մայրենի լեզուն՝ ասորերէնը, իսկ 1840-ականներին Ուրմիայի շրջանի բարբառի հիման վրայ ստեղծել են իրենց գրական լեզուն: Ունեն սեփական գիրը, հրատարակում են թերթեր, գրքեր: Գործում են դպրոցներ, փոքր համայնք ունեցող բնակավայրերի դպրոցներում նրանց համար յատկացուած են ասորերէնի դասաժամեր: Ասորերէնը կենդանի լեզու է. ասորիները այն պահպանում են իրենց համայնքներում, եւ ոչ ինքնանպատակ, այլ թերեւս հաւատով, որ մի օր վերադարձնելու են իրենց հայրենիքը... Յիշում եմ, թէ մի ասորուհի իրենց տան ամենաապահով վայրից ինչպիսի երկիւղածութեամբ դուրս բերեց ինձ համար անծանօթ լեզուի երիցս անծանօթ տառերի շարադրութեամբ զարդարուն գիրքը... Երրորդեմ, որ ազգի գոյատեւումի առաջին երաշխիքը նրա լեզուն է: Պետութիւնից զրկուած ազգերի օրինակներ յիշելով՝ փորձեցի կասկածամիտներին ցոյց տալ, որ առանց պետութեան ու հայրենիքի էլ կարելի է լեզուն պահպանել, որ քանի դեռ լեզուն կայ, կայ նաեւ հաւանականութիւնը կազմակերպուելու եւ պետութիւն ստեղծելու, ինչպէս հրէաների պարագայում եղաւ: Մինչդեռ մենք եւ պետութիւն ունենք, եւ առ այժմ լեզուն գործածողը, ում անհրաժեշտ է ամէն միջոցով խրախուսել չկորցնել ունեցածը. մենք դեռ վերադարձնելու հայրենիք ունենք... Այո, մենք շատ աւելի շահեկան դիրքում ենք, շատ ու շատ աւելի...*

*Հայերէնը անկասկած կենդանի ու կենսունակ լեզու է՝ իր երկու գրական ճիւղերով, որոնցից մէկին բախտ վիճակուեց չկտրուել իր բնաշխարհից եւ զարգանալ որպէս պետական լեզու: Սակայն արեւմտահայերէնի վտանգուած լինելու ահազանգերն ու կոչնակները այս ենթապատկերում անհիմն են: Միաւորուած ազգերի կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի կազմակերպութիւնը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն, արեւմտահայերէնը ընդգրկել է «Աշխարհի վտանգուած լեզուների քարտէզագիրք»ում՝ «հաստատապէս վտանգուած» կարգավիճակով: Վիճակագրութիւնը հիմնուած է նախ եւ առաջ լեզուի բանաւոր օգտագործման տուեալների վրայ: Այո, Սփիւռքում հետզհետէ նուազում է արեւմտահայերէն խօսողների ու կարդացողների թիւը, եւ դրա պատճառ-հետեւանքը միայն առարկայական հանգամանքները չեն: Ճիշտ է, ընթերցողների թուի նուազումը հանգեցնում է թերթերի փակման, ինչպէս Փարիզի «Յառաջ»ը, կամ վարչական գործառնութիւններում առաւելապէս անցում է նկատւում երկրորդ լեզուին, նոր սերունդն այլեւս իր նախնիների լեզուն գործածելու կարիք չի զգում... Անշուշտ, սրանք լուրջ մտահոգութիւններ են: Սակայն կան եւ ենթակայական պատճառներ, որոնք կախուած են մեզանից եւ նախ եւ առաջ մեր պետութիւնից: ՀՀ ԳԱԱ Հր. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի տնօրէնը յայտարարում է, որ ինչպէս արեւելահայերէնը, այնպէս էլ արեւմտահայերէնը Հայաստանի Հանրապետութիւնում ունի պետական լեզուի կարգավիճակ: Սակայն ակնյայտ է, որ այն գործնականում չունի այդ կարգավիճակը, խորհրդային մի քանի տասնամեակների ընթացքում առաջացած պատնէշն էլ դեռ լիովին չի փլուզուել, եւ անգամ մինչ օրս նրա հանդէպ համարժէք հոգածութիւնը չկայ՝ չնայած, որ Խ. Աբովեանի անուան մանկավարժական համալսարանում, գիտութիւնների ակադեմիայի լեզուի, պատմութեան եւ գրականութեան ինստիտուտներում բացուել եւ գործում են Սփիւռքի հարցերով եւ գրական երկու ճիւղերի կանոնակարգման եւ բառամթերքի հարստաց-ման խնդիրներով զբաղուող բաժիններ: Խ. Աբովեանի անուան մանկավարժական համալսարանի Սփիւռքի բաժինը կազմակերպում է Սփիւռքի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Մնում է կարճ ժամանակում համոզուել, թէ իսկապէս արդիւնաւէտ եւ նպատակայարմար են այդ դասընթացները: Ինչեւէ, այս ուղղութեամբ ցանկացած գործունէութիւն խրախուսի եւ աջակցութեան է արժանի, եւ գուցէ այս ամէնի արդիւնքում ի վերջոյ սաստուեն նրանք, ովքեր ենթակայական անթաքոյց վերաբերմունքով երբեմն յայտարարում են, թէ արեւմտահայերէնը կանոնական լեզու չէ, թէ լեզուի համար նա բաւականաչափ համակարգուած չէ, մանաւանդ թէ ճակատագրի բերումով եւ բնական ընթացքով դատապարտուած է մահուան... Ժամանակին Գ. Ջահուկեանը յայտարարում էր, թէ լեզուական հարցերով պէտք է զբաղուի միայն Հայաստանը, որովհետեւ Սփիւռքը չունի լեզուն հովանաւորող պետական հիմնարկ եւ գիտական հաստատութիւն...*

*Սակայն բոլոր ջանքերը մէկտեղելու ժամանակն է վաղուց: Այս առումով, երկու գրական լեզուների մերձեցման հարցերին նուիրուած գիտաժողովում, որ 2015 թուականի յուլիսի 29-ին համատեղ կազմակերպել էին Սփիւռքի նախարարութիւնը եւ ՀՀ ԳԱԱ Լեզուի ինստիտուտը, որոշուեց երեք աշխատանքային խմբերի միջոցով լուծել խնդիրները: Առաջին խումբը պէտք է ստեղծի արեւմտահայերէնի զարգացման ծրագիր՝ դպրոցներում դասարան բացել, դասագրքեր տպել, ուսուցիչներ պատրաստել: Երկրորդը զբաղուելու է երկու ճիւղերի մերձեցման հարցերով՝ բառամթերքի որդեգրում, լեզուների հարստացում, օտարաբանութիւններից մաքրում: Երրորդ խմբին յանձնարարւում է զբաղուել ուղղագրութեան խնդիրներով: Այդ խմբերում պիտի աշխատեն մասնագէտներ նաեւ Սփիւռքից: Անշուշտ, հարկ է, որ աշխատանքները չսահմանափակուեն միայն որոշումներով:*

*(Շարունակելի)*


40

A.G.B.U. MANOOGIAN-DEMIRDJIAN SCHOOL
&
PARENT-TEACHER ORGANIZATION

*Cordially invite you to the School's*

*Fortieth Anniversary*
*Annual Gala*

*- Under the Patronage of -*
A.G.B.U. CENTRAL BOARD OF DIRECTORS

*- Honoring -*
MR. SINAN SINANIAN
A.G.B.U. Manoogian-Demirdjian School, Board Chairman

**Saturday, February 27, 2016**
Cocktails 7:00 PM / Dinner 8:00 PM

**The Beverly Hilton - Beverly Hills**
9876 Wilshire Boulevard, Beverly Hills, California 90210

$250 Per Person